

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Ողջո՛յն հայ ժողովուրդին Տեր Չօրի ուխտավայրեն.....	269
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	272
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ (Turning to God).....	276
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի (3.16-26).....	286
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ — Բարսեղ Կանաչեան (Կենսագրական ակնարկ).....	299
ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին.....	302
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան նորարարութիւնը.....	309
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	324
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	325
ՏՕՆԱԿԱՆ	
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Մայիս 28-ն հրաւեր յանձնառութեան՝ ի խնդիր հզօր հայութեան ու Հայաստանի.....	340
ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ	343
ՀԱՅ ԴԱՏ	351
ՄԻՈՒՆՕՐՅՆԷՔ	352

ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻ

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — Նոր Սփիւռք նոր հայութեան ու նոր Հայաստանին համար	356
Յ. ՊԱԼԵԱՆ — «Սփիւռքի Տարի», ազգային մտածողութիւն, հայրենիք, մեր ներկան եւ լինելութիւն	359
ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒՄ	364
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	366
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	385
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ	388
Հ.Ե.Հ.Ո.Ս.	390
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	391
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	398



ՄԻՒՌՆՈՐՀՆԷՐ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՁԻՆ ՄԷՐ


ՋԵՌԱՄԲ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՈՒՐԲԱԹ, 1 ՅՈՒԼԻՍ 2022





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՄԱԿԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԱ. ՏԱՐԻ 2022

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԹԻԷ 5-6

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏԵՐ ԶՕՐԻ ՈՒԽՏԱՎԱՅՐԷՆ*

Տեր Զօրի համազգային ուխտավայրեն, Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնեական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները:

Տեր Զօր... կա՞յ իր երակներուն մէջ հայու արիւն ունեցող հայ մը աշխարհի տարածքին, որ չի գիտեր թէ Տեր Զօրը վայր ըլլալէ անդին՝ հոմանիշ է Հայոց Ցեղասպանութեան: Արդարեւ, կարելի չէ ամբողջական ճանաչումը ունենալ հայոց ժամանակակից պատմութեան եւ յատկապէս Ցեղասպանութեան, առանց Տեր Զօրին, որ դարձաւ հազարաւոր հայերու մահուան կարաւանին վերջին կայանը:

Երկրորդ անգամ ցեղասպանութեան ենթարկուած Տեր Զօր եկած էմ տերգօրացեալ, սակայն յարութիւն առած մեր ժողովուրդի զաւակ-

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին՝ արտասանուած Տեր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցոյ եւ յուշահամալիրին աւերակներուն վրայ, 25 Մայիս 2022-ին:

ներուն հաւատարմութիւնը վերանորոգելու մեր նահատակներու յաւերժախօս պատգամին ու արդար դատին:

Տէր Չօր եկած եմ մեր ժողովուրդին երախտագիտութիւնը յայտնելու Սուրիոյ ազնիւ ժողովուրդին ու պետութեան, որոնք իրենց հայրենիքին մէջ ընդունեցին ցեղասպանի արիւնոտ սուրէն ճողոպրած մեր ժողովուրդի զաւակները՝ իրենց հայրենիքը, հացն ու ջուրը կիսելով անոնց հետ եւ իրենց զօրակցութիւնը յայտնելով մեր ժողովուրդի պայքարին:

Տէր Չօր եկած եմ մեր բարձր գնահատանքը յայտնելու բոլոր այն պետութիւններուն, կառավարութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք պաշտօնապէս ճանչցան Հայոց Ցեղասպանութիւնը՝ կանգնելով հայ ժողովուրդի արդար դատի կողքին:

Տէր Չօր եկած եմ աշխարհին ըսելու, որ կարելի է Տէր Չօրի Նահատակաց ուխտավայրը որպէս քարտէլ իրականութիւն քանդել, սակայն կարելի չէ Տէր Չօրի խորհուրդն ու ոգին քանդել մեր ժողովուրդի կեանքէն ներս: Արդարեւ, Տէր Չօրը մեր հաւաքական ժողովուրդի յիշողութեան մէջ արմատացած է. ան հոմանիշ է Ցեղասպանութեան, միաժամանակ՝ յարութեան. մահուան, միաժամանակ՝ կեանքի: Հազարաւոր հայեր անցան Տէր Չօրէն, ոմանք ինկան Տէր Չօրի աւազներուն վրայ, ոմանք խեղթամահ եղան Եփրատ գետին մէջ. իսկ վերապրողները աշխարհի տարածքին շարունակեցին իրենց պահանջատիրական պայքարը՝ ի խնդիր մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու վերատիրացման:

Տէր Չօրը **«Համազգային Ուխտատեղի»** հռչակեցինք տարիներ առաջ, եւ արդարօրէն, անիկա կը մնայ իւրաքանչիւր հայու եւ ամբողջ հայութեան ազգային ուխտատեղին, մեր դատին, մեր հաւատքին, վճռակամութեան, պայքարին ու տեսլականին ներշնչարանը:

Այսօր, քարուքանդ վիճակի մէջ կը գտնուի մեր ժողովուրդին կողմէ շինուած այս ուխտատեղին, որովհետեւ նոյն ցեղասպանն է անցած այս վայրէն եւ դարձեալ ցեղասպանութեան ենթարկած մեր ժողովուրդի զաւակներուն հաւատքին ու կամքին արտայայտութիւնը եղող այս կառոյցը: Սակայն, մենք չենք յուսահատած. մենք վճռած ենք վերաշինել Տէր Չօրի ուխտատեղին: Նայեցէք մեր ժողովուրդի պատմութեան. ուրիշներ քանդած են, մենք՝ վերաշինած. ուրիշներ յուսահատութիւն ցանած են մեր կեանքէն ներս, սակայն մենք յոյս ներշնչած

ենք մեր ժողովուրդին. ուրիշներ մահով շրջապատած են մեզ, մենք կեանքին կառչած ենք:

Այսօր եկած ենք Տեր Չօր Պեյրութեն, Դամասկոսեն, Հալեպեն, Քեսապեն, Լաթաքիայեն, Գամիշլիեն եւ Սուրիոյ բոլոր շրջաններեն. Մեզի հետ եկած են հոգեւոր հայրեր, պետական երեսփոխաններ, Ազգային Իշխանութեան անդամներ, համայնքային պատասխանատուներ եւ մեր ժողովուրդի զաւակները:

Եկած ենք յանուն մեր ժողովուրդին եւ իւրաքանչիւր հայու՝ մեր հաւատարմութեան ու յանձնառութեան ուխտը վերանորոգելու:

Եկած ենք Տեր Չօր մեր վճռակամութիւնը վերահաստատելու՝ թէ համազգային ճիգով մենք պիտի վերաշինենք Տեր Չօրը:


Եկած ենք Տեր Չօր մեր համազգային պայքարը շարունակելու, մեր կամքը ամրացնելու՝ ի իսկիր Յեղասպանութեան ճանաչման եւ մեր իրաւունքներու հատուցման:

Փառք ու պատիւ Տեր Չօրի գողգոթայեն անցած եւ յարութիւն առած մեր ժողովուրդին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՐԱՓՈՒ ՅԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Խոբէն Եպս. Տողրամաճեանին,
Արքութեան տիտղոս ստանալու առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ, ձեր թեմի հոգեւորական դասը, Ազգ. Իշխանութիւնն ու ձեր հոգեւոր խնամքին յանձնուած Յունաստանի թեմի մեր ժողովուրդի զաւակները:

Մօտէն հետեւած ենք վերջին շուրջ տասը տարիներու ձեր գործունէութեան, որպէս Առաջնորդ Յունաստանի թեմին: Քաջատեղեակ ենք այն դժուարութիւններուն, զորս կը դիմագրաւէ ձեր թեմը, յատկապէս՝ վերջին քանի մը տարիներուն երկրէն ներս տիրող տնտեսական տագնապին հետեւանքով: Այդուհանդերձ, սակայն, ձեր գլխաւորութեամբ թեմի Ազգ. Իշխանութիւնը իր գերագոյն ճիգն ու կարելին կը կատարէ թեմական ու համայնքային կառոյցներու կարիքներուն օգտակար ըլլալու համար:

Արդ, առ ի գնահատութիւն անցնող տարիներու ձեր նուիրեալ ծառայութեան, եւ որպէս քաջալերանք ձեր կեանքին առջեւ բացուող նորանոր ծառայութեանց, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք **ԱՐՔՈՒԹԵԱՆ** պատիւ եւ տիտղոս:

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

Վստահ ենք որ ձեզի տրուած այս տիտղոսը պիտի մղէ ձեզ վերանորոգ հաւատքով ու նուիրումով կատարելու ձեզի վստահուած առաքելութիւնը՝ մեր Սուրբ Աթոռի ծառայութեան դաշտէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի պարգեւէ քաջառողջութիւն եւ Իր հովանին անպակաս ընէ ձեր, ձեր գործակիցներուն եւ Յունաստանի թեմի մեր սիրելի զաւակներուն վրայէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դռնն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 11-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԸ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեանին, վարդապետական Լանջախաչ կրելու իրաւունք ստանալուն առթիւ)

Ի գնահատութիւն հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս որպէս Կիլիկեան Ուխտի Միաբան ձեր մատուցած ծառայութիւններուն՝ թէ՛ Կաթողիկոսարանի մէջ ձեր ստանձնած պարտականութիւններուն եւ թէ՛ թեմերէ ներս ձեզի վստահուած պատասխանատուութեանց ճամբով, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք **ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ** կրելու իրաւունք:

Վստահ ենք որ Աստուծոյ օրհնութեամբ պիտի շարունակէք ձեր նուիրեալ գործունէութիւնը՝ ի սպաս մեր սուրբ եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ մեր հաւատացեալ ժողովուրդին:

Կ'աղօթենք որ Ամենաբարին Աստուած ֆիզիքապէս ու հոգեպէս զօրացնէ ձեզ՝ Իր շնորհաց հեղումովը ձեր անձին վրայ, որպէսզի վերանորոգ խանդով շարունակէք ձեր հոգեւոր առաքելութիւնը, եւ կարենաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի բառերով ըսել «*Ծառայք անպիտանք եմք, զոր պարտեաքն առնել՝ արարաք*» (Ղկ 17.10):

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 27-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Տիգրան Մանսուրեանին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Խոր գոհունակութեամբ կարդացինք Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի վկայութիւնը՝ երաժշտական մարզէն ներս ձեր բերած ներդրումին մասին: Նաեւ ուրախութեամբ իմացանք, որ այս տարի կը նշուի ձեր ծննդեան 75-ամեակը:

Արդարեւ, շուրջ քառասունըհինգ տարիներ ձեր երաժշտական ինքնուրոյն վաստակով ու յօրինումներով դուք ոչ միայն առաւել եւս ճոխացուցիք ու հարստացուցիք մեր մշակոյթի այս բերքառատ դաշտը, այլ մանաւանդ համաշխարհային բեմերէն հայ երգին ու երաժշտութեան վայելքը հրամցուցիք օտար երաժշտասեր հասարակութեան՝ Եւրոպայէն մինչեւ Ամերիկեան ցամաքամասերը: Դուք նաեւ հետամուտ եղաք ձեր երաժշտական կարողութիւնները ի սպաս դնելու մեր նորահաս սերունդին եւ պատրաստելու զանոնք, որ ստանձնեն մեր ժողովուրդի երաժշտական անմար ջահը:

Առ ի գնահատանք երկար տարիներու ձեր մշակութանուէր անխոնջ գործունէութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր հովանիին ներքեւ պահէ ձեզ, որպէսզի կարենաք նոյն խանդով ու աշխոյժով ձեր երաժշտական վաստակը ի սպաս դնել մեր մշակոյթին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 30-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼ Ա.*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Զարեհ Քինյ. Շաքարեանին, Քահանայական լանջախաչ
կրելու արտօնություն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ

կրելու արտօնություն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու ձեր քահանայական ծառայութիւնը Հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ ձեզ, պարգեւելով ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԳ.*



Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ա Կ Ա Ն

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթ, 2 Մայիս 2020

Համաճարակը հակասական կերպերով իր անդրադարձը ունեցաւ մարդոց առօրեայ կեանքին վրայ: Թէեւ, ան պարտադրեց մարդիկը, որ մեկուսանան եւ յարգեն ընկերային եւ ֆիզիքական հեռավորութիւնը, բայց նաեւ մարդոց մօտ ընտանեկան եւ ընկերային պատկանելիութեան զգացումը խորացուց:

Պատկանելիութեան զգացումը եւ փոխադարձ յարգանքը էական նշանակութիւն ունին արեւելեան մշակոյթներուն մէջ: Հարեւանութեամբ իրարու մօտ ապրող մարդիկ, քոյրեր եւ եղբայրներ կը նկատուին, եւ որպէս այդպիսին կը վարուին իրարու հետ: Անոնք մօտիկ ծանօթներ են, հոգատար՝ իրարու նկատմամբ եւ կը բաժնեն իրենց ցաւերը, ուրախութիւնը եւ նոյնիսկ՝ ճաշերը: Արեւելեան մշակոյթին պատկանող այս յատկանշական երեւոյթը ակնառու է Աստուածաշունչին մէջ:

Արեւմտեան մշակոյթին մէջ, սակայն, մարդոց առանձնութեամբ տիրապետուած ապրելակերպին եւ ինքնակեդրոն նկարագրին պատճառով, ալ ընդհանրապէս դրացիներու միջեւ հեռավորութիւն կը պահուի: Նիւ Շորքի մէջ, իմ յարկիս վրայ դրացի մը ունէի. շուրջ երեք տարիներու ընթացքին, զիրար չէինք տեսած: Օր մը, պատահաբար, միեւնոյն ատեն մեր դռները բացինք, եւ վերջապէս բարեւ մը փոխանակեցինք: Ըսի իրեն, որ դժբախտաբար առիթը չէինք ունեցած աւելի կանուխ հանդիպելու եւ թէ յաջորդ շաբաթ արդէն Լիբանան պիտի վերադառնամ: Պատասխանեց ըսելով որ պէտք չունիմ անհանգստանալու, որովհետեւ ինք ալ երկու օրէն իր ծննդավայրը՝ Սան Ֆրանսիսքօ պիտի վերադառնայ: Պիտի զարմանայի եթէ երբեք նման բան պատահէր Միջին Արեւելքի մէջ:

Մարդոց միջեւ փոխադարձ սիրով ու յարգանքով շողախուսած փոխյարաբերութիւնը Քրիստոսի կողմէ յատուկ ուշադրութեան արժանացած է:

Բարի Մամարացիի առակը, պատմութիւնն է անհատի մը, որ ողորմածութիւն եւ հոգածութիւն ցոյց կու տայ իր նմանը եղող կարիքաւորին (Ղկ 10.29–37): Ուրիշներու հանդէպ հոգատարութեան կարեւորութիւնը ի յայտ կու գայ նաեւ՝ սիրէ ընկերդ քու անձիդ պէս Քրիստոսի պատուէրին ընդմէջէն (Մր 12.31): Աստուծոյ կարեկցութիւնը հանդէպ մեղաւորին, հարստահարուածին եւ հալածուածին արտայայտուած է Քրիստոսի փրկող, բժշկող ու ազատագրող արարքներուն ճամբով: Քրիստոսի հետեւորդները նոյնպէս կոչուած են իրենց կեանքերուն մէջ արտացոլացնելու այն սէրը, զոր Աստուած ունի բոլոր մարդոց հանդէպ, անխտիր: Հոգատար վերաբերմունք մը, որ կը սկսի մօտիկ անձերէն:

Աստուածաշնչական բարոյագիտութեան համաձայն, դրացին կամ ընկերը այն չէ, որ աշխարհագրականօրէն մեզի մօտիկ կ'ապրի, այլ ան՝ որ մեր օգնութեան եւ կարեկցութեան կարիքը ունի: Այս սկզբունքին կը հաւատան նաեւ թէ՛ հրէութեան եւ թէ՛ իսլամութեան հետեւորդները: Այսօր, բոլորս ալ դրացիներ դարձած ենք «համաշխարհային գիւղին» մէջ, եւ ըստ այնմ պէտք է կազմակերպենք մեր յարաբերութիւնները: Իրաւամբ, փոխադարձ հոգատարութիւնն ու յարգանքը, մեր մտահոգութիւններն ու ուրախութիւնները մեզի մօտիկ անձի մը հետ բաժնելը եւ փոխադարձ կարիքներու հասնիլը՝ աւելի մարդկային կը դարձնեն եւ կարողութեամբ ու զօրութեամբ կ'օժտեն մեզ, որպէսզի միասնաբար կարենանք յաղթահարել մեր հասարակաց խնդիրները:

Իր երկրաւոր կեանքի վճռական մէկ պահուն, Քրիստոս հարցուց Պետրոսին, եթէ ճշմարտապէս կը սիրէ զինք (ՅՎ 21.15–21): Մեր Տէրը նոյն հարցումը կ'ուղղէ իր հետեւորդներուն: Քրիստոսը սիրելը ունի իր պայմանները եւ հետեւանքները: Ան կ'ենթադրէ սիրել ուրիշը, իր նմանը ընդունելի այնպէս ինչպէս որ է, նոյնիսկ՝ թշնամին (Ղկ 6.27): Առաքեալը մեզի կը դիմէ, ըսելով. «Ընդունեցէ՛ք զիրար, ինչպէս որ Քրիստոս ալ ձեզ ընդունեց» (Հռ 15.7): Պատրա՞ստ ենք...:

Կիրակի, 3 Մայիս 2020

Ազգեր ձախողեցան միասնաբար պայքարելու մարդկային կեանքին սպառնացող քորոնա վիրուսին դէմ, ինչպէս նաեւ կտրուկ միջոցներու դիմելով՝ կասեցնելու կենսոլորտին սպառնացող վտանգը, եւ այդ պատճառով մարդկութեան գոյութիւնը եւ ապագան դարձան անորոշ, եւ արարչութիւնը, մեր բնակավայրը, երբեք չեն հասնելով համատարած քայքայումի սահմանները:

Պօղոս առաքեալ կը յիշեցնէ մեզի, թէ երբ մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամները կը ցաւին (Ա.Կր 12.26): Քովիտ-19 համաճարակը ցաւօք

էականօրէն մեզ գիտակից դարձուց այս ճշմարտութեան: Շատ կարճ ժամանակի մը ընթացքին, Չինաստանի մէջ փոքրիկ վիրուս մը համաշխարհային համաճարակի վերածուեցաւ, սպառնալով բոլոր ազգերու մարդոց կեանքին, միաժամանակ անոնց մէջ արթնցնելով այն գիտակցութիւնը, թէ իրենք անբաժան մասը կը կազմեն մէկ մարդկութեան, միասին տառապելով ու բաժնելով իրենց հասարակաց ճակատագիրը:

Համաճարակը նաեւ խորացուց կապուածութիւնը մարդոց միջեւ, շեշտելով հասարակաց գիծերու ու տուեալներու ճանաչողութիւնը, ինչպէս նաեւ՝ մեր տարբերութիւնները, տեղական շահերը եւ անձնական առաջնահերթութիւնները շրջանցելու հրամայականը: Ազգեր պէտք է ընդհանրականին վրայ կեդրոնացնեն իրենց առաջարկներն ու աշխատանքը: Եւ քանի որ քորոնա վիրուսը համաշխարհային հարց մըն է, հարկ է համաշխարհային մաշտապով դիմագրաւել զայն: Համաշխարհայնացած ներկայ աշխարհի անպարիսպ ընկերութիւններու մէջ, չենք կրնար զմեզ պաշտպանել, եթէ սահմանափակուինք մեր մշակութային, ցեղային եւ կրօնական շրջագծին մէջ: Ազգայնականութիւնը, որպէս ինքնապաշտպանութեան էական ազդակ, կը դառնայ զօրութեան եւ կենսունակութեան աղբիւր այն ատեն միայն, երբ չի վերածուիր բացարձակ ու ազգայնամոլ գաղափարախօսութեան, որ ծնունդ կու տայ այլամերժութեան, կայսերապաշտութեան, ցեղապաշտութեան եւ անհանդուրժողութեան:

Աստուած մեզ իրարմէ տարբեր ստեղծած է: Բազմազանութիւնը մարդկութեան հարստութիւնն է: Պէտք է պահպանենք, պաշտպանենք եւ ընդլայնենք բազմազանութիւնը իբրեւ անհրաժեշտ բաղկացուցիչ մեր ինքնըմբռնումին եւ ինքնահաստատումին: Սակայն, Աստուած կ' ուզէ որ միասին ապրինք նոյն տան մէջ, որ իր կողմէ ստեղծուած ու շնորհուած է մեզի: Ուստի, մենք մէկ տան բնակիչներ ենք, կը պատկանինք մէկ ընտանիքի, մէկ երկրաւոր ընկերութեան, եւ կոչուած ենք զօրացնելու եւ խորացնելու մեր աստուածատուր ընդհանրութիւնները, որպէսզի մարդկային ընկերութիւնը միշտ մնայ հաստատ հիմերուն վրայ: Մէկ մարդկութեան տեսիլքը պարզապէս աստուածաբանական, փիլիսոփայական, ընկերաբանական եւ քաղաքական հասկացողութիւն մը կամ հեռանկար մը չէ, եւ ոչ ալ՝ վախճանական իրողութիւն մը: Ան հաստատ իրողութիւն մըն է, Աստուծոյ պարզեւը մարդկութեան, որ պէտք է գործնապէս արտայայտուի:

Oikos, որ յունարէնի մէջ տուն կամ ընտանիք կը նշանակէ, կարիքը ունի oikonomia-ի, այսինքն՝ տեսչութեան, կառավարման: Մէկ մարդկութիւն կ' ենթադրէ հասարակաց պատասխանատուութիւն, որ ճիշդ կառավարմամբ կ' արտայայտուի: Համաշխարհային ճիշդ ու հասարակաց կառավարման համակարգ մը հիմնելու համար, պետութիւններ պէտք է միասին գործեն՝ կա-

ուղեցելու ամբողջական ու համահունչ ընկերութիւն մը, որ հիմնուած ըլլայ համաշխարհային սկզբունքներու ու արժէքներու վրայ, եւ յառաջացնէ արդար, համամասնակից եւ հաւասար ընկերութիւններ՝ ընկերային, տնտեսական ու քաղաքական իմաստով:

Եթէ որպէս մէկ համաշխարհային ընկերութիւն միասին ըլլանք, այն ատեն միայն կրնանք կառուցել ապահով, խաղաղ եւ արդար աշխարհ մը. եթէ որպէս համաշխարհային մէկ ընտանիք միասին ըլլանք, այն ատեն միայն կրնանք ազդու լուծումներ գտնել մեր հասարակաց խնդիրներուն եւ յաղթահարել մեր հասարակաց տագնապները: Փոխանակ նեղ ազգային շահերէ եւ աշխարհաքաղաքական ռազմավարութիւններէ մղուած՝ իրար դէմ պատերազմներ հրահրելու, պէտք է միացեալ պատերազմ մը մղենք ընդդէմ հասարակաց թշնամիներու՝ համաճարակ, կենսոլորտային խնդիրներ, անարդարութիւն, ցեղապաշտութիւն, եւայլն, որոնք կը վտանգեն մարդկային կեանքն ու անոր տունը, տիեզերքը: Մենք պարտաւոր ենք Աստուծոյ կողմէ տրուած մեր տարբերութիւնները յարգել, եւ զիրար ընդունելու, եւ որպէս մէկ մարդկութիւն ապրելու աստուածային հրահանգին հնազանդիլ:

Միջ-եկեղեցական շարժումի «երէցներու» ժողովին, որ տեղի ունեցաւ իմ նախաձեռնութեամբ՝ Անթիլիասի Մայրավանքին մէջ, Յունուար 2020-ին, քննարկելու համար միջ-եկեղեցական օրակարգի շարժումի ապագան, խօսեցայ եկեղեցոյ միութեան եւ մարդկութեան միութեան ճշմարտամային կարելորութեան մասին, որ բոլոր ժամանակներու միջ-եկեղեցական օրակարգի գլխաւոր նիւթն է: Այնտեղ ըսի. «նման ամբողջական եւ համայնական տեսիլք մը, եկեղեցին մարդկային ընկերութեան եւ ընդհանրապէս ստեղծագործութեան հետ փոխգործակցութեան մէջ պիտի դնէ եւ պիտի կարենայ լուծումներ որոնել ներկայ ընկերային եւ կենսոլորտային մարտահրաւէրներուն»:

Երկուշաբթի, 4 Մայիս 2020

Իտալիոյ մէջ, համաճարակէն մեռնողներու թիւի արագ ընթաց աճին ի տես, Միլանոյի մէջ բժիշկ մը ողբագին կը յայտարարէ՝ «ես իմ մասնագիտութեան սահմաններուն մէջ առաւելագոյնն է որ կ'ընեմ. աւելին՝ չեմ կրնար»:

Մինչ կը խորհրդածէի մարդկային տկարութեան մասին, ինչպէս որ բացայայտուեցաւ ներկայ համաճարակի պարագային, յիշեցի Alexis Carrel-ի L'homme, cet Inconnu (1935, Paris) "Մարդը՝ այս Անծանօթը" գիրքը:

Ֆրանսացի վիրաբոյժ եւ կենսաբան Carrel (1873-1944), բժշկութեան մէջ Նոպելեան մրցանակ ստացած է 1912-ին: Իր կեանքի վերջին տարիներուն, ան աւելի հաւատացեալ դարձաւ, եւ ընդունեց Աստուծոյ գոյութիւնը ու հօգրի անմահութիւնը: Իր գրքին մէջ, ան կը վերլուծէ ամէն ինչ, որ ցարդ ծա-

նօթ է կամ՝ անծանօթ մարդկային մարմիննին մասին, եւ կ'եզրակացնէ, որ մարդ արարածը ինքնիրեն համար անծանօթ կը մնայ:

Carrelի այս բառերը գրելէն 85 տարիներ ետք, հակառակ բժշկագիտութեան մէջ արձանագրուած աննախընթաց զարգացումներուն, մարդը տակաւին ինքնիրեն համար կը մնայ անծանօթ: Անկասկած, մարդուն առնչուած եւ ցարդ անծանօթ մնացած մարդերուն գծով մարդաբանութեան եւ բժշկական գիտութիւններու ծիրէն ներս պիտի շարունակուին ուսումնասիրութիւններու, հետախուզութիւնները ու գերութիւններէն: Սակայն, պէտք է յիշենք, որ մարդկային բոլոր գիտութիւններէն վեր՝ աստուածային զօրութիւնն է, որ կանգուն կը պահէ, կը պաշտպանէ եւ կ'առաջնորդէ մարդ արարածը, եւ թէ բանականութենէն եւ ճանաչողութենէն անդին՝ մարդկային էակին մէջ տարածք մը կայ, որ միշտ անծանօթ պիտի մնայ: Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ մտնելով է միայն, որ մարդ կը ճանչնայ թէ՛ ինքզինք, թէ՛ իր տկարութիւնները եւ թէ իր անկատարութիւնները, նաեւ՝ իր գոյութեան հիմնական նպատակը: Քովիտ-19 համաճարակը անգամ մը եւս յիշեցուց մեզի, որ Աստուած է հիմքը մարդու ինքնաճանաչման եւ ինքնաիրագործման:

Երեւշաբթի, 5 Մայիս 2020

2008-ին, երիտասարդութեան ուղղած պատգամներէս մէկուն հետեւեալ խորագիրը ընտրած էի. «Հաւատքով Զսպանակուած կեանքի մը Հրամայականը»: Այսօր կը մտածէի այն վճռորոշ դերին մասին, որ **հաւատքը** կրնայ խաղալ մարդու կեանքին մէջ:

Քրիստոնէութիւնը ուսուցումներու եւ հաւատալիքներու խտացումը չէ: Անիկա Քրիստոսի մէջ եւ Քրիստոսով արտայայտուած կեանքի որակ է: Քրիստոնէութիւնը սոսկ վարդապետութեան, ծէսին եւ աւանդութիւններու հետ նոյնացնելը ճիշդ չէ. պէտք չէ շփոթել ձեւը էութեան հետ, արտաքինը՝ ներքինին հետ: «Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ»ը (ՅՀ 1.14) Յովհաննու Աւետարանին վկայութիւնը էութիւնն է քրիստոնէութեան եւ հիմքը՝ մեր հաւատքին:

Հաւատք կը նշանակէ ամբողջութեամբ կախեալ ըլլալ Աստուծմէ, եւ՝ հնազանդ Անոր: Հաւատքը խորք ու իմաստ կու տայ մեր կեանքին, կ'առաջնորդէ մեր մտածումներն ու գործերը եւ կ'ուղղէ մեր յարաբերութիւնները՝ Աստուծոյ, մեր նմանին, ընկերութեան, եւ նոյնիսկ՝ տիեզերքին հետ: Սկզբունքները, հրամայականներն ու արժէքները որոնք կ'արտայայտեն մեր հաւատքը եւ ուղղութիւն կու տան մեր կեանքին, որպէս քրիստոնէաներ, յստակօրէն պարզուած են Աստուածաշունչին մէջ: Հաւատքը զօրաւոր ուժ մըն է, նոյնիսկ եթէ ան մանանեխի հատիկի չափ ըլլայ, այն աստիճան, որ եթէ լե-

րան ըսենք՝ «հոսկէ հոն տեղափոխուէ, պիտի տեղափոխուի» (Մտ 17.20): Եթէ հաւատաս, պիտի փրկուիս (Հռ 10.9): Ա՛յս է Քրիստոսի պատգամը:

Քանի մը օրեր առաջ, պատգամիս մէջ, անդրադառնալով հաւատքի առանցքային կարեւորութեան, յիշեցի մեր ժողովուրդին ապրած փորձառութիւնը՝ թէ ինչպէս Աստուծոյ հանդէպ մեր հաւատքը զօրացուց մեր ժողովուրդը, որ վերապրեցաւ ու գոյատեւեց, հակառակ պատմութեան ընթացքին ենթարկուած ջարդերուն եւ ապրած դժուարութիւններուն: Մարդուն համար անկարելի է յաղթահարել տագնապներն ու մարտահրաւէրները՝ առանց հաւատքի զօրութեան:

Իր անկատար բնութեան պատճառով, մարդ արարածը միշտ հետամուտ եղած է փնտռել գերուժ մը՝ իր անձին պաշտպանութեան համար: Հաւատքի մասին կրօններ տարբեր ըմբռնումներ եւ մեկնաբանութիւններ ունին: Քրիստոնէութեան համար, Աստուած է աղբիւրը հաւատքին: Պատմութեան ընթացքին ան ինքզինք յայտնեց բազմաթիւ կերպերով եւ տարբեր ժամանակներու մէջ: Յիսուս Քրիստոս է Աստուծոյ ինքնայայտնութեան կատարեալ ու ամբողջական մարմնաւորումը: Ս. Օգոստինոսի արտայայտութիւնը, որ հաւատքը հասկացողութիւն կ'որոնէ (fides quaerens intellectum), մարդու բանականութեան ճամբով փորձ մըն է, կարելի եղած չափով, հասկնալու հաւատքին բնոյթն ու իմաստը: Հաւատքը կարողութիւնը կու տայ մեզի տեսանելիէն եւ ուղղակիէն անդին՝ յարաբերութեան մէջ մտնելու մեզմէ վեր եւ զօրաւոր էութեան հետ: Հաւատքի ճամբով կրնանք ճանչնալ Անձանօթը՝ այնքան որքան Ան ինքնայայտնութեան եւ ինքնահաղորդակցութեան ճամբով ինքզինք յայտնած է մեզի:

Քրիստոնեաներու համար, բաւարար չէ պարզապէս իրենց հաւատքին մասին ծանօթութիւն ունենալը. անոնք կոչուած են հաւատքը նկատելու իրենց կեանքին կորիզը, զայն դարձնելով իրենց կեանքին մղիչ ուժն ու իրենց խորհուրդներուն եւ գործերուն ուղղութիւն տուող սկզբունքը. այլ խօսքով՝ իրենց լինելութեան պատճառը: Աւելին, հաւատքը ինքզինք պէտք է արտայայտէ գործին միջոցաւ (Յկ 2.17): Հետեւաբար Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած քրիստոնեաներ պէտք է գիտնան, որ «մարդ իր գործերով կ'արդարանայ, եւ ո՛չ թէ միայն հաւատով» (Յկ 2.24): Կ'ըսուի, թէ հաւատալը ապրիլ է: Ես պիտի աւելցնեմ, որ ապրիլն ալ ինքնին հաւատալ է, այլապէս կեանքը կը դառնայ անիմաստ գոյութիւն: Ինչպէս առաքեալը կը հաստատէ. «Հաւատով է որ կ'ապրիմք» (Բ.Կր 5.7), որ կը նշանակէ Քրիստոս կ'ապրի մեր մէջ: Ա՛յս է հաւատալու ճշմարիտ ճամբան:

Հաւատքի վճռորոշ դերին փորձառութիւնը ապրած ըլլալով, առաքեալները Տիրոջ ըսին. «աւելցո՛ւր մեր հաւատքը» (Ղկ 17.5): Պօղոս առաքեալ հետեւեալը կը թելադրէ մեզի. «fidei gratia est, ut sciamus quod non habemus, sed quod habemus, non habemus, sed quod habemus» (Բ.Կր 13.5): Եկեղեցւոյ մէջ,

մենք ամէն օր կ'աղօթենք, ըսելով. «Ո՛վ Տէր, աւելցո՛ւր եւ զօրացուր մեր հաւատքը»: Կեանքի մէջ տազնապները կը յիշեցնեն մեզի հաւատքի առանցքային տեղն ու դերը. անոնք կ'ամրապնդեն ու կը բիւրեղացնեն մեր հաւատքը: Աստուծոյ հանդէպ հաւատքը կը զօրացնէ մեր կարողութիւնը, որպէսզի դիմագրաւենք մարտահրաւէրները եւ պատասխանատուութեամբ ու քաջութեամբ պայքարինք դժուարութիւններուն դէմ: Առանց հաւատքի, մարդկային կեանքը զուրկ է իմաստէ եւ նպատակէ:

Չորեքշաբթի, 6 Մայիս 2020

Այս առաւօտ հաւատացեալ մը զանգեց ինծի եւ հարց տուաւ, թէ արդեօք համաճարակը նշան մըն է որ վերջին դատաստանը մօտեցած է: Ըսի, որ այդ հարցումին պատասխանը այնքան ալ պարզ չէ: Աստուածաշունչի ուշադիր ընթերցումը, մարդը պիտի առաջնորդէ հասկնալու, որ Աստուծոյ մօտեցումը մարդուն նկատմամբ՝ որոշ իմաստով մանկավարժական եղած է: Հետեւելով մարդու ինքնագիտակցութեան կազմաւորման եւ պատմական փորձառութեան, Աստուած տարբեր ժամանակներուն եւ տարբեր կերպերով մարդը հրաւիրած է իր կեանքը ապրելու եւ իր աստուածատուր կոչումը կիրառելու՝ Աստուծոյ հանդէպ հաւատարմութեամբ եւ հնազանդութեամբ: Քրիստոսի մէջ, Աստուած ինքզինք իբրեւ սիրող եւ հոգատար հայր յայտնեց: Արդարեւ, համաճարակի նման տազնապներ մեզի կը յիշեցնեն Անառակ որդիին առակը (Ղկ 15.11-32):

Աստուածաշունչին համաձայն համայն մեռելներուն յարութիւնը պիտի կանխէ վերջին դատաստանը (Մղ 4.1, Գրծ 17.31, 24.15, Բ.Պտ 3.6-7, Յտ 11.18, 20.11-15, 21.8): Ապա, Աստուած բոլոր մարդկութիւնը պիտի դատէ եւ յաւիտենական կեանքի վճիռը տալ: Ասիկա պիտի պատահի Քրիստոսի երկրորդ գալուստին (Մտ 7.13-23, 25.31-36, Ղկ 13.23-28, տե՛ս նաեւ Եսայի, Դանիէլ եւ Յայտնութիւն): Սոփոնիա մարգարէն կ'ըսէ՝ «Տիրոջ օրը մօտ է» (Սփ 1.7), եւ կը շարունակէ նկարագրել զայն իբրեւ՝ «...բարկութեան օր, նեղութեան ու տառապանքի օր, կործանումի եւ աւերումի օր, խաւարի ու մէզի օր, ամպի ու մառախուղի օր» (1.15):

Վերջին դատաստանը բոլոր կրօններու ուսուցումներուն մաս կը կազմէ: Կրօնները վերջին դատաստանի մասին իրենց ըմբռնումը զարգացուցած են եւ զայն նկարագրած բազմազան պատկերներով: Հնագոյն հայկական մանրանկարներուն մէջ շատ կը հանդիպինք վերջին դատաստանը ներկայացնող պատկերներու:

Այս երեկոյ դիմատետրին վրայ տեսայ պատկեր մը, ուր Քրիստոս կու լայ՛ի տես մարդկային տառապանքին: Այս պատկերը կը յիշեցնէ մեզի, որ Աստուած մեր Հայրն է, ան մեզ կը սիրէ եւ կը մտահոգուի մեզմով: Այս էր

Քրիստոսի հիմնական առաքելութիւնը՝ երկնային հրաւէր մը ուղղուած Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդուն, գործօն մասնակցութիւն բերելու Աստուծոյ Արքայութեան հաստատումին մէջ: Քրիստոնեան պարտականութիւն ունի աշխատելու աշխարհի մը համար, ուր սէրը յաղթէ ատելութեան, բարին՝ չարին, արժէքը՝ չափին եւ ճշմարտութիւնը՝ կեղծիքին: Նման աշխարհ մը պիտի կառուցուի միայն այն ատեն, երբ մարդկութիւնը փոխադարձ սէրն ու գործակցութիւնը գերադասէ եսակեդրոնութենէն, խոնարհութիւնը՝ ամբարտաւանութենէն, համապարփակութիւնը՝ այլամերժումէն, հաշուետուութիւնը՝ անպատասխանատուութենէն եւ բազմազանութիւնը՝ միակողմանիութենէն: Այլապէս, ան պիտի ուղղուի դէպի անորոշ ապագայ մը: Անտարբերութիւնը կամ լուրջութիւնը խոհեմ ընտրութիւն չէ: Մարդկութիւնը օժտուած է աստուածատուր բանականութեան շնորհով, որպէսզի ճիշդ որոշումներ կայացնէ՝ արտայայտելով իր հարազատ բնութիւնն ու ճշմարիտ կոչումը:

Հիմնադրութիւն, 7 Մայիս 2020

Համաճարակի ստեղծած անձկութիւնն ու շփոթը մարդկութիւնը աւելի մօտեցուց Աստուծոյ, եւ աղօթքի, խոկումի, երաժշտութեան եւ հոգեւոր, մշակոյթի այլ միջոցներով մարդկային կեանքը համագրաւուեցաւ հզօր հոգեւորութեամբ: Անոնք, որոնք կը հաւատան, որ հոգեւորութիւնը լուսանցքայնացած է, տեղի տալով սպառողականութեան, նիւթապաշտութեան, անհատապաշտութեան, գիտութեան եւ ճարտարագիտութեան, պէտք է վերատեսուցութեան ենթարկեն իրենց համոզումը: Հաստատութեան կրօնը կրնայ այս կամ այն պատճառով տաքնապի մէջ ըլլալ, սակայն հոգեւորութիւնը, որ հարազատ արտայայտութիւնն է անդրանցական հաւատքին, մարդկային կեանքին մէջ կը մնայ վառ ու կենդանի, որովհետեւ ան կը բխի մարդու ներքին հարազատ մղումէն:

Արդարեւ, կրօնի մը առանցքային արժէքներն ու հիմնական ուսուցումները կ'արտայայտուին, կը փոխանցուին ու կեանքի կը կոչուին հոգեւորութեան միջոցով: Հոգեւորութիւնը ամբողջական է մասնաւորապէս Արեւելեան Ուղղափառ ավանդութեան մէջ, որ կ'ընդգրկէ անհատին ամբողջ կեանքը. ան ունի նաեւ համայնքային եւ կենսոլորտային տարածքներ եւ արտայայտութիւններ: Ասիկա Ուղղափառ հոգեւորութեան գլխաւոր յատկանիշներէն մէկն է: Իրենց հոգեւոր կեանքին, խորհրդածութեան, ուսուցումներուն եւ գրութիւններուն մէջ, Ուղղափառ եկեղեցւոյ հայրեր չեն անտեսած նիւթական աշխարհը, այլ՝ անոր նայած են հոգեւոր տեսանկիւնէն: Քրիստոսի անձին մէջ Աստուած եւ մարդ կատարեալ միութիւն մը կազմեցին, իւրաքանչիւրը պահելով հանդերձ իր իւրայատկութիւնները: Ամբողջ-

ջական հոգեւորութեան մէջ ստեղծագործութեան բոլոր երեւոյթները եւ կեանքի բազմաթիւ երեսները սերտօրէն առնչուած են իրար հետ: Անկարելի է անջատման գիծեր քաշել նիւթականին, բանականին եւ հոգեւորութեան, ինչպէս նաեւ՝ մարդու եւ կենսոլորտի միջեւ. անոնք սերտօրէն առնչուած են, պահելով հանդերձ իրենց առանձնայատկութիւնները:

Հոգեւորութեան հասարակաց յատկանիշերը՝ խոկում, սէր, խոնարհութիւն, հոգատարութիւն եւ բարոյական արժէքներ, դուրս կը բերեն զայն յատուկ կրօնի մը ոլորտներէն եւ սերտ փոխյարաբերութիւն կը ստեղծեն եւ ընդհանրական գիծեր կը հաստատեն կրօններու միջեւ: Աղօթքը բոլոր կրօններուն մէջ ալ հոգեւորութեան հիմքը կը կազմէ: Համաճարակին հետ դէմ յանդիման գտնուելով, մարդիկ բնագրաբար դիմեցին Աստուծոյ, աղօթքի միջոցաւ խնդրելով անոր ամօքիչ միջամտութիւնը: Յատկանշական երեւոյթ մը, որ յտակօրէն նկատուեցաւ բժիշկներու, հիւանդապահուհիներու, հիւանդներու, թղթակիցներու եւ նոյնիսկ քաղաքական ղեկավարներու դէմքերուն վրայ: Ընդհանուր արգելափակումը աղօթքի ճամբով Աստուծոյ հետ ըլլալու մեծագոյն հնարաւորութիւնը ընծայեց մարդուն:

Թէեւ համաճարակը Ֆիզիքական եւ ընկերային հեռաւորութիւն պարտադրեց, միւս կողմէ սակայն, ան խորացուց հոգեւոր մօտիկութիւնը: Կը յուսամ որ նուազագոյնը, կարգ մը բարիքներ յառաջ պիտի դան համաճարակէն, որ պիտի մղէ մարդիկը հաւատքի հեռանկարէն նայելու իրենց անձերուն եւ համոզուելու, որ բժշկական օգնութեան կողքին, կարիքը ունին հոգեւոր բուժման եւ վերանորոգութեան: Աշխարհականացումը շեշտեց մարդկային կեանքի հորիզոնական տարածքը, արհամարհելով ուղղահայեաց տարածքը: Կը յուսամ որ այս տագնապը նիւթականօրէն ու ճարտարագիտականօրէն հարուստ ու ինքնաբաւ ընկերութիւնները մղէ հասկնալու եւ ընդունելու առանցքային կարեւորութիւնը հոգեւոր արժէքներուն, որոնք կ'երաշխաւորեն մարդկութեան եւ ստեղծագործութեան իւրայատկութիւնն ու գոյութիւնը:

Հոգեւորութեան մասին վերոյիշեալ խորհրդածութիւնները, զիս կ'առաջնորդեն հետեւեալ եզրակացութիւններուն. –

1. – Քրիստոնէական հոգեւորութիւնը կարիքը ունի վերանորոգութեան եւ վերաշխոթացման, կարենալ դիմագրաւելու համար ներկայ աշխարհի մարտահրաւէրները: Համաշխարհային Եկեղեցիներու Խորհուրդը Վանքով վրի Համաժողովէն ետք (1983) նախաձեռնեց յատուկ ծրագրի մը՝ «Հոգեւորութիւնը մեր ժամանակներուն համար» թեմայով: Խորհուրդին ընդհանուր քարտուղարը ինդրեց, որ ստանձնեմ ծրագրին ընդհանուր պատասխանատուութիւնը ու անոր գործադրութեան հետեւելու աշխատանքը: Սակայն օրին, որպէս Լիբանանի թեմի Առաջնորդ, պարտաւոր էի մերժել ինդրանքը, նկատի ունենալով այն մարտահրաւէրներն ու լուրջ մտահոգութիւնները, որ

լիբանանահայ գաղութը կը դիմագրաւէր, Լիբանանի քայքայիչ պատերազմին տարիներուն: Կը հաւատամ տակաւին, որ հարկ է հոգեւորութիւնը վերաշխուժացնել, զայն դարձնելով համահունչ արմատականօրէն փոխուող աշխարհի մտահոգութիւններուն ու պահանջներուն: Այս գծով, միջ-եկեղեցական շարժումը կարեւոր դեր ունի կատարելիք:

2.– Քրիստոնէական հոգեւորութիւնը պէտք է իւրացնէ այնպիսի ոճեր, կերպեր կամ արտայայտութիւններ, որոնք կրնան զինք առաջնորդել նոյնաճառ ալլախոհ կրօնական շարժումներուն հետ: Վերջին տասնամեակներուն, նման ուղղութիւններ եւ հակումներ թափ ստացած են՝ համաշխարհայնացման եւ յատկապէս՝ հաղորդակցութեան ու տեղեկատուութեան ճարտարագիտութեան արագ զարգացող արդիական միջոցներուն պատճառով:

3.– Գրաւիչ անուններով ներկայացուող սակայն խորքին մէջ մարդկային կեանքը ապականող ու կործանող ուժեր, հոգեւոր դատարկութիւն մը ստեղծեցին ընկերութիւններու կեանքին մէջ: Համաճարակը ժողովուրդին մօտ արթնութիւն յառաջացուց՝ իր հոգեւոր կարիքներուն նկատմամբ: Իրենց ծիսական կեանքէն անդին, եկեղեցիներ պարտաւոր են նախաձեռնել դէպի ընկերութիւն ուղղուող խորհրդածական միջոցներու եւ գործընթացի, որոնցմով հոգեւորութեան կարեւորութիւնը կը վերաշեշտուի եւ վերաշխուժանայ:

4.– Հարկ է ուշադիր եւ զգաստ ըլլալ կեղծ եւ աժան հոգեւորութեան նկատմամբ, որ յաճախ կը յայտնուի ընկերային ցանցերու վրայ: Մենք հրամայական կարիքը ունինք այնպիսի հոգեւորութեան մը, որ կը խթանէ եկեղեցույ մտածողութիւնն ու կենսունակութիւնը՝ իր ծառայական առաքելութեան մէջ: Հոգեւորութիւն մը, որ կը վերականգնէ մարդկային կեանքին մէջ անդրանցականութեան առանցքայնութիւնը եւ կարելիութիւն կ'ընծայէ մարդուն ինքզինք ճանչնալու, Աստուծոյ պատկերին մէջ: Հոգեւորութիւն մը, որ հանդուրժողութեան եւ փոխադարձաբար զիրար ընդունելու կարելիութիւնը կը ստեղծէ բազմակարծիք ընկերութիւններու մէջ:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 7)

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Ա Բ Ե Տ Ա Ր Ա Ն Ի (3.16–26)

«Որովհետև Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (ՅՀ 3.16):

1) «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը»: Ո՛չ թէ սիրեց, այլ՝ «ա՛յնքան սիրեց»: Այս բառերով, Տէրը կը յայտնէ Աստուծոյ սիրոյն անսահմանութիւնն ու անչափութիւնը մարդ արարածին հանդէպ: Աստուած անսահմանօրէն սիրեց սահմանաւոր մարդը: Անսահմանօրէն սիրեց՝ որովհետեւ ինք անսահման է: Անսահմանն Աստուած չի կրնար սահման ունեցող ու սահմանափակութիւն ճանչցող սէր ունենալ իր ձեռքին գործը եղող՝ մարդ արարածին հանդէպ:

2) «Սիրեց աշխարհը»: Նոր Կտակարանին մէջ «աշխարհ» բառով յաճախ կը հասկնանք մեղաւոր մարդկութիւնը (Հռ 3.19, 5.12, 8.3: Ա.Կր 3.3: Գղ 6.14: Եփ 2.2, եւ այլն): Այս առումով, երբ կը հաստատուի թէ Աստուած անսահմանօրէն սիրեց աշխարհը, կը հասկնանք որ ան սիրեց մեղաւոր մարդկութիւնը: Եւ ուստի, ան «արդար» մարդիկը փրկելու համար չէր որ իր Միածինը տուաւ, այլ՝ մեղքի ցեխին մէջ գտնուող մարդիկը փրկելու համար: Ան իր Որդին չյանձնեց որպէսզի փրկէր բարի ու բարեգործ մարդիկը, այլ՝ որպէսզի փրկէր իրեն թշնամի եղողները. «Աստուած իր Որդիին մահովը մեզ իր հետ հաշտեցուց դեռ այն ատեն՝ երբ տակաւին թշնամի էինք իրեն» (Հռ 5.10):

3) «Սիրեց աշխարհը», ամբողջ աշխարհը: Ասիկա պատասխան մըն էր Նիկոզեմոսին ու բոլոր Հրեաներուն, որոնք կը խորհէին թէ Աստուած միայն զիրենք կը սիրէր, միայն իրենց կը հոգար: Ո՛չ: Աստուած ամբողջ մարդկութիւնը սիրեց ու կը սիրէ: Հրեաներ կը խորհէին որ Մեսիան պիտի գար սոսկ իրենց փրկութեան համար: Յիսուս իր այս բառերով պարզեց, թէ ինք աշխարհ եկաւ՝ ամբողջ աշխարհին համար, մարդացաւ՝ ամբողջ մարդկութեան փրկութեան համար: Մե՛ր ալ մէջ այսօր Հրեաներ կան, որոնք կը խորհին թէ Յիսուսի փրկութիւնը յատուկ է միայն իրենց, անոր պարզեւները յատուկ են միայն իրենց: Ո՛չ, սիրելիներ. Յիսուսի սէրը բոլորի՛ն համար է, բոլորը կ'ընդգրկէ, բոլորին կը հասնի, բոլորը կը ջերմացնէ ու բոլորը կը լեցնէ:

4) «Որ միևնույն իսկ իր միաժիմ Որդին տուալ»: Այս վկայութիւնը ցոյց կու տայ որ Աստուծոյ սէրը մարդուն հանդէպ իրողապէս անսահման է: Եթէ Աստուած տասը որդի ունենար եւ անոնցմէ մին զրկէր, առանց վարանելու պիտի ըսէինք որ մե՛ծ է անոր սէրը մարդուն հանդէպ: Եթէ հինգ որդի ունենար եւ անոնցմէ մին զրկէր, դարձեալ, առանց տատամսելու պիտի ըսէինք որ մե՛ծ է անոր սէրը մարդուն հանդէպ: Եթէ երկու որդի ունենար եւ անոնցմէ մին զրկէր, դարձեալ պիտի յայտարարէինք թէ մե՛ծ է անոր սէրը մարդուն հանդէպ: Բայց ան չունէր տասը որդի, ո՛չ ալ հինգ կամ երկու որդի, այլ միայն մէ՛կ Որդի, իր Միաժիմը, իր միակ ծնունդը, եւ զա՛յն տուալ աշխարհի փրկութեան համար: Ունենալ միայն մէ՛կ Որդի ու զայն մահուան յանձնել՝ անբացատրելի սէր է:

5) Աստուծոյ սիրոյն անբացատրելիութեան առաւել՝ եւս կ'անդրադառնանք, եթէ երբեք յիշենք որ «Աստուած իր Որդիին մահովը մեզ իր հետ հաշտեցուց դեռ այն ատեն՝ երբ տակաւին քշնամի էինք իրեն» (Հռ 5.10): Ան իր Որդիին մահով՝ հաշտեցաւ իր թշնամիներուն հետ, զինք անտեսողներուն հետ, զինք մոռցողներուն ու ուրացողներուն հետ: Եղա՞ծ է, կամ կա՞յ այսօր մարդ արարած մը, որ կ'ընդունի իր որդիին մահով հաշտուիլ իր թշնամիին հետ: Եթէ քու թշնամիներէդ մէկը քեզի դայ ու ըսէ. «Ես կը հաշտուիմ հետդ՝ պայմանաւ որ գաւակդ մեռցնես ինձի համար», կը մեռցնես՞: Ո՞ր անխելք մարդը իր զաւակը կը մեռցնէ՝ հաշտուելու համար իր թշնամիին հետ: Գիտակցաբար գործածեցի «անխելք» բառը, ըսելու համար, թէ Աստուծոյ սէրը մեղաւոր մարդուն հանդէպ՝ մարդուս խելքէն ու միտքէն գերիվեր է: Միտքով չենք կրնար ըմբռնել Աստուծոյ սիրոյն տարողութիւնը:

6) «Իր միաժիմ Որդին տուալ»: Չ'ըսեր՝ «դրկեց իր Որդին», այլ՝ «տուալ իր Որդին»: Այստեղ տալը՝ իբրեւ զոհ տալ կը նշանակէ, այսինքն՝ զանիկա տալ զոհ ըլլալու: Տալ՝ կը նշանակէ մահուան յանձնել: Հին կտակարանին մէջ ո՛չ մէկ մարգարէի համար գործածուած է՝ «Աստուած զայն տուալ» բացատրութիւնը. բոլորին համար գործածուած է՝ «Աստուած զայն դրկեց» բացատրութիւնը: Որդին ոչ միայն զրկուեցաւ, այլ նաեւ՝ տրուեցաւ: Ղրկուեցաւ՝ որպէսզի գար աշխարհ, եւ տրուեցաւ՝ որպէսզի մեռնէր աշխարհին համար: Ղրկուեցաւ աշխարհին համար, ու տրուեցաւ աշխարհին փրկութեան համար:

7) Ինչպէս «այնքան» բառը, նոյնպէս ալ «տուալ» բառը կ'արտայայտէ Աստուծոյ սէրը: Սէրը ոչ միայն կը զրկէ, այլեւ՝ կու տայ. ինքզինք կու տայ, ինքզինք կը յանձնէ, ինքզինք կը զոհէ: Սէրը ո՛չ թէ իր քովէն կու տայ, այլ՝ ինքզինք կու տայ. ո՛չ թէ իր գրպանէն կու տայ, այլ՝ իր սրտէ՛ն կու տայ, իր սիրտը կու տայ, իր սէ՛րը կու տայ:

8) «Տուալ» բառով նաեւ կը հասկնանք որ Աստուած զայն տուալ մարդկութեան իբրեւ Տէր ու Փրկիչ: Զայն պարզեցեց մարդկութեան՝ իբրեւ ազա-

տարա՛րը մարդկութեան, պաշտպանն ու ապաւէ՛նը մարդկութեան, յոյսն ու լո՛յսը մարդկութեան, ուրախութիւնն ու զօրութի՛ւնը մարդկութեան: Յիսուս տրուեցաւ՝ որպէսզի ըլլայ տէրը անտերունչին, պաշտպանը՝ անպաշտպանին, ուրախութիւնը՝ սգաւորին, զօրութիւնը՝ տկարին, յոյսը՝ յուսաբեկին, փրկութիւնը՝ փրկութեան կարօտ հոգիին, հոգատար հայրը՝ աղքատին ու որբին:

9) «Տուաւ», այսինքն՝ պարգեւեց: Արդարեւ, Որդին Հօրը կողմէ մարդկութեան տրուած մեծագոյն ու գեղեցկագոյն պարգեւն է: Այնպիսի պարգեւ մը, որ երբ զանիկա ստանանք՝ մեր կարգին կրնանք զանիկա ուրիշին պարգեւել: Աշխարհիկ հասկացողութեամբ, ուրիշէն մեր ստացած պարգեւը ուրիշին պարգեւելը տգեղ երեւոյթ է, բայց Յիսուսը՝ Աստուծոյ կողմէ մեզի տրուած այնպիսի՛ պարգեւ մըն է, որ իրմէ աւելի գեղեցիկը չկա՛յ որ կրնանք ուրիշներուն տալ: Բայց զայն տալու համար՝ պէտք է նախ մե՛նք զայն ունենանք մեր սրտին մէջ:

10) «Որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտեակաւ կեանք ունենայ»: Հոս կը ճշդուին այն երկու նպատակները՝ թէ ինչո՛ւ համար Աստուծո՛ւ սիրեց աշխարհը եւ ինչո՛ւ համար իր Միածին Որդին տուաւ: Նախ, «որպէսզի անոր հաւատացողը չկորսուի», եւ երկրորդ՝ «որպէսզի անիկա յաւիտեակաւ կեանք ունենայ»: Յիսուսի խաչ բարձրանալուն նպատակը՝ մեզ դժոխքի դատապարտութենէն ազատելը չէր միայն, այլ նաեւ՝ մեզի յաւիտենական կեանք շնորհելը: Շատեր կը վախնան դժոխքէն ու չեն ուզեր հոն նետուիլ, բայց քիչեր են որոնք սրտով ու հոգիով կապուած են Յիսուսին, եւ ամբողջ սրտով կը փափաքին անոր հետ ըլլալ՝ իր արքայութեան մէջ: Շատե՛ր ըսած են ինծի. «Արքայութեան մէկ անկիւնը թող տայ ինձի Յիսուս, միայն կարելորդ դժոխք թող չլինուի»: Գիտէ՞ք թէ այս խօսքը որքա՛ն խորունկ կերպով կը ցաւցնէ Յիսուսի սիրտը, որ խաչին վրայ մեզի համար արիւնեցաւ: Այս խօսքը ցոյց կու տայ, թէ մարդիկ կը վախնան դժոխքէն, բայց հետաքրքրութիւն ու սէր չունին Յիսուսի հանդէպ: Կ՛ուզե՛ն արքայութիւն մտնել, ո՛չ թէ որովհետեւ կը սիրեն Արքան, այլ՝ որովհետեւ դժոխքէն կը վախնան: Յիսուս, սակայն, խաչին վրայ չմեռաւ պարզապէս որպէսզի մեզ դժոխքէն ազատէ, այլ մեռաւ՝ որպէսզի մեզ իրեն զաւակ դարձնէ, ու ինք մեզի հայր ըլլայ: Յիսուս իր մահուամբ ուզեց իր ու մեր միջեւ հայր ու զաւակի սիրալիր ու գուրգուրալից յարաբերութիւն ըլլայ:

11) «Այլ յաւիտեակաւ կեանք ունենայ»: Ծիշդ է որ վերեւ գործածեցինք «արքայութիւն» բառը, հոս սակայն խօսինք յաւիտենական կեանքին մասին: Արքայութիւն մտնողը պիտի ունենայ յաւիտենական կեանքը՝ որ Քրիստոս ինքն է: Յովհաննէս առաքեալ կը վկայէ թէ յաւիտենական կեանքը Քրիստոս ինքն է (Ա.ՅՏ 1.2, 5.11): Որդին միայն կեանք տուողը չէ, այլ նաեւ տրուած կեանքն է: Արքան ինքն է կեանքը իր արքայութեան, եւ ուստի արքայու-

Թիւնը ժառանգել՝ կը նշանակէ Քրիստոսը ժառանգել, ունենալ: Եւ արդէն Յունարէն բնագիրը «ունենալ» բառն է որ կը գործածէ: Յաւիտենական կեանքը, հետեւաբար, ոչ միայն բան մըն է որ պիտի տրուի մեզի, այլ բան մըն է որ պիտի ունենանք մեր անձերուն մէջ, եւ այդ բանը՝ Բանն Աստուած ինքն է:

«Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ» (ՅՏ 3.17):

1) Այս հաստատումով, Յիսուս կը յայտնէ այն նպատակը որուն համար ինք աշխարհ դրկուեցաւ իր Հօրը կողմէ: Նպատակն է՝ փրկել աշխարհը, եւ ոչ թէ դատապարտել զանիկա: Աշխարհ արժանի էր եւ այսօր ալ արժանի է ամենախիստ դատապարտութեան իր մեղսալից ու պղծալից կեանքին համար. բայց որովհետեւ Աստուած սէր է, եւ որովհետեւ ողորմած ու երկայնամիտ է, ան աշխարհ դրկեց իր Որդին, փրկելու կորուստի արժանի մարդը, մաքրելու անմաքուրը, սրբելու պիղծը, եւ հրեշտակացնելու հրէշացած մարդը: Եւ այս գործողութիւնը ոչ միայն Աստուծոյ սիրոյն յայտնումն է, այլեւ՝ բացայայտումը անոր սիրոյն կարողութեան: Արդարեւ, Աստուած պարզ սէր չէ, այլ կարող սէր է. կարող սէր է՝ որովհետեւ կրնայ դատապարտութեան արժանին՝ փրկութեան արժանի դարձնել, դժոխքի զաւակը՝ երկնագումար հրեշտակներուն դասակից դարձնել, խաւարամածը՝ երկնային լոյսի տարածիչ դարձնել, մեղքի ճիրաններուն մէջ բռնուածը՝ առաքինազարդ սուրբի փոխակերպել: Միայն կարող սէ՛րը կրնայ նման բան կատարել:

2) Յիսուս երբ աշխարհ եկաւ, իրաւունքն ու իշխանութիւնը ունէր դատելու ու դատապարտելու աշխարհը, որովհետեւ աշխարհը ի՛րն էր, իր սեփականութիւնն էր, իր ստեղծագործութիւնն էր, իրե՛ն կը պատկանէր. «Տիրոջն է երկիրն ու անոր լիութիւնը, աշխարհն ու անոր բնակիչները» (Մղ 24.1): Աշխարհ սակայն ուրացած ու մոռցած էր իր Ստեղծիչը, լքած ու դաւաճանած էր իրեն: Աստուած աշխարհը իր խօսքով ստեղծած էր, բայց աշխարհը ոտնակոխ ըրած էր անոր խօսքը: Մարդը իր ձեռքով ստեղծած էր, բայց մարդը լքած էր այդ ձեռքը: Երբ Տէրը իր աշխարհը եկաւ՝ կրնա՛ր եւ իրաւո՛ւնքը ունէր դատապարտելու զանիկա, բայց չդատապարտեց՝ արդէն իսկ դատապարտուածը, չպատժեց՝ արդէն իսկ Սատանային կողմէ պատժուածը, որովհետեւ սէ՛ր է ու սիրե՛ց մարդկութիւնը, եւ որովհետեւ սէր է՝ ան «մարդու մը հոգին չ՛առնէր, հապա միջոցներ կը հնարէ, որպէսզի ախարուածը իրմէ ախարուած չմնայ» (Բ.Թգ 14.14): Տէրը իրաւունք ունէր դատելու՝ բայց չդատեց, իսկ մարդիկ իրաւունք չունին դատելու՝ բայց կը դատեն: Ո՞վ իր արիւնը թափեց փրկութեանդ համար որ իրաւունք ունենայ քեզ դատելու:

3) Երբ Յիսուս կը հաստատէ, թէ Աստուած զինք աշխարհ չդրկեց դատապարտելու համար աշխարհը, ասով կ'ուզէ ցուցնել, թէ մարդը դատապարտե-

լը Աստուծոյ համար հաճոյք չէ, ուրախութիւն չէ, նպատակ չէ: Ընդհակառակը, կը տրտմի՝ Աստուած, երբ կը տեսնէ մարդը մեղքի ու տրտմութեան հովիտին մէջ: Կը ցաւի՝ Աստուած, երբ կը տեսնէ մարդը մեղքի ցնցոտիներով ծածկուած:

4) Աշխարհ արժանի՝ էր դատապարտութեան, որովհետեւ խախտած էր բոլոր այն օրէնքները որ Աստուած տուած էր Մովսէսի միջոցաւ: Յիսուս սակայն չդատապարտեց աշխարհը, ցոյց տալու համար թէ ականատես էր Օրէնքի ժամանակաշրջանը, ու սկսած՝ Շնորհքի ժամանակաշրջանը:

5) Եթէ Աստուծոյ նպատակը ըլլար մարդիկը դատապարտել, կարիքը չունէր իր Որդին զրկելու, այլ կրնար հրեշտակ մը զրկել ատիկա ընելու. ինչպէս հրեշտակներ զրկեց, որպէսզի Ղովտին տան «դուռը կայնած մարդիկը կուրուքեամբ» գարնեն (Ծն 19.11). կամ ինչպէս հրեշտակ մը զրկեց սպաննելու Եգիպտացիներուն անդրանիկները (Ել 12.23). կամ կրնար ինք անձնապէս երկինքէն պատժել մարդիկը, ինչպէս կուրութեամբ պատժեց Սուրիական բանակը (Դ.Թգ 6.18): Բայց իր նպատակը մարդիկը փրկելն էր, եւ ատիկա միայն իր Որդին կրնար ընել:

6) Քրիստոս երկրին ու մարդկութեան Դատաւորն է, բայց իր կամքը՝ մարդոց փրկութիւնն էր եւ է: Արդար դատաւորը առիթ կու տայ ու կը քննէ, եւ անկէ ետք միայն վճիռ կ'արձակէ: Մեր Տէրը ինք եւս նոյնը կ'ընէ այսօր. առիթ կու տայ իր փրկութիւնը ընդունելու, եւ ապա կը քննէ իր փրկութիւնը ընդունողները. զանոնք կը քննէ կեանքի փորձութեանց ընդմէջէն. բայց աշխարհի ականատեսն՝ վճիռ արձակելու պահը պիտի ըլլայ:

7) «Այլ որպէսզի աշխարհը փրկէ»: Աստուած աշխարհ զրկեց իր Որդին իբրեւ Փրկիչ: Ղրկեց որպէսզի փրկէ մարդիկը ու բնակի անոնց մէջ: Յիսուս աշխարհ չեկաւ որպէսզի մեզ փրկէ ու ապա թողու մեզ ու երկինք երթայ. ո՛չ. եկաւ որպէսզի հո՛ս մնայ, մեր հետ ու մեր մէ՛ջ մնայ. եկաւ մեր էմմանուէ՛լը ըլլալու, այլ խօսքով, եկաւ իբրեւ մեր Աստուածը՝ մեր հետ բնակելու, մեր կողքին ըլլալու, մե՛զ զօրացնելու:

«Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար» (ՅՎ 3.18):

1) Տէրը կը յայտնէ թէ ով որ կը հաւատայ իրեն՝ չի դատապարտուիր: Ի՞նչ կը նշանակէ հաւատալ Քրիստոսի: Քրիստոսի հաւատալ, կը նշանակէ՝ հաւատալ իր փրկարար շնորհքին ու բացուիլ անոր, հաւատալ իր արեան քաւարար զօրութեան ու յանձնուիլ անոր, հաւատալ իր փրկութեան եւ ընդունիլ զանիկա, հաւատալ իր սիրոյն եւ ընդգրկել զանիկա, հաւատալ իր քաղցրութեան եւ պարուրուիլ անով, հաւատալ անոր հովուութեան ու հետեւիլ անոր,

հաւատալ անոր Տէրութեան ու վստահիլ անոր: Եթէ կը հաւատանք Քրիստոսի բայց այս բոլորը չենք կատարեր՝ մեռա՛ծ է մեր հաւատքը:

2) «Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուի»: **Չի դատապարտուի**, որքա՛ն ալ մեղաւոր ըլլայ, որքա՛ն ալ մեղքերով իր հոգին տգեղցած ու իր սիրտը սեւցած ըլլայ: **Չի դատապարտուի**, որքա՛ն ալ ապերախտ գտնուած ըլլայ **Տիրոջ** ու անոր բարիքներուն հանդէպ, անոր սիրոյն ու պարգեւներուն հանդէպ: **Չի դատապարտուի**, որքա՛ն ալ անօրէն ու անիրաւ եղած ըլլայ: **Կը բաւէ** որ հաւատայ **Տիրոջ**, եւ իսկոյն կը մաքրուին իր անցեալն ու անցեալի մեղքերը: **Կը բաւէ** որ ընդունի **Տէրը**, եւ ան իսկոյն **Տիրոջ** համար ընդունելի կը դառնայ: **Երբ մարդ Տիրոջ դառնայ**, **Տէրը անկէ հաշիւ պիտի չպահանջէ անցեալին իր գործած մեղքերուն համար**, այլ՝ իր կռնակին ետեւ պիտի նետէ անոր բոլոր մեղքերը (**Ես 38.17**), եւ նո՛ր սիրտ (**Եզ 36.26**) ու սիրելու նո՛ր եռանդ պիտի պարգեւէ անոր **Սուրբ Հոգիին միջոցաւ** (**Կղ 1.8**):

3) «Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուի»: **Քրիստոսի հաւատացողը կրնայ դատապարտուիլ աշխարհի կողմէ**, բայց չի դատապարտուի աշխարհի հետ. կրնայ մերժուիլ աշխարհի կողմէ, բայց չի մերժուիլ աշխարհի Ստեղծիչին կողմէ: **Քրիստոսի հաւատացողը կրնայ խեղճ ու թշուառ նկատուիլ**, մեռած ու տխուր նկատուիլ, տգէտ ու մոլորած համարուիլ, բայց իսկութեան մէջ այդպիսին չէ, ընդհակառակը, անիկա ճշմարտապէս հարուստ է, որովհետեւ ճշմարիտ Հարստութիւնը գտած է: **Շատեր Պօղոս առաքեալը խեղճ ու թշուառ, մեռած ու մոլորած կը համարէին: Առաքեալը անոնց պատասխանեց շատ ազդու ու դիպուկ կերպով. «Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ցանցնալ. մենք գիտենք թէ մեզ լաւ կը ցանցնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք ահա կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք շատերու կեանքերը կը ցոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչինչ ունինք, մինչդեռ ամէն ինչ ունինք»** (**Բ.Կր 6.6-10**): **Այո՛, Դատաւորին հաւատացողը՝ Դատաւորին իսկ ձեռքով անդատապարտելի կը հռչակուի:**

4) «Իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է»: **Մեզ դատապարտութեան ենթակայ դարձնողը Քրիստոսը չէ**, այլ՝ **Քրիստոսի հանդէպ մեր անհաւատութիւնը**, անոր սիրոյն հանդէպ մեր մերժողական կեցուածքը, անոր փրկութեան հանդէպ մեր անտարբերութիւնը, անոր կոչին դիմաց մեր չընդառաջումը: **Քրիստոսի խօսքերը այնպիսին են՝ որ անոնք ծնունդ կու տան հաւատքի մարդուն սրտին մէջ** (**Հռ 10.17**), բայց եթէ մարդը իր սիրտը փակէ այդ ծնունդին դիմաց՝ **Ծնեալ Փրկիչը ոչինչ կ'ընէ ու ոչինչ կրնայ ընել իրեն համար: Յիսուս երբեք պիտի չփրկէ մարդը՝ մարդուն կամ-**

քէն անկախ: Ան երբեք մարդուն սրտին դուռը կտրելով ներս պիտի չմտնէ. մարդը իր ազատ կամքով պէտք է այդ դուռը բանայ (Յտ 3.20):

5) «Ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է»: Ոչ թէ դատաստանի օրը միայն պիտի դատապարտուի անզիղջ մեղաւորը, այլ ներկայիս՝ «արդէն իսկ դատապարտուած է»: Երկու դատապարտութեանց առջեւ է անհաւատ մարդը. ներկայ դատապարտութիւն, եւ ապագայ դատապարտութիւն: Ինչ դժբախտութիւն է որ մարդը դատաստանի օրը չեկած՝ արդէն իսկ դատապարտուած ըլլայ. դժոխք չգացած՝ իր անունը արդէն իսկ հոն արձանագրած ըլլայ. կորսուած ըլլայ՝ նախքան յաւիտենական կորստեան դատապարտուելը, ու մեռած ըլլայ՝ նախքան յաւիտենական մահուան սահմանուելը:

6) Ամէն մեղք կրնայ մեզ դատապարտութեան ենթարկել, բայց ամենէն վատ մեղքը՝ անհաւատութեան մեղքն է, որ մեզ կը պահէ բոլոր մեղքերուն անէծքին տակ: Հաւատացեալ մարդն ալ կրնայ մեղք գործել ու Տիրոջ դառնալ, եւ ներում խնդրել ու ներուել, մինչդեռ անհաւատ մարդը եթէ մեղք գործէ՝ որո՞ւ պիտի դառնայ, որմէ՞ ներում պիտի խնդրէ, եւ ո՞վ իրեն պիտի ներէ:

7) «Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար» է որ մարդը արդէն իսկ դատապարտուած է: Մե՛ծ է մեղքը անհաւատ մարդուն: Արդարեւ, մեծ չէ՞ մեղքը անոր՝ որ չի հաւատար Յիսուսին, որ թողուց երկինքն ու անոր հանգիստը, եւ աշխարհ եկաւ մեռնելու իր մեղքերուն քաւութեան համար, ինք սակայն կը մերժէ այդ քաւութիւնը: Մեծ չէ՞ մեղքը անոր՝ որ չի հաւատար փառքին Աստուծոյն, որ թողուց իր փառքն ու զինք փառաբանող հրեշտակները, եւ եկաւ նախատուելու մարդոց ձեռքով ու մարդոց համար: Մեծ չէ՞ մեղքը անոր՝ որ չի հաւատար Անմահին՝ որ իրեն համար մեռաւ, Արարիչին՝ որ իրեն համար արարած եղաւ, Գթառատին՝ որ իր սիրոյն անգութ կերպով ծեծուեցաւ:

«Եւ դատապարտութիւնը այս է.– Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին» (ՅՎ 3.19):

1) Այստեղ Քրիստոս կը բացայայտէ թէ ինք աշխարհ եկաւ իբրեւ Լոյս, «բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին», եւ ճիշդ այս է դատապարտութիւնը, կ'ըսէ Տէրը: Խաւարը՝ մեղքի կեանքն է, իսկ լոյսը՝ Քրիստոսը, իր Աւետարանը, իր փրկութիւնը, իր ուսուցումները: Այս առումով, մարդիկ մեղքի կեանքը աւելի սիրեցին քան լոյսը՝ Քրիստոսը: Նախընտրեցին կառչած մնալ մեղքի խաւարին, փոխանակ կառչելու Աւետարանի լոյսին՝ որ կրնար զիրենք ազատել մեղքի խաւարէն: Դատապարտութիւնը այս է, որ մարդիկ

մեղքը մեղքերու Քաւիչէն աւելի սիրեցին, պղծութիւնը Սուրբէն ու Սրբողէն աւելի սիրեցին, անմաքրութիւնը Մաքուրէն ու Մաքրողէն աւելի սիրեցին, ստույգութիւնը ճշմարիտէն ու ճշմարտութենէն աւելի սիրեցին, մեռելոտի գործերը Աստուծոյ գործերէն աւելի սիրեցին:

2) Լոյսը «աշխարհ եկաւ» բառերով Տէրը կ'ուզէ ցոյց տալ, թէ իր փրկարար Աւետարանին լոյսը ամբողջ աշխարհին համար է, եւ ո'չ թէ միայն Հրէաստանին համար. համայն մարդկութեան համար է, եւ ո'չ թէ միայն Հրեաներուն համար:

3) Երբ Քրիստոս կ'ըսէ, թէ դատապարտութիւնն այն է որ «մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին», ասով ցոյց կու տայ, թէ դատապարտութիւնը մեղք գործելը չէ, այլ՝ մեղքը սիրելը: Տէրը չի դատապարտեր մեզ եթէ մեղք գործենք, բայց վստահաբար կը դատապարտէ՝ եթէ սիրե'նք մեղքը, ախորժի'նք մեղքէն, փայտայե'նք մեղքը:

4) Ինչո՞ւ համար մարդիկ «խաւարը լոյսէն աւելի սիրեցին»: Այս հարցումին՝ Լոյսը ի'նք կը պատասխանէ. «Որովհետեւ չարութիւն կը գործէին»: Չարութիւն գործողը՝ չի կրնար սիրել լոյսը, որովհետեւ անիկա իր չար գործերը հանդէս կը բերէ: Չարն ու չարագործը՝ չեն կրնար սիրել բարին ու բարեգործները, որովհետեւ անոնք իրենց չարագործ ըլլալը յայտնի կ'ընեն: Չարութիւն գործող ո՞ր մարդը կը հանդուրժէ բարի ու բարեգործ մարդոց ներկայութիւնը իր կեանքին մէջ: Պղծալից կեանք ապրող ո՞ր արարածը կը հանդուրժէ մաքուր ու սուրբ կեանք ապրող մարդոց ներկայութիւնը: Մեղքի կեանքը սիրողը՝ չի հանդուրժեր լսել Անմեղին մասին, մեղքերու խոստովանութեան մասին, մեղքերու քաւութեան կամ անոնց Քաւիչին մասին:

5) Եթէ Քրիստոս աշխարհ եկած ըլլար դատապարտելու համար մարդիկը իրենց գործած մեղքերուն համար՝ անոնք կրնային հեռանալ իրմէ, պատճառաբանելով թէ ան զիրենք կը դատապարտէ. բայց Յիսուս զիրենք դատապարտելու չեկաւ, ընդհակառակը, եկաւ զիրենք մեղքի խաւարէն ազատելու, բայց անոնք չուզեցին ձգել խաւարը ու լոյսին գալ, եւ անոր համար ալ ոեւէ չքմեղանք պիտի չկարենան ներկայացնել, այլ պիտի պատժուին (Յովհան Ոսկեբերան):

«Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին» (ՅՀ 3.20):

1) Տէրը դիտել կու տայ, թէ ոեւէ անձ որ «չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար», եւ ինչո՞ւ, «որպէսզի իր գործերը չյայտնուին»: Լոյսին գործութիւնը կը կայանայ անոր մէջ՝ որ անիկա հանդէս կը բերէ մութին մէջ գործուած ամէն մեղք, կը հրապարակէ խաւարին մէջ ծածկուած ամէն սղեղութիւն: Լոյսը աներեւելին՝ երեւելի կը դարձնէ, եւ անոր համար ալ,

իրենց չարիքներով մարդոց աչքին երեւիլ չուզողները՝ կ'ատեն զանիկա, եւ ոչ միայն կ'ատեն, այլեւ՝ կը փախչին անկէ, ինչ որ «լոյսին չի գար» բառերը ցոյց կու տան: Ան որ չ'ուզեր ապաշխարութեան գալ, բնականաբար՝ լոյսին գալ ալ պիտի չուզէ:

2) «Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար»: Չարագործ մարդը կ'ատէ Աւետարանին լոյսը եւ չի գար անոր: Կ'ատէ՝ որովհետեւ այդ լոյսը արգելք կ'ըլլայ իր գործերուն, եւ կը փախչի անկէ՝ որովհետեւ անիկա զինք խայտառակ կ'ընէ հրապարակաւ: Կ'ատէ՝ որովհետեւ այդ լոյսը իր տգեղութիւնը հանդէս կը բերէ, եւ կը փախչի անկէ՝ որովհետեւ չ'ուզեր փոխուիլ, չ'ուզեր իր մեղքերէն հրաժարիլ, անոնք իր կեանքն են, եւ առանց անոնց՝ ինք չի՛ կրնար եւ չ'ուզեր ապրիլ: Մեղքին անձնատուր եղած մարդը կ'ատէ Աւետարանին լոյսը՝ որովհետեւ կը սիրէ մեղքը: Ոեւէ անձ որ կը սիրէ մեղքը՝ չի կրնար սիրել լոյսը՝ խայտառակիչը մեղքին: Ոեւէ անձ որ կը սիրէ Սատանան՝ չի կրնար սիրել Յիսուսը՝ թշնամին Սատանային:

«Սակայն ով որ կը կատարէ ինչ որ նշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամփին համաձայն գործուած են» (ՅՀ 3.21):

1) Այստեղ Քրիստոս չարագործ ու լոյսէն փախչող մարդուն հակադասակերը կը ներկայացնէ: Արդ, ինչպէս սխալ գործ կատարողը՝ կը հեռանայ լոյսէն, որպէսզի իր սխալներն ու մեղքերը յայտնի չըլլան, այնպէս ալ, «ով որ կը կատարէ ինչ որ նշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամփին համաձայն գործուած են»: Այս վկայութիւնը ցոյց կու տայ, թէ բոլորը չէ որ մերժեցին Աւետարանին լոյսը, այլ եղան շատեր՝ որոնք տեսա՛ն ու ճանչցա՛ն այդ լոյսը, ընդունեցի՛ն այդ լոյսը, հաւատացի՛ն այդ լոյսին:

2) «Ով որ կը կատարէ ինչ որ նշմարիտ է՝ լոյսին կու գայ»: Ճշմարիտը կատարողը՝ ճշմարտութիւնը հրապարակող լոյսէն չի վախնար, ընդհակառակը, կը սիրէ լոյսը, կը փնտռէ լոյսը: Արդարեւ, Քրիստոսի քարոզութեան օրերուն, բոլոր անոնք որոնք կը կատարէին ինչ որ ճշմարիտ էր, այլ խօսքով՝ կ'ապրէին աստուածաշտութեան կեանք, հաւատքի կեանք, բարեգործութեան կեանք, անոնք մօտեցա՛ն Քրիստոսի լոյսին՝ Աւետարանին, եւ ընդունեցին զանիկա:

3) Տէրը այստեղ «ճշմարիտ» կը կոչէ այն կեանքը որ Աստուծոյ կամքին համաձայն ու հաճելի է: Հետեւաբար, «ով որ կը կատարէ ինչ որ նշմարիտ է» ըսելով, Տէրը կ'ակնարկէր անոնց՝ որոնք կ'ապրէին Աստուծոյ կամքին հաճելի կեանք մը, մնայուն կերպով կը փնտռէին ճշմարտութիւնը եւ պատրաստ էին ընդգրկելու զանիկա: Այս խօսքը Նիկողեմոսին համար եւս քաջա-

լերանք էր: Ան եւս կը փնտռէր ճշմարտութիւնը, եւ քանի կը փնտռէր՝ եկաւ Լոյսին, մօտեցաւ Լոյսին, եւ երկխօսութեան մէջ մտաւ Լոյսին հետ:

4) **Ճշմարիտը գործեց Նիկողեմոս երբ եկաւ աշխարհի լոյսին՝ Յիսուսի մօտ:** Ճիշդ է որ գիշերով եկաւ անոր մօտ, բայց ան գիշերի որդի չէր, այլ՝ ցերեկի: Անհաշիւ է թիւը այն սուրբերուն, արդարներուն ու հաւատացեալներուն, որոնք գիշերային մէկ աղօթքի պահուն գտան ու հանդիպեցան Յիսուսին: Շատ սուրբ հայրեր պատուիրած են գիշերով արթննալ ու աղօթք մատուցել Տիրոջ:

5) **Ճշմարիտը կատարողը Լոյսին կու գայ, եւ ինչո՞ւ,** «որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամֆին համաձայն գործուած են»: Աստուծոյ կամքին համաձայն կատարուած գործ մըն էր Նիկողեմոսի հանդիպումը Տիրոջ: Բոլոր անոնք որոնք Լոյսին կու գան՝ Աստուծոյ կամքն է որ կատարած կ'ըլլան: Եւ ուրիշ ի՞նչ է Աստուծոյ կամքը եթէ ոչ այն՝ որ հաւատանք իր Որդիին, եւ մեր հաւատքով՝ փրկուինք ու յաւիտենական կեանք ունենանք. «Հօրս կամքը հետեւեալն է. – Ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յաւիտենական կեանք պիտի ունենայ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը» (ՅՎ 6.40): Նիկողեմոս տեսաւ Որդին ու հաւատաց անոր, թէպէտ իր հաւատքի աճումը աստիճանաբար տեղի ունեցաւ: Հոս կ'աւարտի Նիկողեմոսի հանդիպումը Յիսուսի հետ:

6) **Եթէ մեր կեանքը ճշմարիտ է, եթէ մեր գործերն ու խօսքերը ճշմարիտ են՝ գա՛նք Լոյսին: Թող Լոյսը ի՛նք փաստէ ու ապացուցանէ մարդոց, թէ մեր «գործերը Աստուծոյ կամֆին համաձայն գործուած են»:** Թող Լոյսը ի՛նք վկայէ եթէ երբեք մեր «գործերը Աստուծոյ կամֆին համաձայն գործուած են», թէ ոչ:

«Այս հանդիպումէն ետք Յիսուս իր աշակերտներով Հրէաստանի գաւառները գնաց, ուր անոնց հետ կը շրջէր ու կը մկրտէր» (ՅՎ 3.22):

1) **«Այս հանդիպումէն ետք»,** այսինքն՝ Նիկողեմոսի հետ իր հանդիպումէն ետք, Յիսուս թողուց Երուսաղէմը ուր եկած էր Չատիկի առիթով, եւ «իբր աշակերտներով Հրէաստանի գաւառները գնաց»: Յիշեալ գաւառներուն նման՝ Երուսաղէմը եւս Հրէաստանի գաւառներէն էր, բայց ուշագրաւ է որ աւետարանիչը Երուսաղէմը կը բաժնէ Հրէաստանի միւս գաւառներէն. ինչո՞ւ համար. ցոյց տալու համար, թէ Յիսուս մասնաւոր գործունէութիւն չունեցաւ հոն: Յիսուս ընդհանրապէս Չատիկներու առիթով կ'երթար Երուսաղէմ. իր երկրաւոր առաքելութեան վերջին շաբաթը նաեւ Երուսաղէմ անցուց. ասոնցմէ զատ քիչ առիթներով զինք կը գտնենք Երուսաղէմի մէջ: Երուսաղէմի մէջ լայն գործունէութիւն չկատարելուն պատճառը՝ խուսափիլն էր ոեւէ բախումէ քահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն ու Փարի-

սեցիններուն հետ, որոնք կը լեցնէին Երուսաղէմը: Նման բախում կրնար խուճապ ու խռովութիւն յառաջացնել ժողովուրդին մէջ: Այս հանգրուանին այդ բախումին ժամանակը տակաւին չէր հասած, բայց պիտի գար ժամանակը այդ բախումին, եւ ատիկա տեղի պիտի ունենար իր առաքելութեան վերջին շաբաթը, երբ Տէրը ամենախիստ կերպով պիտի պահարակէր ու խայտառակէր զանոնք (Մտ 23):

2) «Ուր անոնց հետ կը շրջէր ու կը մկրտէր»: Հարկաւ «Յիսուս անձամբ չէր մկրտեր, այլ իր աշակերտներն էին մկրտողները» (ՅՎ 4.1-2): Անոնք Յիսուսի անունով եւ Յիսուսի կողմէ իրենց տրուած իշխանութեամբ կը մկրտէին, եւ ճիշդ անոր համար է որ իրենց կողմէ կատարուած մկրտութիւնը՝ Յիսուսի կողմէ կատարուած մկրտութիւն կը համարուէր:

3) Հոն ուր Յիսուս կանգ առնէր՝ իր աշակերտները հետը կանգ կ'առնէին, եւ երբ տեղ մը երթար՝ անոնք հետը կ'երթային: Ճշմարիտ հովիւը Յիսուսին հետ կը շարժի եւ անոր հետ կանգ կ'առնէ: Եթէ Տէրը մեզի հետ չերթայ՝ մենք պէտք չէ երթանք: Եթէ երթանք առանց որ Տէրը զրկէ՝ մեր առաքելութիւնը անպտուղ պիտի ըլլայ: Մեր առաքելութիւնը պտղաբեր կ'ըլլայ միայն այն պարագային՝ եթէ մեզ զրկողը Տէրը ինքն է (ՅՎ 15.16):

«Եկաւ Այեւնոն, Սաղիմի մօտիկ, ուր Յովհաննէս ալ մկրտութիւն կ'ընէր, որովհետեւ առատ ջուր կար հոն: Ժողովուրդը Յովհաննէսին կու գար եւ կը մկրտուէր: Ասիկա կը պատահէր Յովհաննէսի բանտարկութեան անոց» (ՅՎ 3.23-24):

1) «Եկաւ Այեւնոն, Սաղիմի մօտիկ»: Այնոնի ու Սաղիմի վայրերը ներկայիս անծանօթ են մեզի, սակայն անցեալին կը գտնուէին Յորդանան գետի հովիտին մէջ:

2) «Ուր Յովհաննէս ալ մկրտութիւն կ'ընէր»: Թէպէտ Յիսուս արդէն սկսած էր իր առաքելութեան, եւ սակայն Յովհաննէս Մկրտիչի առաքելութիւնը տակաւին չէր աւարտած: Յիսուս տակաւին ճանչցուած ղէմք չէր, եւ ուստի Յովհաննէս տակաւին ընելիք ունէր: Ան տակաւին շատեր պիտի մկրտէր ու անոնց վկայութիւն պիտի տար Յիսուսի մասին, եւ զանոնք՝ անոր մօտ պիտի զրկէր, որպէսզի անոր հետեւորդները ըլլային:

3) Յիսուս սկսած էր իր առաքելութեան, բայց Յովհաննէս ատիկա իր առաքելութեան աւարտը չհամարեց: Իր առաքելութեան աւարտը Աստուած ինք պիտի որոշէր եւ ոչ թէ ինք: Յովհաննէս կրնար մտածել, թէ իր կոչումը Մեսիային ճամբան պատրաստելն էր՝ եւ պատրաստեց, ուստի ալ պէտք էր քաշուէր հրապարակէն: Եւ սակայն, հրապարակէն քաշուելու ժամանակը տակաւին չէր հասած, բայց շուտով պիտի հասնէր (ՅՎ 3.30), բայց մինչ այդ՝ ան պէտք էր իր գործը շարունակէր:

4) Յիսուս իր աշակերտներուն հետ եկաւ հոն՝ ուր Յովհաննէս կը մկրտէր, որպէսզի Յովհաննէս տեսնէր զինք իր աշակերտներով եւ հոգեպէս ուրախանար ու ներքին գոհունակութիւն ապրէր, որ յաջողած էր իր առաքելութեան մէջ, յաջողած էր Աստուծոյ Գառնուկին ճամբան բանալ. եւ որպէսզի, Աստուծոյ հրամանով հրապարակէն քաշուելէ առաջ՝ իր վերջին վկայութիւնը տար Գառնուկին մասին:

5) Յովհան Ոսկեբերան կ'ըսէ, թէ Յիսուսի աշակերտներուն կատարած մկրտութիւնը բանով մը տարբեր չէր Յովհաննէսի կատարած մկրտութեանէն. երկուքն ալ առանց Սուրբ Հոգիին կը կատարուէին. եւ երկու մկրտութեանց ալ նպատակը՝ մարդիկը Յիսուսի առաջնորդելն էր:

6) «Ասիկա կը պատահէր Յովհաննէսի բանտարկութենէն առաջ»: Այս վըկայութիւնը ցոյց կու տայ, թէ Յովհաննէս երբեք դադար չունեցաւ բանտարկութենէն առաջ. գործեց մինչեւ որ բանտ նետուեցաւ: Ան այլեւս կրնար Պօղոս առաքելի նման ըսել. «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինձի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինձի պիտի տայ դատաստանի օրը» (Բ.Տմ 4.7-8):

«Յովհաննէսի աշակերտներէն ոմանք Հրեայի մը հետ սկսան վիճարանիլ՝ մաքրութեան վերաբերող ծէսերու մասին: Այդ աշակերտները Յովհաննէսին եկան եւ ըսին. "Վարդապետ, ան որ քեզի հետ էր Յորդանան գետին միւս կողմը եւ որուն մասին վկայութիւն տուիր, ահաւասիկ ինք ալ կը մկրտէ, ու բոլորն ալ իրեն կ'երթան"» (ՅԿ 3.25-26):

1) «Ծէսերու»: Այս բառը Յունարէն բնագիրին մէջ չկայ, ուստի ակնարկութիւնը չի կրնար ըլլալ Հրեաներու աւանդութեանց (Օրինակ՝ ձեռքերու լուացումին Մտ 15.2), կամ կենդանական գոհերու արիւնին, որոնք ծիսականորէն միայն կը մաքրէին մարդը (Եբր 9.13): Յունարէնին մէջ սոսկ «մաքրութիւն» բառը ունինք: Խօսքը ի՞նչ մաքրութեան մասին է. խօսքը Յիսուսի ու Յովհաննէսի աշակերտներուն մկրտութեան բերած մաքրութեան մասին է:

2) «Յովհաննէսի աշակերտները նկատեցին թէ Յիսուս եւ իր աշակերտները կը մկրտէին մարդիկը, եւ մարդիկ անոնց կ'երթային: Անոնք նախանձեցան, եւ սկսան վիճարանիլ Յիսուսի աշակերտներուն ձեռքով մկրտուողներուն հետ, կարծէք ցոյց տալու համար անոնց՝ թէ իրենց կատարած մկրտութիւնը աւելի լաւ էր քան Յիսուսի աշակերտներուն կատարած մկրտութիւնը: Մէկ կողմ առին մէկ հոգի եւ ջանացին համոզել զինք թէ իրենց կատարած մկրտութիւնը աւելի լաւ էր (ու աւելի լաւ կը մաքրէր), բայց չյաջողեցան: Յովհաննէսի աշակերտները իրենք էին որ յարձակեցան (Յիսուսի վրայ)...: Փաստօրէն, իրենք էին որ մաքրութեան վերաբերեալ վիճարանեցան Հրեայի մը հետ, եւ ոչ թէ Հրեան՝ իրենց հետ» (Յովհան Ոսկեբերան):

3) «Յովհաննէս կը մկրտէր, եւ Յիսուս կը մկրտէր: Յովհաննէսի հետեւորդները կը շարժէին ու կը վազէին դէպի Յիսուսը...: Անոնք որոնք եկան Յովհաննէսի մօտ՝ Յովհաննէս զանոնք դրկեց ու յանձնեց Յիսուսին, որպէսզի անկէ մկրտուին, մինչդեռ անոնք որոնք եկան Յիսուսի մօտ՝ Յիսուս զանոնք չդրկեց Յովհաննէսի մօտ...: Այս երեւոյթէն բարկացան Յովհաննէսի աշակերտները եւ սկսան վիճարանիլ Հրեաներուն հետ: Հրեաները կ'երթային Յիսուսի մօտ, որովհետեւ անոնք հասկցան թէ Յիսուս աւելի մեծ էր, ուստի՝ անո՛ր մկրտութեան պէտք էր դիմէին: Յովհաննէսի աշակերտները եւս հասկըցան ասիկա, հակառակ ասոր, անոնք եկան Յովհաննէսի մօտ, որպէսզի ինք լուծէր այս հարցը» (*Օգոստինոս*):

4) «Վարդապէ՛տ, ան որ քեզի հետ էր Յորդանան գետին միւս կողմը...»: *Այս հաստատումին վրայ հիմնուելով, կարգ մը մեկնիչներ դիտել կու տան թէ Յովհաննէսի աշակերտները յարգալից կերպով մօտեցան իրենց ուսուցիչին՝ երբ զինք «Վարդապետ» կոչեցին, եւ անարգալից կերպով Յիսուսին՝ երբ անոր համար ըսին՝ «ան որ քեզի հետ էր»: Նոյնիսկ Յիսուսի անունը չտուին: Անոնք կը խորհէին թէ Յիսուսի ըրածը գոռոզութիւն էր, քանի մկրտուեցաւ Յովհաննէսի ձեռքով եւ ստացաւ անոր վկայութիւնը, իսկ հիմա անջատաբար կը գործէ:*

5) «Ան որ քեզի հետ էր Յորդանան գետին միւս կողմը եւ որուն մասին վկայութիւն տուիր»: «Այս բաներով, Յովհաննէսի աշակերտները կարծէք անոր կ'ըսէին.– "Ան՝ որ աշակերտի կարգ ունէր, եւ ան՝ որ ո՛չ մէկ բանով մեզմէ աւելի է, ահա ինքզինք անջատեց քեզմէ ու կը մկրտէ": Այս խօսքով կարծէք կը փորձէին նախանձով գրգռել Յովհաննէսը: Եւ զինք աւելիով գրգռուելու համար, անոր ըսին.– "Բոլորն ալ իրեն կ'երթան": Իրենց այս խօսքերը ցոյց կու տան, թէ իրենք աւելի լաւ չէին քան այն Հրեաները որոնց հետ կը վիճարանէին: Անոնք տակաւին չէին ձերբազատած իրենց մրցակցողական ոգիէն» (*Յովհան Ոսկեբերան*):

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)*

Բարսեղ Կանաչեան ծնած է Ռոտոսթօ, 1885-ին: 1894-96ի արհաւրալից տարիներուն Կանաչեան ընտանիքը ապաստան կը գտնէ Պուլկարիոյ Սիլվէն քաղաքը, ուր Բարսեղ կը շարունակէ իր ուսումը: Չորս տարի ետք ընտանիքը կը տեղափոխուի մայրաքաղաք Վառնա, ուր ան վանեցի վաճառական Արթին աղա Սարուխանեանի մօտ գրագիր-հաշուապահ կը դառնայ, մինչ Պերլինի արքայական երաժշտանոցի շրջանաւարտ Նաթան պէյ Ամիրխանեան կը դառնայ ջութակի իր առաջին ուսուցիչը: Բարսեղ կը միանայ իր ուսուցիչին երգչախումբին, իբրեւ բամբ երգիչ: Ուսուցիչ եւ աշակերտ կը հիմնեն նուագախումբ: Սակայն, Կանաչեան ընտանիքը դարձեալ կը պանդխտէ, այս անգամ՝ Պուքրէշ, ուր Բարսեղ կը ստիպուի բաւարարուիլ երաժշտագէտ Ժորժ Պոլյուքի երաժշտական դպրոցը յաճախելով, անոր հետ երգելով քաղաքի զանազան եկեղեցիներուն մէջ, եւ ջութակի ու դաշնամուրի դասեր առնելով անկէ: Հոսակ, ան դաշնակ եւ մանտոլին կը դասաւանդէ նոյն դպրոցին մէջ ու կը դառնայ դպրոցի նուագախումբին երկրորդ ջութակը:

1905-ին Բարսեղ կ'անցնի Պուլկարիա: Վառնայի մէջ արդէն աւելի ինքնավստահ, իր ապրուստը կը ջանայ հոգալ նուագով եւ կը միանայ իր ընկերոջ նուագախումբին, կը յօրինէ իր առաջին եղանակը, եւ բարեկամանալով Լեպլեպիճի Հօրհոր աղայի բեմադրիչ Պենյեանին՝ անոր նուագախումբին հետ կը մեկնի Քոսթանցա:

1908-ին, Օսմանեան Սահմանադրութեան հռչակումին, Բարսեղ կու գայ Կ. Պոլիս, եւ ընկերներով կը կազմէ ու կը ղեկավարէ Քնար նուագախումբը, միաժամանակ երաժշտութեան դասեր կ'աւանդէ Ուսումնական Խորհուրդէն իրեն տրուած վկայականով:

Այդ օրերուն է որ Սամաթիոյ մէջ ան կը հանդիպի Կոմիտաս վարդապետին: Սակայն Կոմիտասի համերգին է որ Կանաչեան կ'անդրադառնայ հանճարեղ խմբավարի մը ներկայութեան ու կը միանայ անոր երգչախումբին, իբրեւ երաժշտութեան աշակերտ:

* ՀԱՍԿ-ի նախորդ թիւին մէջ լոյս ընծայեցինք Բարսեղ Կանաչեանի նուիրուած ելոյթի մը արտասանուած խօսքը: Այս թիւին մէջ նոյն նպատակով այլ խօսք մը եւս կը հրատարակենք. (ԽՄԲ.):

Կոմիտասի երազներէն էր ոչ միայն 300աշունչ երգչախումբ կազմելը, այլեւ Կ. Պոլսոյ մէջ հայկական երաժշտանոց հիմնելը, որուն համար ան իր մեծաթիւ երգչախումբէն կ'ընտրէ 16-18 հոգի, որոնք եւս մաղուելով կը վերածուին վեցի՝ Հայկ Սեմերճեան, Միհրան Թումաճանեան, Վարդան Սարգիսեան, Վաղարշակ Սրուանձտեանց, Արտաշէս Սապունճեան եւ Բարսեղ Կանաչեան, որոնք հիմնասիւնները պիտի ըլլային երազեալ այդ երաժշտանոցին: Կանաչեան գէթ մի քանի տարի կը դառնայ երանելի աշակերտը Կոմիտասի:

Երազը կ'աւերուի 1915-ի Եղեռնով: Կոմիտաս կ'աքսորուի, իսկ Կանաչեան կը զօրակոչուի իբրեւ բժիշկի օգնական՝ Սելիմիյէի հիւանդանոցին, միաժամանակ ջուրթակի դասեր կ'աւանդէ իր թուրք հազարապետին: Ապա կարճատեւ կը ծառայէ Գատրգիւղի հիւանդանոցին, հուսկ կ'անցնի ռուսական ճակատ մեկնող Ճաֆէր փաշային բանակը, իբրեւ ավագափող նուագող: Սակայն հարցերը առաւել կը բարդանան, եւ Կանաչեան ճապողջուրի մէջ եօթնամսեայ կեցութենէ ետք կ'աքսորուի Տիգրանակերտ: Հոն կը մնայ երկու տարի, անկէ կը ղրկուի Հայէպ, ուր հասնելէն 20 օր ետք մուտք կը գործեն բրիտանացիք: Հայէպի մէջ ան կը կազմէ երգչախումբ եւ կու տայ երեք համերգ, կը մասնակցի էմիր Տէյսալի ներկայութեամբ կազմակերպուած շքերթին: 18 Փետրուար 1919-էն ետք կ'անցնի Ատանա, դարձեալ խումբ կը կազմէ եւ կու տայ համերգներ: Հոն, սրճարաններուն մէջ կամաւորներու հետ անցուցած ժամանակ, Գէորգ Կառվարենցի հետ տող առ տող ու նուագ կը յօրինէ «Յառաջ Նահատակ»ին:

Կ. Պոլիս կ'անցնի, գինադադար, տուայտանքի ու խարխափումի շրջան մըն է: Կոմիտասեան սաները կը վերագտնեն գիրար, բայց կը կորսնցնեն տարբար Կոմիտասը: 35-ամեայ Կանաչեան կ'առաջարկէ հաւաքական գործունէութեամբ հասութաբեր համերգներ կազմակերպել, իսկ եկամուտին մէկ մասը Կոմիտասի հոգատարութեան տրամադրել, մնացեալը՝ իրենց ուսումնառութեան ֆոնտին: Անոնք կը կազմեն 300աշունչ երգչախումբ, կու տան համերգներ, կը հրատարակեն երգարաններ. ոմանք կը մեկնին Կ. Պոլսոյ մօտակայ շրջաններ, իսկ Կանաչեան միաժամանակ կ'անցնի Վառնա, Ֆիլիպէ: Կ. Պոլսոյ մէջ, 26 Յունուար 1920-ին, սաները կու տան մեծ համերգ մը՝ 250 երկսեռ երգիչներու մասնակցութեամբ, ապա երկրորդ մը՝ 18 Ապրիլին, եւ յետոյ՝ Հոկտեմբերին, իսկ հրաժեշտի հանդէսը՝ 31 Հոկտեմբեր 1920-ին եւ 25 Նոյեմբերին կը մեկնին Փարիզ, հասոյթովը իրենց կատարած երաժշտական ձեռնարկներուն:

Փարիզ՝ Կանաչեան տարի մը կը հետեւի Բընէ Լը Նորմանի երաժշտական դասընթացներուն, սակայն նիւթականի անբաւարարութիւնը, ներքին խռովքը, տարակարծութիւնները կը տարտղնեն կոմիտասեան սաները: Այնուհետեւ, ան կ'անցնի Եգիպտոս՝ Դեկտեմբեր 1921-ին, ուր կը մնայ մինչեւ 1923, ապա կ'անցնի Հայէպ, ուր կ'ամուսնանայ 4 Մայիս 1924-ին: 1926-1932 Կանաչեան կը պաշտօնավարէ Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Կիպրոսի մէջ Կանաչեան կը դիմազրաւէ նոր դառնանուշ տարիներ. հոն

կը ծնին իր երկու դուստրերը՝ Սեդան (1927-ին) ու Այտան (1929): Հոն կը մահանայ Քնարը՝ իր առաջին կինը: Կանաչեան կը վերականգնէ հին համարումը Գահիրէի իր երգչախումբի անդամներէն Քրիստինէ Գալֆայեանին հանդէպ ու Գահիրէի մէջ, 1931-ին կը կնքէ իր երկրորդ ամուսնութիւնը: 1932-ին Կանաչեան երիտասարդ ընտանիքը կ'անցնի Եգիպտոս, ուր կեցութեան արտօնութեան դժուարութիւնը բախտաբեր կ'ըլլայ լիբանանահայութեան:

Թափառական Կանաչեան 1933-ին կը հաստատուի Պէյրուտ, հոս կը ծնի իր երրորդ դուստրը՝ Ռիթան, 1934-ին: Կանաչեան կը դասաւանդէ Ս. Նշանի, Ճեմարանի եւ Հռիփսիմեանցի մէջ: Կը կայունանայ Կանաչեանի կեանքը եւ ան կը յառաջացնէ երգչախումբ, որ նոյն տարին իսկ համերգ կու տայ: 1936-ին, ի տես իր նուիրումին եւ արդիւնքներուն, խումբ մը գիտակից երգչախումբայիններ կը հիմնեն Գուսան Երաժշտասէր Միութիւնը, աջակցելու Կանաչեանի երաժշտական գործունէութեան եւ անկէ վերցնելու վարչական ծանրը բեռը: Յիրաւի, Կանաչեան նորովի կը ծաղկի Պէյրուտի մէջ: 1933-էն սկսեալ առանց բացառութեան իր ամէնամեայ համերգները ի՞նչ էին արդեօք. գուցէ երախտագիտութի՞ւն, կարօ՞տ իր Կոմիտասին, թերեւս պատգամ՝ միւսիկոնոլ հայութեան, թերեւս ալ բոտն երաժշտական ընկերակցութի՞ւն Միջերկրականի արեւելեան փերուն վրայ վերընձիւղող հայութեան կեանքի արշաւին:

Կանաչեան եւ իր Գուսանը համերգներ կը հրամցնեն պէյրուտահայութեան եւ ոչ միայն, այլեւ Թրիփոլի, Ջահլէի, Այնճարի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Քեսապի մէջ: Կանաչեան նոյնիսկ իմբավարութեան կը հրաւիրուի Կ. Պոլիս, երկու անգամ, միամեայ դրութեամբ:

Կանաչեանի առողջական առաջին ցնցումը տեղի կ'ունենայ 1945-ին, երբ կտրուկ կը տկարանայ իր տեսողութիւնը, սակայն կոմիտասեան սանը չ'ընկրկիր, աջակցութեամբ իր գուսանականներուն տիտանը կը շարունակէ իմբավարել, նաեւ՝ ստեղծագործել մինչեւ 1961, որմէ ետք կը հաստատուի Պաղտատ՝ իր կրտսեր դստեր մօտ, ձմեռելու: Հոն կու տայ երկու համերգ, իսկ ամառները կարօտաբաղձ կը վերադառնայ Պէյրուտ:

1947-ին կը նշուի Կանաչեանի երաժշտական գործունէութեան քառասնամեակը Հալէպի, Պէյրուտի եւ Կիպրոսի մէջ, միաժամանակ պրակ առ պրակ կը հրատարակուին Կանաչեանի երգչախումբային յօրինումները:

1955-ին ան կ'արժանանայ Լիբանանի Մայրիներու Ա. Կարգի շքանշանին, իսկ իր մահկանացուն կը կնքէ 21 Մայիս 1967-ին:

Ահա նախաեղեւնեան ծնունդ մարդ մը, որ աւելի քան երեսնամեակ մը արհաւիրակի տարիներ ապրելէ ետք, վերարտադրեց ինքզինք եւ կեանքի սկզբնական տարիներու իր կսկիծը վերածեց երաժշտութեան, երաժշտականացուց իր տարագրեալի, կորուսեալի կեանքը եւ հրամցուց մեզի:

Յարգանք իր մեծ տքնանքի փառահեղ արդիւնքին:

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

**Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Ծնած է 27 Օգոստոս 1931-ին, Քեսապ (Սուրիա): Աւագանի անունն է Նշան: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Վարժարանին մէջ: Պատանի տարիքին իսկ, ան զատորոշուած է իր դասընկերներէն ուշիմութեամբ եւ աշխատասիրութեամբ: Հոկտեմբեր 1946-ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, Անթիլիաս:

Դպրեվանքի ժառանգաւորաց բաժնի քառամեայ շրջանը աւարտելէ ետք, 29 Մայիս 1949-ին Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Դերենիկ Եպս. Փօլատեանի: Այդ տարիներէն սկսեալ աշխատակցած է Կաթողիկոսութեան ՀԱՍԿ ամսագրին: Իսկ դպրեվանքի Ընծայարանի բաժնի եռամեայ շրջանի աւարտին, 28 Սեպտեմբեր 1952-ին, Կոստակրօն Եկեղեցական ձեռնադրուած է, ձեռամբ Տ. Դերենիկ Եպս. Փօլատեանի, եւ վերակոչուած՝ ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱՅ:

1952-1956 ուսուցչական եւ ՀԱՍԿ-ի խմբագրի պաշտօնը վարած է Կաթողիկոսարանէն ներս, միանգամայն ստանձնելով դպրեվանքի տեսուչի օգնականի՝ հսկիչի պաշտօնը: Այդ տարիներուն ինքնաշխատութեամբ հմտացած է օտար լեզուներու մէջ, միաժամանակ մօտիկ հետաքրքրութիւն ցուցաբերելով միջ եկեղեցական շարժումներուն նկատմամբ եւ պատրաստելով իր վարդապետական աւարտաճառը:

5 Յունիս 1955-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է, ձեռամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Չարեհ Եպս. Փայասլեանի, աւարտաճառ ներկայացնելով «Հայաստանեայց Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը ըստ Հայ Շարականներու» նիւթը:

1952-1956 տարիներուն դպրեվանքի հսկիչի իր պաշտօնին եւ ՀԱՍԿ-ի խմբագրութեան առընթեր դասաւանդած է ՀԲԸՄ-ի Պէյրութի Դարուհի Յակոբեան Երկրորդական Վարժարանին մէջ: Ան սիրով ընդառնուած է պէյ-

րուժահայ մշակութային միութիւններու հրաւերներուն, դասախօսելով այլազան նիւթերու շուրջ:

1956-ին, **Զարեհ Ա. Փայասլեան Կաթողիկոսի ընտրութեան փոթորկալոյց օրերուն**, երբ կարգ մը միաբաններ լքեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, փոքրաթիւ միաբան հայրերով ստանձնեցին Կիլիկիոյ Կաթողիկոսարանի վարչական եւ վանական պաշտօնները, որոնց մէջ ծանր բաժին ստանձնած էր Գարեգին Վարդապետ: Ան Զարեհ Վեհափառի աջակիցներէն մին եղած է եւ անոր իսկ տնօրինութեամբ, 1956-ին ստանձնած՝ դպրեվանքի տեսչութիւնը եւ դպրեվանքը փոխադրած է Պիքֆայայի բարձունքին գտնուող Կաթողիկոսարանի Ս. Աստուածածին Վանքը:

14 Սեպտեմբեր 1957-ին, Գարեգին Վարդապետ Լոնտոն մեկնած է, Օքսֆորտ Համալսարան: Երկամեայ ուսումնառութենէ ետք, ան աւարտաճառներ կայացուցած է «Քաղկեդոնի Ժողովը եւ Հայոց Եկեղեցին» գիտական ուսումնասիրութիւնը եւ տիրացած՝ B. LITT. (OXON) համալսարանական տիտղոսին:

1960-ին Գարեգին Վարդապետ վերադարձած է Լոնտոնէն եւ դարձեալ ստանձնած՝ դպրեվանքի տեսչութիւնը: Ան արդիւնաւոր գործունէութեամբ արդարացուցած է իր վրայ դրուած յոյսերը, եւ իր տեսչութեան շրջանին հասակ առած են դպրեվանքեան հոյլ մը սերունդներ, որոնք իրենց տեսուչին դաստիարակիչ շունչին եւ տիպար եկեղեցականի վարակող խանդավառութեան ազդեցութեան ներքեւ, կուսակրօն եկեղեցականութեան ուխտ կատարած են եւ խտացուցած Կիլիկեան Միաբանութեան նօսրացած շարքերը:

Դպրեվանքի տեսչութեան շրջանին (1960-1967) եւ յաջորդող տարիներուն Գարեգին Վարդապետ մասնակցած է Միջ-եկեղեցական համագումարներու եւ ժողովներու, արժանապէս ներկայացնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ մօտէն ծանօթացնելով Ս. Աթոռը եւ առհասարակ Հայց. Եկեղեցին՝ քոյր եկեղեցիներու հոգեւոր իշխանութեանց: Խորէն Ա. Կաթողիկոսի ընտրութենէն եւ գահակալութենէն ետք (5 Մայիս 1963), առաւել եւս զարգացած է իր միջ եկեղեցական գործունէութիւնը, որուն շնորհիւ կազմակերպած է Վեհափառ Հայրապետին պատմական շրջապտոյտը Աթենք, Վատիկան, Լիզպոն, Քէնթրպրի, Ժընեւ, Վենետիկ եւ Վիէննա:

Իր անդուլ աշխատանքներուն եւ հայ ու օտար լեզուներով հրատարակած յօդուածներուն շնորհիւ, Գարեգին Վարդապետ իրաւամբ նկատուած է Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ «էքիւմէնիք» շարժումի կերտիչներէն մէկը:

1962-ի Օգոստոսին Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պաշտօնապէս անդամակցած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Ուփսալայի Համաժողովին (1968) ընտրուած է անդամ ԵՀԽ-ի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն: Իսկ Նայրոպիի Համաժողովին (1975) ընտրուած է ԵՀԽ-ի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն փոխ ատենապետ:

Իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի ղէտ, մասնակցած է Ատիս-Ապապայի 1965-ի Համագումարին, Վատիկանի Բ. Տիեզերական Ժողովին

1966-ին, Լամպերթի 1968-ի Համագումարին, եւ այս բարեպատեհ առիթներով ան առանձնապէս տեսակցած է ժողովական հայրերու եւ քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներու հետ, անոնց ծանօթացնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեսակէտները՝ կրօնական, աստուածաբանական եւ պատմական բազմաթիւ հարցերու շուրջ:

Իր կատարած բազմաբեղուն աշխատանքներուն որպէս վարձատրութիւն 16 Յունիս 1963-ին, Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն շնորհուած է իրեն, ձեռամբ Խորէն Ա. Կաթողիկոսի, իսկ Եպիսկոպոսական Ձեռնադրութիւն եւ Օծում ստացած է 19 Յունուար 1964-ին, նոյնպէս ձեռամբ Խորէն Ա. Կաթողիկոսի:

Շուրջ երեսուն տարի ուսուցչական, տեսչական, ՀԱՍԿ պաշտօնաթերթի խմբագրման եւ Դրան Եպիսկոպոսութեան իր թանկագին ժամերը տրամադրելէ ետք իր դիմաց այս անգամ բացուած է աշխատանքային նոր հորիզոն մը, ժողովրդանուէր վարչական աշխատանքը:

Ան 24 Փետրուար 1971-ին կոչուած է Իսֆահանի (Պարսկաստան) Թեմին Կաթողիկոսական Փոխանորդի պաշտօնին, ապա շուտով Առաջնորդը ընտրուած՝ պատմական այս թեմին:

Երկուքուկէս տարի ան հովուած է իրեն վստահուած այս թեմը: Այդ կարճ ժամանակաշրջանին իսկ իրագործած է յիշատակելի գործեր: Իր օրով աւարտած եւ կազմակերպուած է Ս. Ամենափրկչեան վանքի թանգարանի գեղակերտ շէնքը, տպարանի արդիականացումը, մատենադարանի նորոգութիւնն ու դասաւորումը, երիտասարդաց կեդրոնի բացումը եւ ծերանոցի կառուցումը: Վարչական այս իրագործումներուն առընթեր, ան շարունակած է նաեւ գրական իր բեղուն գործունէութիւնը՝ հրատարակելով զանազան ժողովրդային գրքոյկներ:

21 Յունիս 1973-ին Գարեգին Եպս. Սարգիսեան նշանակուած է Կաթողիկոսական Փոխանորդ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմին, ապա՝ կարճ ժամանակաշրջանի մը մէջ ընտրուած է Առաջնորդ: Ան իր պաշտօնը ստանձնած է 21 Սեպտեմբեր 1973-ին եւ մինչեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին Աթոռակից Կաթողիկոս ընտրուելը ձեռնհասօրէն վարած է այդ ընդարձակ եւ բազմաթիւ կարիքներու կարօտ թեմին համայնքներու հոգեւոր, վարչական, մշակութային եւ յարաբերական աշխատանքները: Այսօր բազմաթիւ նախաձեռնութիւններ կապուած են իր անունին:

Խորէն Ա. Կաթողիկոսի սրտի անհանգստութեան պատճառով եւ իր իսկ հաւանութեամբ եւ առաջարկով՝ 22 Մայիս 1977-ին, տեղի ունեցած Մեծի Տանն Կիլիկիոյ Ընդհ. Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ Աթոռակից Կաթողիկոս ընտրած է Գարեգին Արք. Սարգիսեանը, որուն Օծումը կատարուած է 29 Մայիսին: Խորէն Կաթողիկոսի վախճանումէն ետք (9 Փետրուար 1983) ան ստանձնած է Ս. Աթոռի գահակալի պաշտօնը՝ որպէս Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Անոր գահակալութեան ընթացքին Լիբանանի քաղաքացիական պատե-

րագմը իր ծանր ժամանակաշրջանը կ'անցընէր, ան արիութեամբ դիմագրա-
լած է ճնշող մթնոլորտն ու լիբանանահայութեան վիճակուած ծանր կացու-
թիւնը եւ ամէն ճիգ ի գործ դրած՝ նուազագոյն վնասով դուրս բերելու հա-
յութիւնը եւ հայկական կառոյցները:

Հովուապետական այցելութիւններ տուած է Բերիոյ Թեմին, շրջած՝ բո-
լոր գաղութները Լաթաքիայէն մինչեւ Գամիշլի: Երկրորդ այցելութիւնը
չնորհած է Պարսկաստանի երեք թեմերուն՝ Թեհրանի, Ատրպատականի եւ
Իրանահայկաստանի, մեծ խանդավառութիւն ստեղծելով:

13 Յունիս 1984-ին Փարիզի մէջ հանդիպում ունեցած է Վազգէն Ա. Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսի հետ:

1988-ին մասնակցած է Ռուս եկեղեցւոյ ութը հարիւրամեակի հանդիսու-
թիւններուն:

1989 Փետրուար 3-12ի միջոցին երկու Հայրապետները միասնական այ-
ցելութիւն մը տուած են Նիւ Եորք, նպատակ ունենալով ապահովել հովանա-
ւորութիւնը՝ Հայաստանի երկրաշարժին հետեւանքով քանդուած շրջաննե-
րու վերակառուցման ծրագրին ու համահայկական մակարդակի տարուելիք
աշխատանքներուն:

Նոյն տարին, հրաւերովը Վազգէն Հայրապետի, դարձեալ այցելած է Ս.
Էջմիածին:

1991-ին մասնակցած է Ս. Էջմիածնի Միւռնոսօրհնէքի արարողութեան:

14-16 Մայիս 1992-ին, Հայաստանի Հանրապետութեան նախագահին հրա-
ւերով մասնակցած է Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հոգաբար-
ձուներու անդրանիկ ժողովին:

6-9 Մայիս 1994-ին Ամենայն Հայոց Հայրապետի հրաւերով մեկնած է Ս.
Էջմիածին՝ խորհրդակցելու համար Հայց. Եկեղեցւոյ միւս նուիրապետական
Աթոռներու գահակալներուն հետ, թէ ինչպէ՛ս կարելի է արժեւորել Հայաս-
տանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700-ամեակը հայ
ժողովուրդի կեանքին եւ աշխարհի պատմութեան մէջ:

28 Օգոստոս 1994-ին տիտղր առաքելութեամբ դարձեալ մեկնած է Ս.
Էջմիածին, կատարելու Վերջին Օծումն ու Թաղման կարգը՝ Վազգէն Ա.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

4 Ապրիլ 1995-ին Ս. Էջմիածնի Ազգային Եկեղեցական Ժողովը Մեծի
Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը ընտրած է Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոս, որուն գահակալութեան եկեղեցական հանդիսութիւնը եւ Ուխտա-
գրի ընթերցումը տեղի ունեցած է 9 Ապրիլին:

Առաջին հերթին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աշխատանքը աւելի արդիւ-
նաբերելու եւ ժողովուրդի կեանքին մէջ քրիստոնէական հաւատքն ու աւան-
դութիւնները ամրացնելու նախանձախնդրութեամբ՝ Գարեգին Կաթողիկոս
վերատեսութեան ենթարկած է Հայաստանի թեմական դասաւորումը, եւ հա-
մաձայն Հայաստանի մարզային բաժանմունքներուն հաստատուած են նոր
թեմեր:

Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը եւս վերաշխուժացած է: 80 տարիներու գրաւումէն ետք, 1997-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վերադարձուած է եւ վերաբացուած՝ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի հիմնովին վերանորոգուած շէնքը: Ուսանողներու համար նոր հանրակացարանի շէնքին հիմնադրումը կատարուած է սփիւռքահայ բարերարներու օժանդակութեամբ: Հոգեւոր Ճեմարանի աշակերտութեան թիւը եւս յաւելում արձանագրելով բարձրացած է 120-ի:

Գարեգին Կաթողիկոսի նախաձեռնութեամբ, Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաղեմի մէկ ծրագիրը կեանքի կոչուած է՝ Օշականի մէջ Ս. Մեսրոպ Մաշտոցի նուիրական դամբարանի կողքին, վերակառուցումովը Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան դպրատան, որ այսօր դարձած է գիտական եւ մշակութային կարեւոր կեդրոն:

Գարեգին Վեհափառի հետեւողական աշխատանքին շնորհիւ, Մայր Աթոռի միջ եկեղեցական շարժումը եւս նոր աշխուժութիւն մը արձանագրած է:

Ան իր գահակալութեան տարիներուն պաշտօնական այցելութիւններ տուած է Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալէքսի Բ.-ին (1995), Ռումանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ Պետ Իլիաս Բ. Պատրիարքին (1995), Հռոմի Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ. Պապին (1996), Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարք Բարթողղիմէոս Ա. Արքեպիսկոպոսին (1996), Քէնթըրպրի Արքեպիսկոպոս դոկտ. Ճորճ Քերիին (1997), Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Հոգեւոր պետ Շնոտա Գ. Պատրիարքին (1998): Քանիցս այցելած է նաեւ Ժընեւի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնը՝ թէ՛ նախագահելու եւ թէ՛ մասնակցելու կարեւոր խորհրդաժողովներու եւ համագումարներու:

Վեհափառ Հայրապետը հեղինակ է աստուածաբանական, հայագիտական, փիլիսոփայական, բարոյագիտական եւ գրական բազմաթիւ ուսումնասիրութիւններու եւ յօդուածներու, ինչպէս նաեւ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, պարսկերէն եւ այլ լեզուներով աւելի քան քառասուն հատորներու:

Ան Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատուաւոր Անդամ ընտրուած է: Նաեւ, իր մտաւորական լայն ծանօթութիւններուն եւ գիտական աշխատանքներուն համար արժանացած է աշխարհի շարք մը կրօնական եւ գիտական հաստատութիւններու եւ համալսարաններու Պատուաւոր Դոկտորի կոչման:

Գրական իր բազմաբնոյթ եւ հարուստ ժառանգութենէն անկախ, Գարեգին Վեհափառը թէ՛ Կիլիկիոյ Ս. Աթոռի եւ թէ՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի թեմերուն մէջ բազմաթիւ վանքերու եւ եկեղեցիներու նորոգութեան, նոր եկեղեցիներու կառուցման եւ անոնց օժման նախաձեռնարկ եղած է եւ յատկապէս անմահացուցած է իր անունը՝ Տէր Զօրի Ս. Նահատակաց մատրան եւ շրջակայ համալիրի շինութեան բերելով իր անվերապահ նպաստը թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական: Աւարտին՝

օժեշտով նաեւ մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակը անմահացնող ոգեղինացած եւ խնկաբոյր մեր օրերու նուիրական ուխտատեղին:

1998-ի Ապրիլին նախագահած է ԱՄՆ-ի Հայց. Եկեղեցւոյ թեմերու հիմնադրման 100-ամեակի հանդիսութեանց, որոնք տեղի ունեցան են Նիւ Եորքի, Լոս Անճելըսի եւ ԱՄՆ-ի այլ քաղաքներու մէջ: Այս այցելութեան ընթացքին ան ենթարկուած է բժշկական քննութեանց եւ ի յայտ եկած է իր անողոք հիւանդութիւնը:

Բուժման համար Գարեգին Կաթողիկոս ենթարկուած է երկու յաջորդական եւ ծանր վիրաբուժական գործողութիւններու՝ Նիւ Եորքի մէջ, առաջինը՝ 1998 Հոկտեմբերին եւ երկրորդը՝ 1999 Փետրուարին:

24 Մարտ 1999-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձի ճամբուն վրայ, Վատիկանի մէջ, Հռոմի Պապին հետ միասին կատարած է «Հռոմ-Հայաստան» ցուցահանդէսի բացումը, նուիրուած Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին: Գարեգին Վեհափառի եւ Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրաւերով, Հռոմի Պապը կը պատրաստուէր Հայաստան այցելելու 2-4 Յունիս 1999-ի ընթացքին, սակայն Վեհափառի առողջական վիճակին վատթարացման պատճառով այս այցելութիւնը յետաձգուած է:

29 Յունիս 1999-ին, Չորեքշաբթի երեկոյեան ժամը 5:50-ին, Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, աւանդած է իր հոգին, խոր սուգի մատնելով Հայց. Առաքելական Եկեղեցին, Նուիրապետական Ս. Աթոռները եւ հաւատացեալ հայ ժողովուրդը:

5 Յունիսին տան կարգը կատարուած է վեհարանին մէջ, գլխաւորութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Ներսէս Արք. Պողոսյանի եւ ներկայութեամբ վանաբնակ բոլոր միաբաններուն եւ սգակիր ընտանեկան պարագաներուն: Ապա սգաթափօրը հանդիսաւոր կերպով Վեհափառին դազաղը առաջնորդած է Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցի, ուր կատարուած է Հանգստեան պաշտօն, ի ներկայութեան յուղարկաւորութեան կազմակերպիչ պետական յանձնաժողովի անդամներուն, սփիւռքահայ գործիչներու, մտաւորականներու եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներու:

Նոյն օրը երեկոյեան, մասնակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի եւ Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Պատրիարքներուն՝ Թորգոմ Արք. Մանուկեանի եւ Մեսրոպ Արք. Մովսէֆեանի, Հանգստեան արարողութիւն կատարուած է, ուր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեան կողմէ դամբանախօսած է Կեդրոնական Եւրոպայի Աւստրիոյ եւ Շուէտի Հայրապետական Պատուիրակ Մեսրոպ Արք. Գրիգորեան:

Յունիս 6-ի առաւօտեան դարձեալ Հանգստեան պաշտօն կատարուած է, ներկայութեամբ նուիրապետական Աթոռներու գահակալներուն, ՀՀ նախագահ Ռոպերթ Քոչարեանի, Խորհրդարանի նախագահ Կ. Տէմիրճեանի, վարչապետ Վ. Սարգսեանի եւ պետական այրերու, յորմէ յետէ Վեհի մարմինը

յամրաքայլ ընթացքով եւ ինքնաշարժներու շարանով Ս. Էջմիածին փոխադրուած:

Վերջին Օծման Կարգը տեղի ունեցած է 8 Յուլիսին, յընթացս Ս. Պատարագի: Խօսք առած են Հայց. Եկեղեցւոյ չորս նուիրապետական Աթոռներու հոգեւոր պետերը:

Յաւարտ Ս. Պատարագի, շարականներու երգեցողութեամբ Վեհի մարմինը դուրս բերուած է եկեղեցիէն եւ առաջնորդուած գերեզման, ուր թաղման յուզիչ արարողութիւնը տեղի ունեցած է: Նախքան թաղումը խօսք առած է ՀՀ նախագահ Ռ. Քոչարեան, իր եւ յանուն ՀՀ Իշխանութիւններուն վշտակցութիւնը փոխանցած՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ հանուր հայ ժողովուրդին: Խօսք առած է նաեւ Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիաս Բ., փոխանցելով Վրաց Եկեղեցւոյ եւ ժողովուրդին վշտակցութիւնները: Ապա մարմինը յանձնուած է հողին, իսկ հողին՝ յաւիտենականութեան:

Ստորեւ կը ներկայացնենք Վեհափառ Հայրապետին գրական վաստակը ներկայացնող հայերէն եւ անգլերէն երկերուն ցանկը, որոնք իր վախճանումէն ետք, որպէս մատենաշար, 17 հատորներով լոյս ընծայուած են:

- 1.– Karekin I: In His Own Words.
- 2.– Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը Ըստ Հայ Շարականներու:
- 3.– Հայ Եկեղեցական–Մշակութային Դէմքեր եւ Նիւթեր:
- 4.– Building Bridges: The Ecumenical Journey of Karekin I.
- 5.– Աստուածաբանութիւն:
- 6.– The Council of Chalcedon and the Armenian Church.
- 7.– Հատընտիր Կոնդակներ եւ Հայրապետական Պատգամներ:
- 8.– Զրոյցներ Ճիովաննի Կուսյթայի Հետ – Մարդուն Կեանքը՝ Հանդիպում մը Երկնքի եւ Երկրի Միջեւ:
- 9.– Karekin I: The Gift of Faith Tenth Anniversary Memorial.
- 10.– Հող, Մարդ եւ Գիր – Հայ Մարդը Հայ Գիրքին Դիմաց... – Հրաշք Տաթեւի Թափօր Լեռան Լանջերուն – Խոր Վիրապ «Խորհուրդ Խորհին»...:
- 11.– Խորհէ եւ Մտիր – Ծանիր գրեզ:
- 12.– Քաղկեդոնի Ժողովը եւ Հայոց Եկեղեցին:
- 13.– Հայաստանեայց Եկեղեցին իր «Ծառայական Կերպ»ին մէջ. – Անցեալը անցած չէ... Ուխտագնացութիւն ի Տէր Զօր – Խաչի ձանապարհ:
- 14.– Faith, Culture, Nation Selected Writings.
- 15.– Ան-Ժամանակը Ժամանակին մէջ – «Ես Յաղթեցի Աշխարհին...», Յարութիւն եւ Հայութիւն:
- 16.– Between Heaven and Earth: A Conversation with His Holiness Karekin I.
- 17.– Կեանքը ի Հաղորդութիւն Ընդ Աստուծոյ Տօնական Խոհեր եւ Քարոզներ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ***

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Արեւմտեան փիլիսոփայութեան աշխարհահռչակ դէմքերէն, գերման փիլիսոփայ **Իմմանուէլ Կանտ** (Immanuel Kant), փիլիսոփայութեան բնորոշումը կը կատարէր գլխաւոր չորս հարցադրումներով, որոնք կու գան փիլիսոփայութեան չորս տարբեր ոլորտներէ. –

- 1.– Ի՞նչ կրնամ գիտնալ (բնագանցական ոլորտ – Metaphysics),
- 2.– Ի՞նչ պէտք է ընեմ (բարոյագիտական ոլորտ – Ethics),
- 3.– Ի՞նչ կրնամ յուսալ (կրօնական ոլորտ – Religion) եւ
- 4.– Ի՞նչ է մարդը (մարդաբանական ոլորտ – Anthropology):

Այս իմաստով բարոյագիտութիւնը կը պատասխանէ երկրորդ հարցումին, «Ի՞նչ պէտք է ընեմ»ին: Բարոյագիտութիւնը (էթիկա, յուն.՝ êthikê, գերմ.՝ Ethik, անգլ.՝ Ethics) փիլիսոփայութեան ա՛յն ճիւղն է, որ կը զբաղի մարդոց վարմունքով, մանաւանդ այդ վարմունքի բարի նպատակադրումով եւ անոր արդարացումով ու հիմնաւորումով, ինչպէս նաեւ անոր հիմքերու եւ հետեւանքներու գնահատումով: Բարոյագիտութիւնը, որպէս փիլիսոփայական ճիւղ, կը փնտռէ պատասխանները ա՛յն հարցումին, թէ որոշ կացութեան մը մէջ ի՞նչ վարմունք պէտք է ունենալ. ահա այդ հարցումն է, որ Կանտ ամփոփած է պարզապէս «Ի՞նչ պէտք է ընեմ» հարցադրումին մէջ:

Վերոյիշեալ հարցադրման պատասխանները բարոյական կիրառելի կանոններ (սկզբունքներ, օրինակներ, նորմեր) են, որոնք կը թելադրեն որոշ վարմունքի (կամ վարուելակերպի) պատուէրներ, արտօնութիւններ կամ արգելքներ: Իսկ այդ բարոյական կիրառելի կանոններու «բոլորին կողմէ ընդունուած» ըլլալու հանգամանքը եւ անկէ յառաջացած հարցերը, մէկ խօսքով բարոյագիտութեան հիմնաւորման քննարկումն ու անկէ յառաջացած բանավէճերը ու լեզուական հարցերը կը կազմեն փիլիսոփայական բարոյա-

* Նիւթը, մեծ մասամբ քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, 2021:

գիտութեան կարեւոր մէկ բաժինը, որ կը կոչուի՝ **մետա-բարոյագիտութիւն** (Meta-Ethics):

Իսկ «**Բարոյականութիւն**»ը (գերմ.՝ Moral, Moralität, լատ.՝ mores, անգլ.՝ Morals, Morality) բարոյագիտութեան ուսումնասիրութեան առարկան է: Ան դրութիւնն է բարոյական արժէքներու եւ կանոններու (նորմերու) եւ անոնց իրականացումը՝ առօրեայ կեանքին մէջ. ան սերտօրէն առնչուած է վարմունքին ու վարուելակերպին հետ եւ կ'եզրակացուի «բարոյական վարմունք» կամ «բարոյական վարուելակերպ» բացատրութիւններով: Վարմունքը կամ վարուելակերպը կարելի է դատել առարկայական տեսանկիւնէն եւ գնահատել՝ որպէս նիշդ կամ սխալ: Վարմունքը կամ վարուելակերպը կարելի է դատել նաեւ բարոյական տեսանկիւնէն եւ գնահատել՝ որպէս լաւ ու բարի կամ վատ ու չար:

Կանտ, տեսական փիլիսոփայութեան հանդէպ ունեցած իր հետաքրքրութեան չափ հետաքրքրուած էր նաեւ գործնական փիլիսոփայութեամբ, որ նոյնինքն բարոյագիտութիւնն է: Այս առնչութեամբ գրած իր գլխաւոր երկերը երեք են. ստորեւ, իրենց ժամանակագրական կարգով.՝

1. «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան»

Հրատարակուած՝ 1785 թ., գերմ. բնագիր՝ "Grundlegung zur Metaphysik der Sitten", անգլ.՝ "Groundwork of the metaphysics of morals", կրճատուած՝ **ՀԲԲ** (գերմ.՝ **GMS**): Փիլիսոփայական բարոյագիտութեան առաջին, 92 էջոց գիրքը, որ կարճ նախաբանէ մը ետք, կը բովանդակէ հետեւեալ երեք մասերը.՝

- ա) Անցում, ընդհանուր բարոյականութեան բանական իմացութենէն՝ դէպի փիլիսոփայականը,
- բ) Անցում, հանրամատչելի բարոյական փիլիսոփայութենէն՝ դէպի բարոյականութեան բնագանցութիւնը (մետաֆիզիկական) եւ
- գ) Վերջին հանգրուանը, անցում բարոյականութեան բնագանցութենէն՝ քննադատութիւն զուտ գործնական բանականութեան:

2. «Քննադատութիւն՝ գործնական բանականութեան»

Հրատարակուած՝ 1788 թ., գերմ. բնագիր՝ "Kritik der praktischen Vernunft", անգլ.՝ "Critique of practical reason", կրճատուած՝ **ՔԳԲ** (գերմ.՝ **KpV**): Նախկին 92 էջոց երկը այստեղ մասամբ կը կրկնուի եւ կ'ամբողջացուի ու կը դառնայ 200 էջոց գիրք մը, որ բաղադատաբար երկար նախաբանէ մը եւ կարճ ներածութենէ մը ետք, կը բովանդակէ երկու գլխաւոր մասեր.՝

- ա) **Տարրական ուսմունքը** (Elementarlehre), իր երկու ենթաբաժիններով՝ Analytik եւ Dialektik, եւ
- բ) **Մեթոդական ուսմունքը** (Methodenlehre):

3. «Բարոյականութեան բնագանցութիւնը»

Հրատարակուած՝ 1797 թ., գերմ. բնագիր՝ "die Metaphysik der Sitten", անգլ.՝ "The Metaphysics of morals", կրճատուած՝ ԲԲ (գերմ.՝ MdS): Կանտի հասուն տարիքի այս փիլիսոփայական բարոյագիտութեան 330 էջնոց գիրքը բաժնուած է երկու գլխաւոր մասերու.–

ա) **Իրաւական ուսմունքը** (գերմ.՝ Rechtslehre, անգլ.՝ Doctrine of Right), որ միայն մասամբ պիտի քննարկուի այս աշխատասիրութեան մէջ. եւ

բ) **Առաքինութեան ուսմունքը** (գերմ.՝ Tugendlehre, անգլ.՝ Doctrine of Virtue), որ այս աշխատասիրութեան մէջ իւրայատուկ տեղ պիտի ունենայ:

Ասոնց կողքին, բարոյագիտութեան հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունին նաեւ Կանտի չորս հետեւեալ երկերը.–

4. «Ի՞նչ է լուսաւորութիւնը»

Հրատարակուած՝ 1783 թ., գերմ. բնագիր՝ "Was ist Aufklärung?", անգլ.՝ "What is Enlightenment?", որ որպէս յօդուած հրատարակուած է «Բեռլինեան ամսագիր»ին ("Berlinische Monatsschrift") մէջ: Այստեղ, միայն 9 էջերու մէջ, Կանտ յտակօրէն կը բնորոշէ **լուսաւորութիւնը**, որպէս «մարդու անչափահասութենէն դուրս գալու գործընթացը», անչափահասութիւն մը, որու պատճառը նոյնինքն մարդն է: Լուսաւորութեան նշանաբանը եղած է՝ «Համարձակէ՛ իմանալ» (լատ.՝ "sapere aude"), որու վրայ Կանտ կ'աւելցնէ «սեփական բանականութիւնդ օգտագործելու յանդըգնութիւնը ունեցի՛ր» բացատրութիւնը:

5. «Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ»

Հրատարակուած՝ 1793 թ., գերմ. բնագիր՝ "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft", անգլ.՝ "Religion within the bounds of bare reason", որ չորս առանձնաբար գրուած ու մասամբ հրատարակուած յօդուածներու ամբողջութիւն մըն է, նախաբանով մը ուղեւորուած: Կանտի այս 240 էջնոց երկը, որ փիլիսոփայական ակնարկով կրօնական ուսմունք մըն է, կը նկատուի Կանտի հանրածանօթ երկերէն մէկը եւ շատերու համար թերեւս ամենախնդրայարոյց գրութիւնը:

Ինչպէս «Քրիստոնեական գործնական բանականութեան» երկին մէջ կը պնդէ, այստեղ եւս Կանտ՝ ազատութեան, հոգիի անմահութեան եւ Աստուծոյ երեք գաղափարները անապացուցելի, բայց անհրաժեշտ նախադրութիւններ (Postulate) կը նկատէ:

6. «Մարդասիրութենէ մղեալ ստախօսութեան ենթադրեալ իրաւունքի մը մասին»

Հրատարակուած՝ 1797 թ., գերմ. բնագիր՝ "Über ein vermeintes Recht aus Menschenliebe zu lügen", անգլ.՝ "On the supposed right to lie because of

philanthropic concerns": Այս միայն 7 էջնոց փոքր պրակը հրատարակուած է առանձնաբար, «Բարոյականութեան բնագանցութիւնը» երկին հետ, նոյն տարին ու կարծես շարունակութիւնը կը կազմէ անոր երկրորդ «Առաքինութեան ուսմունքը» բաժնին: Այստեղ կանտ կը պնդէ, որ նոյնիսկ եթէ կեանքին սպառնացող վտանգ մը կայ, մարդ իրաւունք չունի ստելու... եւ

7. «Մարդաբանութիւն – գործնական տեսակէտ»

Հրատարակուած՝ 1798 թ., գերմ. բնագիր՝ "Anthropologie – in pragmatischer Hinsicht", անգլ.՝ "Anthropology – from a pragmatic point of view", որ կանտի անձամբ հրատարակած վերջին երկն է: Այս 295 էջնոց գրքին մէջ կը ներկայացուի «մարդ»-ու նկարագիրը եւ իր մտածելու, զգալու եւ վարուելու կարողութիւնները, գործնական տեսանկիւնէն դիտուած եւ վերջին հաշուով թէ մարդ ընդհանրապէս ի՞նչ կրնայ ընել եւ ի՞նչ պէտք է ընէ: Մարդաբանութեան գործնական այս տեսակէտը անշուշտ կը տարբերի մարդաբանութեան բնախօսական (Physiology) տեսակէտէն:

Յիշատակելի էտք կանտի այն երկերը, որոնք բարոյագիտութեան հետ առնչուած են, այժմ տեսնենք թէ այդ երկերուն մէջ ի՞նչ նոր եւ իւրայատուկ գաղափարներ կան, համեմատելով բարոյագիտութեան նախականտեան իրավիճակին:

Աւելորդ է ըսել, որ կանտի իւրայատուկ գաղափարները դեռ այժմէական են ու քննարկումի նիւթ հայթայթած են ու տակաւին կը հայթայթեն, աւելի քան երկու դարերէ ի վեր:

Փիլիսոփայական բարոյագիտութեան ոլորտին մէջ, գոյութիւն ունին, մարդկային բանականութեան սկզբունքին վրայ կառուցուած զանազան դրպրոցներ եւ տեսութիւններ: Այս ուղղութեամբ առաջին փորձը կատարուած է հնադարեան ժամանակներուն, երբ դասական յոյն փիլիսոփայ Արիստոտէլ¹ (Aristotle) ազդուելով իր ուսուցիչ Պլատոնէն² (Plato), կը մշակէր բարոյագի-

¹ Արիստոտէլ (Aristotle, յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.) – յոյն դասական բարոյագէտ-փիլիսոփայ, աշակերտ՝ Պլատոնի: Համապարփակ գիտնական. Հիմնադիր կարգ մը գիտական ճիւղերու, ինչպէս տրամաբանութիւն եւ բարոյագիտութիւն: Կը նկատուի փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Բարոյագիտութեան առընչուած գլխաւոր երկերն են՝ "êthiká eudaimonía" («Երջանկութեան բարոյագիտութիւն») եւ "êthiká Nikomácheia" («Նիկոմաքոսի բարոյագիտութիւն»):

² Պլատոն (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) – յոյն դասական բարոյագէտ-փիլիսոփայ, աշակերտ՝ Սոկրատէսի: Հիմնադիր՝ "Akadêmía" («Ակադեմիա») դպրոցին, որ տեսած է 9 դար եւ ուսուցիչ՝ Արիստոտէլի: Հեղինակ՝ «գաղափարի տեսութեան» եւ «քաղաքական տեսութեան»: Կը նկատուի փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "Políteia" («Պետութիւն»), "Philébos" («Փիլեբոս») եւ "Kríton" («Կրիտոն»):

տական տեսութեան սկզբունք մը, որ հիմնուած է առաքինութիւններու³ (Virtue) ու երջանկութեան⁴ (Happiness) վրայ:

Այս իմաստով, կարելի է խօսիլ առաքինութիւններու (Virtue) բարոյագիտութեան մը կամ երջանկապաշտական (յուն.՝ eudaimonía) բարոյագիտութեան մը մասին, որ ինքնին նպատակաբանական⁵ բարոյագիտութիւն (գերմ.՝ Zweckethik, Teleologische Ethik, անգլ.՝ Teleological Ethics) մըն է:

Երջանկապաշտութեան գաղափարը սակայն, Հին-Յունաստան հասնելէն առաջ, մենք կը հանդիպինք Հին-Հնդկաստանի մէջ, Բուդդայի⁶ (Buddha) մօտ եւ Հին-Չինաստանի մէջ, Կոնֆուցիոսի⁷ (Confucius) մօտ:

³ **Առաքինութիւն** – (յուն.՝ aretê, լատ.՝ virtus, գերմ.՝ Tugend, անգլ.՝ Virtue) հասկացութիւնը, բարոյական դրական յատկանիշ, բարի նկարագիր ու բարոյական արժէք է: Առաքինութեան հականիշն է՝ մոլութիւնը (յուն.՝ kakia, լատ.՝ vitium, անգլ.՝ Vice, գերմ.՝ Laster) կամ կրօնական հասկացողութեամբ՝ մեղքը (յուն.՝ hamartía, լատ.՝ peccatum, անգլ.՝ Sin, գերմ.՝ Sünde): Պատոնի հաստատած չորս գլխաւոր առաքինութիւններն են. – իմաստութիւնը, արիութիւնը, չափաւորութիւնը եւ արդարութիւնը: Իսկ Արիստոտել, առաքինութիւնները կը բաժնէր երկու խումբի՝ տեսական (կամ տրամաբանական) եւ բարոյական (կամ նկարագրային):

Առաքինութիւններու վրայ հիմնուած բարոյագիտական տեսութիւնը կը կոչուի *Առաքինութեան բարոյագիտութիւն* (անգլ.՝ Virtue Ethics, գերմ.՝ Tugendethik):

⁴ **Երջանկութիւն** – (յուն.՝ eudaimonía, լատ.՝ felicitas, գերմ.՝ Glück, անգլ.՝ Happiness) հասկացութիւնը, ա՛յն զգացումն է, ուր մարդ ինքզինք ամբողջական գոհացումի ու բաւարարութեան ներդաշնակ իրավիճակի մը մէջ կը զգայ: Գերագոյն երջանկութիւնը կը կոչուի *երանկութիւն* (յուն.՝ eutychía, անգլ.՝ Beatitude, լատ.՝ beatitudo, գերմ.՝ Glückseligkeit):

Նո՛յնն է պարագան՝ քրիստոնէական հասկացողութեամբ:

⁵ **Նպատակաբանութիւն** – (յուն. եւ լատ.՝ teleologia, գերմ.՝ Teleologie, անգլ.՝ Teleology) հասկացութիւնը, որպէս աշխարհահայեացք, կը հիմնուի անդրանցական (Transcendental) ըմբռնումով արտաքին ու ներյատուկ (Immanent) ըմբռնումով ներքին *վերջին նպատակներուն* (լատ.՝ causa finalis, գերմ.՝ Zweckursache, անգլ.՝ Final Cause) վրայ:

Իսկ **նպատակը**՝ ա՛յն մտադրութիւնն է, որով մարդ կը ձգտի՝ բանի մը հասնիլ. ապա կը նշանակէ՝ վախճան, թիրախ, փափաք ու նպատակակէտ:

⁶ **Բուդդա** (Buddha, 563 – 483 մ.թ.ա.) – բուն անունով Սիդհարթա Գաուտամա (Siddhartha Gautama), իշխանական տոհմէ ծագումով հնդիկ կրօնափիլիսոփայ. հիմնադիր՝ արեւելեան կրօնափիլիսոփայական ուղղութեան մը, որ իր անունով կը կոչուի՝ Բուդդայականութիւն (Buddhism), որ նաեւ Արեւմուտքի մէջ տարածուած արեւելեան կրօնափիլիսոփայութիւն մըն է:

«Բուդդա»ն տիտղոս է, որ Սանսկրիտերէն կը նշանակէ՝ «զարթնածը»:

⁷ **Կոնֆուցիոս** (Confucius, 551 – 479 մ.թ.ա.) – չին կրօնափիլիսոփայ. հիմնադիր՝ արեւելեան կրօնափիլիսոփայական ուղղութեան մը, որ իր անունով կը կոչուի՝ Կոնֆուցիականութիւն (Confucianism): Չինարէն "Kǒng Fū-zǐ", որ կը նշանակէ՝ «ուսուցիչ Կոնգ»: Սովորատեսի նման, անձամբ գիրքեր չէ գրած, բայց իր աշակերտները գրի առած են մեծ ուսուցչի խօսքերը:

Նոր Դարաշրջանին (18-րդ դար), անգլիացի փիլիսոփայ **Բենթամ**⁸ (Bentham), կը մշակէ բարոյագիտական նոր տեսութիւն մը, որ հիմնուած է ընկերային կամ հաւաքական օգուտին վրայ: Այս իմաստով, կարելի է խօսիլ **օգտապաշտական** (Utilitarian) բարոյագիտութեան մը մասին, որ եւս նպատակաբանական բարոյագիտութիւն մըն է:

Հետագային եւ մինչեւ մեր օրերը, օգտապաշտութեան բարոյագիտութեան ուղղութիւնը ունեցաւ այլ հետեւորդներ եւս, մեծամասնութեամբ՝ Անգլիայէն, Աւստրալիայէն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներէն:

Օգտապաշտութիւնը⁹ (Utilitarianism), ժամանակի ընթացքին, կրեց զանազան փոփոխութիւններ եւ յառաջացան զանազան հոսանքներ: Այս պատճառով, սկզբնական դասական օգտապաշտութեան կողքին, զարգացան նաեւ օգտապաշտութեան այլ տարբերակներ:

Գրեթէ միաժամանակ (18-րդ դարուն), գերման փիլիսոփայ **Կանտ** (Kant) կը մշակէ բարոյագիտական այլ, բոլորովին տարբեր տեսութիւն մը, որ գլխաւորաբար հիմնուած է ազատութեան եւ ինքնօրինութեան (Autonomy, յուն.՝ "nomos" = օրէնք) վրայ, ուր անհատական կամքը ինքնիրեն համար բարոյական պարտաւորեցնող կանոններ կը հաստատէ: Այս իմաստով, կարելի է խօսիլ **պարտագիտական** (Deontological) բարոյագիտութեան մը մասին, որ մեր ուսումնասիրութեան գլխաւոր նիւթն է:

Կանտի բարոյագիտութիւնը հիմնովին **պարտագիտական** է, այսինքն՝ ոչ թէ մարդու նպատակները, հակումները, կարիքները, մղումները, զգացումներն ու հետաքրքրութիւնները կ'որոշեն անոր վարմունքը, այլ միայն ու միայն իր մարդկային բանականութենէն բխած պարտաւորութիւնը:

Պարտագիտական հիմք ունի նաեւ Նոր Դարաշրջանին, անգլիացի փիլիսոփայ **Հոբս**¹⁰ (Hobbes) կողմէ վերամշակուած **Պայմանագրային տեսութիւնը** (անգլ.՝ Social Contract, Contractarianism, գերմ.՝ Vertragstheorie), որ

⁸ **Բենթամ** (Jeremy Bentham, 1748 – 1832 թ.) – անգլիացի բարոյագետ-փիլիսոփայ: Հիմնադիր՝ «Օգտապաշտութիւն» (Utilitarianism) փիլիսոփայական ուղղութեան: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Introduction to the Principles of Morals and Legislation" (1780 թ. «Ներածութիւն՝ բարոյականութեան եւ օրէնսդրութեան սկզբունքներուն»):

⁹ **Օգտապաշտութիւն** (Utilitarianism) – բառի հիմքը *օգուտ* (լատ.՝ utilitas, անգլ.՝ Utility, գերմ.՝ Nutzen) եզրոյթն է: Օգուտ մը, որ աւելի բարիքի ու բարօրութեան իմաստը կու տայ. օգուտ մը, որ ինքնին ուրախութիւն, առաւելութիւն կամ շահ կ'ապահովէ:

Այստեղ *օգուտը* պէտք է զանազանել օգտակարութենէն (անգլ.՝ Usefulness, գերմ.՝ Nützlichkeit), որ աւելի կը վերագրուի օրինակ առողջական վիճակի հետ առնչուած ազդակներուն:

¹⁰ **Հոբս** (Thomas Hobbes, 1588 – 1679 թ.) – անգլիացի քաղաքագետ-փիլիսոփայ: Հիմնադիր «Բացարձակապաշտութիւն» (Absolutism) տեսութեան եւ ներկայացուցիչ՝ «Նիւթապաշտութիւն» (Materialism) փիլիսոփայական շարժումին: Գլխաւոր երկը կը նկատուի "Leviathan" (1651 թ., «Լեւիթան»):

բարոյագիտութեան տեսութիւն մը ըլլալէ աւելի, ընկերային – քաղաքական ու արդարութեան – արդարադատութեան ոլորտներու վերաբերեալ տեսութիւն մըն է եւ մեր ուսումնասիրութենէն դուրս պիտի մնայ:

Հետագային, 20-րդ դարու երկրորդ կիսուն, բարոյագիտութեան այլ տեսութիւն մը եւս պիտի ընդունէր Կանտի պարտագիտական այս հիմքը: Անիկա գերման փիլիսոփաներ **Ապէլի**¹¹ (Karl-Otto Apel) եւ **Հաբերմասի**¹² (Jürgen Habermas) կողմէ մշակուած **Քննախօսութեան բարոյագիտութիւնն է** (գերմ.՝ Diskursethik, անգլ.՝ Discourse Ethics), ուր բարոյական արժեւորումը, իմբակի մը կամ ընկերութեան մը մէջ, տեղի կ'ունենայ իւրայատուկ տրամաբանական կանոններով օժտուած քննարկումի ու խօսոյցի միջոցով եւ կը պարունակէ մետա-բարոյագիտութեան (Meta-Ethics) հիմունքներ: Այս տեսութիւնը հեռու է անհատական կամ ենթակայական (Subjective) ըլլալէ, որովհետեւ անոր արդիւնքները միջ-ենթակայական (Intersubjective) գործողութիւններէ կ'անցնին: Այս իմաստով, կարելի է տեսութեան արդիւնքները քննախօսութեան մասնակիցներու վրայ (կամ տուեալ ընկերութեան մէջ) ընդհանրացնել եւ որպէս բարոյական սկզբունքներ ընդունելի դարձնել, առանց այդ բարոյական սկզբունքները արժեւորելու:

Պարտագիտականի բառակազմութիւնը կու գայ հայերէն պարտք եզրէն (յուն.՝ déon), որմէ՝ պարտաւորութիւն¹³ եւ պարտագիտութիւն¹⁴ (յուն.՝ deontología – դեոնտոլոգիա):

¹¹ **Ապէլ** (Karl-Otto Apel, 1922 – 2017 թ.) – գերման ժամանակակից բարոյագետ-փիլիսոփայ եւ «Քննախօսութեան բարոյագիտութիւն» (Discourse Ethics) տեսութեան 2 հիմնադիրներէն առաջինը (միւսը՝ Հաբերմասն է): Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է "Diskurs und Verantwortung" (1988 թ., «Քննախօսութիւն եւ Պատասխանատուութիւն»):

¹² **Հաբերմաս** (Jürgen Habermas, *1929) – գերման ընկերաբան-փիլիսոփայ: Սկզբնական շրջանին՝ անդամ «Տրանկֆորտի դպրոց»ին: «Քննադատական տեսութիւն» ընկերահասարակական-փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: «Քննախօսութեան բարոյագիտութիւն» (Discourse Ethics) տեսութեան հիմնադիրներէն (Ապէլի հետ): Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "Moralbewusstsein und kommunikatives Handeln" (1983 թ., «Բարոյական գիտակցութիւն եւ հաղորդակցական վերաբերմունք») եւ "Erläuterungen zur Diskursethik" (1991 թ., «Քննախօսութեան բացատրութիւններ»): 90-ամեակին առիթով ան կը հրատարակէ երկու ստուար հատորներ՝ «Նաեւ փիլիսոփայութեան պատմութիւն մը» ("Auch eine Geschichte der Philosophie") անուան տակ:

¹³ **Պարտաւորութիւն** – (յուն.՝ Kathêkon, լատ.՝ officium, գերմ.՝ Pflicht, անգլ.՝ Duty) հասկացութիւնը, կը նշանակէ ներքին բարոյական օրէնքէն (Moral Law) յառաջացած ինքնակոչ եւ անձնուրաց վարմունքը, որ հարկադրաբար կը կատարուի, ինչպէս նաեւ կրնայ անհատէ մը սպասուիլ կամ պահանջուիլ: Այս մասին տե՛ս նաեւ հետագայ «Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը» բաժինը:

¹⁴ **Պարտագիտութիւն** – (յուն.՝ deontología) հասկացութիւնը, նոյնիսկ վերոյիշեալ պարտաւորութեան ուսմունքն է: Յունարէն deontología կազմուած է երկու մասերէ՝ déon (= պահանջուածը, պարտաւորուածը) եւ λόγος (= բան, ուսմունք): Ասկէ նաեւ երոպական բազմաթիւ այլ լեզուներու տարբերակները.՝ գերմ.՝ Deontologie, անգլ.՝ Deontology, եւայլն...:

Պարտաւորութիւնը, մարդոց վրայ տարածուած բարոյական այն ներքին պահանջքն է, որ կը դառնայ նաեւ անհատին սկզբունքը (գերմ.՝ Prinzip, անգլ.՝ Principle): Այս պատճառով, Կանտի բարոյագիտական այս տեսութիւնը կը կոչուի նաեւ՝ **Սկզբունքային բարոյագիտութիւն**:

Կարելի է շօշափելի հետեւեալ երկու օրինակներով բացատրել պարտագիտական կամ սկզբունքային բարոյագիտութիւնը. –

Ա. օրինակ՝ սպանութիւնը. –

Կանտի պարտագիտական այս տեսութեան համաձայն, բոլորովին արգիւրուած է սպանութիւնը՝ նկատի ունենալով հիմնական բարոյական–պարտագիտական սկզբունքը: Այստեղ, օրինակ, նոյնիսկ բռնակալի մը սպանութիւնը դատապարտելի ու արգիւրուած է... հակառակ անոր որ ասոր նպատակը ու հետեւանքը բարի են, որով ամբողջ ժողովուրդը մը կրնայ ազատիլ բռնակալի հետագայ զանազան ճնշումներէն:

Բ. օրինակ՝ ստախօսութիւնը. –

Եթէ անհատը, օրինակ, ստէ եւ ոճրագործին չյայտնէ անոր «զոհ»ին թաքրստոցը: Այստեղ, անհատի ստախօսութեան շարժառիթը թէեւ երեւութապէս բարի է եւ չարութենէ չի բխիր, այլ նպատակ ունի անմեղ անձի մը կեանքը ստոյգ մահէ փրկել, այսուհանդերձ ստախօսութիւնը ինքնին անբարոյական վարմունք մըն է եւ պարտագիտական բարոյագիտութեան համար՝ խիստ դատապարտելի ու արգիւրուած:

Ուրեմն, պարտագիտական բարոյագիտութեան ոլորտին մէջ, վերոյիշեալ սպանութիւնն ու ստախօսութիւնը, որպէս անբարոյական վարմունքներ կամ վարուելակերպեր, սկզբունքով եւ առանց բացառութեան, խիստ դատապարտելի ու արգիւրուած են:

Որպէս եզրակացութիւն, կարելի է պարտագիտական բարոյագիտութիւնը բնորոշել հետեւեալ երեք հաստատումներով. –

- (1) Պարտագիտական բարոյագիտութեան նպատակը, բարոյագիտական ինքնին միշտ ուղիի մը հետեւիլն է.
- (2) Բարոյական բարիք կախեալ է բարոյական ինքնին միշտ սկզբունքէն.
- (3) Բարոյական միշտ սկզբունքը բոլորովին անկախ է անոր հետեւանքներէն:

Վերոյիշեալ երեք հաստատումներուն մէջ կը տեսնենք, որ պարտագիտական բարոյագիտութիւնը կը հետեւի ինքնին միշտ ուղիի մը, որ կախեալ է ինքնին միշտ ու բարի սկզբունքէն. այսինքն՝ վերոյիշեալ Ա. եւ Բ. օրինակներու սպանութիւնն ու ստախօսութիւնը ինքնին միշտ, ինչպէս նաեւ լաւ ու բարի սկզբունք չըլլալով, ընդհակառակն՝ դատապարտելի ու արգիւրուած ըլլալով, կարելի չէ հետեւիլ անոնց ... առանց որեւէ բացառութեան եւ երբեք նկատի չառնելով նմանօրինակ վարուելակերպէն յառաջացած հետեւանքը կամ հետեւանքները:

Կանտ, իր պարտագիտական բարոյագիտութիւնը նաեւ կը կոչէ **Ձեւական բարոյագիտութիւն** (գերմ.՝ *Formalethik*, անգլ.՝ *Formal Ethics*): Կանտի բարոյական սկզբունքը «ձեւական» է, որովհետեւ որոշ կացութեան մը չի վերաբերիր, այլ անկախ կացութենէ եւ զանազան հանգամանքներէ, ան մի՛շտ կը գործէ եւ մի՛շտ ուժի մէջ կը մնայ:

Ինչպէս նշեցինք, Կանտի բարոյական սկզբունքի նախապայմանը ենթակային ինքնավարութիւնն ու գերիշխանութիւնն է, հիմնուելով անոր կամքի ազատութեան¹⁵ (*Free Will*) վրայ: Միայն ազատ ու բարի կամքն է, որ պատճառ կը դառնայ բարի վարմունքին ու բարի վարուելակերպին: Այլ իմաստով, ազատ ու բարի կամքը կը գործէ բանական ներքին օրէնքով կամ ինքնօրինութեամբ (*Autonomy*, յուն. *nomos* = օրէնք) եւ ոչ թէ արտաքին օրէնքով կամ այլօրինութեամբ (*Heteronomy*):

Կանտի համաձայն, Պարտագիտական բարոյագիտութիւնը, որպէս ներքին օրէնսդրութեան զուտ գործնական փիլիսոփայութիւն, մեզի համար ըմբռնելի է միայն մարդոց միջեւ եղած բարոյական յարաբերութեան եւ փոխադարձ պարտաւորութիւններու ոլորտէն ներս: Այս իմաստով, կարելի չէ բարոյագիտութիւնը ընդարձակել մարդոց միջեւ եղած փոխադարձ պարտաւորութեանց սահմաններէն դուրս¹⁶:



ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Կանտի «Պարտագիտական բարոյագիտութեան» տեսութիւնը զանազանելու համար բարոյագիտական այլ տեսութիւններէն, ծանօթագրութեան այս բաժնին մէջ կը քննարկենք զանոնք՝ հակիրճ ձեւով եւ բաղադատականներու միջոցով:

Բարոյագիտութեան տեսութիւններու գրեթէ մեծամասնութիւնը, բարոյական արժեւորման որպէս ելակետ կ'ընդունի հետեւեալ 4 երեւոյթները.–

Ա. մարդկային վարմունքները,

Բ. այդ վարմունքներու հետեւանքները,

¹⁵ **Կամքի ազատութիւն** – (*Free Will*) հասկացութիւնը կը նշանակէ՝ մարդու այն կարողութիւնը, որով ան կրնայ ազատօրէն նպատակադրել իր վարմունքը, զանազան կարելիութիւններու մէջէն ընտրութիւն կատարել կամ մերժել զանոնք: Կամք, բարի կամք եւ ազատութիւն հասկացութիւններուն մասին, տե՛ս նաեւ հետագայ «Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը» բաժինը:

¹⁶ **Կանտի** այս գաղափարը, (բարոյագիտութիւնը, որպէս միայն մարդոց միջեւ եղած յարաբերութիւն) քաղուած է իր «Բարոյականութեան բնագանցութիւնը» (*MdS*) երկէն, էջ A 188:

Գ. այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը եւ
Դ. այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները:

Եթէ նկատի ունենանք բարոյական արժեւորումի վերաբերումը՝ վերոյիշեալ 4 երեւոյթներուն հանդէպ, այն ատեն կը բացայայտուի բարոյագիտութեան գլխաւոր տեսութիւններու յստակ զանազանութիւնը, բաժնուած հետեւեալ չորս խումբերուն.-

1. Պարտագիտական Բարոյագիտութիւն (Deontological Ethics)

(նաեւ՝ սկզբունքային բարոյագիտութիւն), ուր բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ մարդկային վարմունքները:

2. Նպատակաբանական Բարոյագիտութիւն (Teleological Ethics)

(նաեւ՝ հետեւանքային բարոյագիտութիւն – Consequentialism), ուր բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ վերոյիշեալ վարմունքներու լոկ հետեւանքները:

3. Առաքինութեան բարոյագիտութիւն (Virtue Ethics),

ուր բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուի՝ վերոյիշեալ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը:

4. Զգացումի բարոյագիտութիւն (Moral Sense Theory),

ուր բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ վերոյիշեալ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները:

Ասոնց կողքին հարկ է նաեւ յիշել 20-րդ դարու երկրորդ կիսուն յառաջացած նորագոյն տեսութիւնը.-

5. Քննախօսութեան բարոյագիտութիւն (Discourse Ethics),

որ Կանտի պարտագիտական տեսութեան կը հետեւի եւ ուր բարոյական արժեւորումը, խմբակի մը կամ ընկերութեան մը մէջ, տեղի կ'ունենայ իւրայատուկ կանոններով օժտուած քննարկումի ու խօսոյթի միջոցով:

➤ **ՆՊԱՏԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

Նպատակաբանական բարոյագիտութեան պարագային, մարդոց վրայ տարածուած բարոյական պահանջքը, որոշ *բարի* նպատակ կամ հետեւանք կը հետապնդէ. այս պատճառով ալ ան նաեւ կը կոչուի՝ հետեւանքային բարոյագիտութիւն կամ *հետեւականութիւն* (Consequentialism), որ աւելի ճիշդ եզրաբանական ձեւն է:

Նպատակաբանական բարոյագիտութեան պարագային, անհատի վարմունքի որպէս շարժառիթ (Motive), կը շեշտուի անհատի նպատակը կամ դիտաւորութիւնը: Եթէ վարմունքի շարժառիթը *բարի* է, ուրեմն վարմունքը եւս *բարի* կ'ըլլայ, նոյնիսկ եթէ վարմունքը, ինքնին, բարոյականութեան դէմ ըլլայ կամ *ճիշդ* չըլլայ: Այլ խօսքով, այստեղ չափանիշ կը կազմեն եւ կարեւորութիւն կը ստանան վարմունքի մը հետեւանքը (կամ հետեւանքները) եւ կամ վարմունքի մը արդիւնքը:

Պարտագիտական բարոյագիտութեան տեսութեան Ա. (սպանութեան) եւ Բ. (ստախօսութեան) օրինակներուն վերադառնալով, դիտենք զանոնք նպատակաբանական բարոյագիտութեան տեսանկիւնէն:

Ա. օրինակ՝ սպանութիւնը.-

Այստեղ բռնակալի մը սպանութիւնը կարելի է, որովհետեւ նկատի կ'առնուին անոր *բարի* նպատակը եւ դրական հետեւանքները, որով ամբողջ ժողովուրդ մը պիտի ազատի բռնակալի հետագայ զանազան ճնշումներէն:

Բ. օրինակ՝ ստախօսութիւնը.-

Այստեղ նոյնպէս կարելի է ստել եւ ոճրագործին ջայտնել անոր զոհին թագրատոցը, որովհետեւ նկատի կ'առնուին արարքին *բարի* նպատակը եւ դրական հետեւանքները, որով անմեղ անձի մը կեանքը պիտի փրկուի ստոյգ մահէն:

Նպատակաբանական բարոյագիտութեան մէջ կը շեշտուի նաեւ վարմունքի հեղինակ անհատին լայնապարփակ ինքնավարութիւնը: Անհատ, որ իր բոլոր դժուարութիւններն ու խոչընդոտները, ինչպէս բնագոյական մղումները, ծանր իրավիճակները, ժամանակի ճնշումը ու կողմնորոշման հարցերը բոլորովին անկախ ու ինքնիշխան ձեւով եւ իր բանականութեան միջոցով կը յաղթահարէ: Ասիկա սակայն բանական վարուելակերպի իդեալականացումն է, որ մեր առօրեայի համար հազուադէպ է:

Որպէս եզրակացութիւն, կարելի է նպատակաբանական բարոյագիտութիւնը եւս (պարտագիտական բարոյագիտութեան նման) բնորոշել երեք հետեւեալ հաստատումներով.-

- (1) Նպատակաբանական բարոյագիտութեան նպատակը, բարոյական արժէքի մը իրականացումն է.
- (2) Բարոյական *ճիշդ* վարմունքը, ինքը, կախեալ է՝ բարոյական *բարի* շարժառիթէն.
- (3) Բարոյական *ճիշդ* վարմունքը կախեալ է՝ մանաւանդ անոր դրական հետեւանքներէն:

Վերոյիշեալ երեք հաստատումներուն մէջ կը տեսնենք, որ նպատակաբանական բարոյագիտութիւնը չի հետեւիր ինքնին *ճիշդ* կամ *բարի* ուղիի մը, այլեւ կը հետեւի բարոյական արժէքի մը իրականացումին եւ այս անգամ բարոյական *ճիշդ* վարմունքը, ինքը, կախեալ է՝ բարոյագիտական *բարի* շարժառիթէն. այսինքն՝ վերոյիշեալ Ա. եւ Բ. օրինակներու «*սպանութիւն*»ը եւ «*ստախօսութիւն*»ը ինքնին *ճիշդ* ու *բարի* չըլլալով հանդերձ, կ'ընդունուին, որովհետեւ անոնց շարժառիթը *բարի* է եւ մանաւանդ անոնց հետեւանքները *լաւ ու բարի* են:

Նպատակաբանական կամ հետեւանքային բարոյագիտութեան տեսութիւններուն մաս կը կազմեն.-

• **Արիստոտելի բարոյագիտությունը**¹⁷, որ *երջանկապաշտական* (Eudaimonism) տեսությունն մըն է:

• **Օգտապաշտութեան** (Utilitarianism) տեսությունը, որ յառաջացած է 18-րդ դարուն:

➤ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՑԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Առաքինութեան բարոյագիտություն տեսութեան մէջ կը գտնենք հիմնական գաղափար մը, որ *երջանկապաշտությունն* (Eudaimonism) է, իր դասական արիստոտելեան ձեւին մէջ: Այլ խօսքով, բարոյական հարցերու եւ քննարկման գլխաւոր նպատակը, անհատին բարոյական *բարի* կամ *առաքինի* նկարագիր մը կերտելուն մէջ կը կայանայ: Անհատի այս նկարագիրը, միաժամանակ, թէ՛ պայմանը եւ թէ՛ արդիւնքն է՝ նպատակադրուած լաւ կեանքին ու երջանկութեան: Այսինքն, առաքինութիւնները միայն միջոցներ չեն՝ երջանկութեան հասնելու համար, այլ երջանկութեան բաղադրիչ մասերը:

Արիստոտելի մօտ «լաւ կեանքի ու երջանկութեան» նախագիծը, սակայն, միայն անհատական բնոյթ չի կրեր, այլ բնականաբար կ'ընդգրկէ ամբողջ ընկերությունը, որովհետեւ առաքինի նկարագրով անհատ մը, առաջին՝ իր լաւ կեանքը կ'ունենայ եւ երկրորդ՝ երջանկութեան կը հասնի, *միայն* առաքինութեանց ճամբով եւ *միայն* բարի ընկերութեան մը ծիրէն ներս:

Առաքինութիւնները, ինչպէս իմաստություն, արիություն, չափաւորություն եւ արդարություն (յիշելու համար միայն յոյն դասական փիլիսոփայ Պլատոնի չորս գլխաւոր առաքինութիւնները), անհատի նկարագրի այն գիծերն են, որոնք անհրաժեշտ են բարոյական *բարի* վարմունք կամ վարուելակերպ իրագործելու համար. եւ միայն անոնց շնորհիւ անհատը կրնայ հասնիլ՝ իր *լաւ ու բարի* կեանք մը վարելու եւ *երջանիկ* ըլլալու նպատակին. արդարեւ՝ անհատական երջանկություն մը, որ այստեղ՝ նոյնինքն *Գերագոյն Բարին* կը ներկայացնէ:

Ինչպէս նախորդ երկու տեսություններու (պարտագիտականի եւ նպատակաբանականի) պարագային, առաքինութեան բարոյագիտությունը եւս կարելի է բնորոշել՝ նմանօրինակ հետեւեալ երեք հաստատումներով. -

- (1) Առաքինութեան բարոյագիտութեան նպատակը, բարոյական արժէքի մը իրականացումն է.
- (2) Բարոյական *ճիշդ* վարմունքը եւ *բարի* վարմունքը, փոխանակելի չեն եւ իրարմէ կախեալ չեն.
- (3) Բարոյական *ճիշդ* վարմունքը անպայման չի բխիր անոր *բարի* հետեւանքներէն:

¹⁷ **Արիստոտելի բարոյագիտությունը** պիտի մանրամասնուի հետագային՝ **Կանտի** «Առաքինութեան ուսմունքը» բաժնին մէջ:

Վերոյիշեալ երեք հաստատումներուն մէջ կը տեսնենք, որ առաքինութեան բարոյագիտութիւնը, նաեւ նպատակաբանական է. ան չի հետեւիր ինքնին *ճիշդ* ուղիի մը, այլեւ կը հետեւի բարոյական արժէքի մը իրականացումին: Այստեղ սակայն, բարոյական *ճիշդ* վարմունքը եւ բարոյական *բարի* վարմունքը, փոխանակելի չեն կամ իրարմէ կախեալ չեն, ինչպէս տեսանք նախորդ երկու տեսութիւններու պարագային.–

- Առաջին տեսութեան մէջ (*պարտագիտական բարոյագիտութիւն*), բարոյական *բարին* բոլորովին կախեալ է բարոյական ինքնին *ճիշդ* սկզբունքէն (Principle). իսկ

- Երկրորդ տեսութեան մէջ (*նպատակաբանական բարոյագիտութիւն*), բարոյական *ճիշդ* վարմունքը, ինքը, կախեալ է՝ բարոյական *բարի* շարժառիթէն (Motive):

- Վերջաւորութեան, *առաքինութեան բարոյագիտութիւնը* (որպէս երրորդ տեսութիւն), թէեւ նկատի կ'առնէ վարմունքի հետեւանքը կամ հետեւանքները, սակայն այստեղ, ի տարբերութիւն նախորդ երկու տեսութիւններէն եւ մանաւանդ ի տարբերութիւն երկրորդ տեսութեանէն (նպատակաբանական բարոյագիտութիւն)՝ բարոյական *ճիշդ* վարմունքը չի բխիր անոր *բարի* հետեւանքներէն:

Ուրեմն այս երրորդ տեսութիւնը (*առաքինութեան բարոյագիտութիւն*), իր հիմնական կողմնորոշումը կը տեսնէ՝ անհատի (կամ ենթակայի) նկարագրի դէպի *բարին* ուղղութեան կամ ուղղուածութեան մէջ: Ասիկա կը բացայայտուի անհատի (կամ ենթակայի) լաւ, յաջողակ ու առաքինի անհատական կեանք մը վարելով եւ ո՛չ թէ կողմնորոշում մը, որ կը թեքի դէպի ծայրայեղութիւն, ինչպէս՝ *Հաճոյապաշտութիւն*¹⁸ (Hedonism, որ կը գտնենք հնադարեան Կիրենականներու – Cyrenaics եւ Էպիկուրականներու – Epicureans մօտ), եւ *Օգտապաշտութիւն*¹⁹ (Utilitarianism):

➤ ԶԳԱՑՈՒՄԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Զգացումի բարոյագիտութեան պարագային, բարոյական արժեւորման որպէս ելակետ կը նկատուին՝ մարդկային վարմունքներու հեղինակ՝ անհատի

¹⁸ **Հաճոյապաշտութիւն** (Hedonism) – բարոյագիտական ուղղութիւն մը, որու հիմնադիրը կը նկատուի Սոկրատեսի աշակերտներէն **Արիստիպոս Կիրենացին** (Aristippus of Cyrene, յուն.՝ Aristippos, 435 – 355 մ.թ.ա.): Թէ՛ Կիրենականներ եւ թէ՛ Էպիկուրականներ (Epicurus, յուն.՝ Epikouros 342 – 271 մ.թ.ա.) հաճոյքը կ'արժեւորեն, որպէս կեանքի նպատակը եւ Գերագոյն Բարին:

¹⁹ **Օգտապաշտութիւն** (Utilitarianism) – բարոյագիտական ուղղութիւն մը, որ ծնունդ առած է Մեծն Բրիտանիոյ մէջ, 18-րդ դարու ընթացքին եւ 19-րդ դարուն անգլիացի փիլիսոփայ **Ե. Բենթամի** (Jeremy Bentham, 1748 – 1832) կողմէ վերածուած է բարոյագիտական տեսութեան:

կամ ենթակայի զգացումները, ինչպես օրինակ՝ *համակրանքը* (Sympathy) կամ *կարեկցությունը* (Compassion):

Պարտազիտական, նպատակաբանական եւ առաքինութեան բարոյագիտութեան տեսութիւններէն ետք, այս չորրորդ տեսութիւնը (*Զգացումի բարոյագիտութիւնը*), իր բարոյական արժեւորման մէջ, առաջնահերթ չի նկատեր մարդկային վարմունքները (ինչպէս առաջին տեսութեան պարագային) կամ այդ վարմունքներու հետեւանքները (ինչպէս երկրորդ տեսութեան պարագային) կամ այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը (ինչպէս երրորդ տեսութեան պարագային), այլ բարոյական արժեւորման ելակէտ եւ հիմք կ'ընդունի անհատի կամ ենթակայի զգացումները:

Արեւմտեան փիլիսոփայութեան մէջ, բարոյագիտական այս չորրորդ տեսութիւնը կը յայտնուի Նոր Դարաշրջանի (Լուսաւորութեան = Enlightenment) ընթացքին: Եւրոպայի մէջ, *զգացումի բարոյագիտութեան* գլխաւոր դէմքերը կը նկատուին՝ սկոթլանտացի հոգեբան ու փորձապաշտ փիլիսոփայ **Դ. Հյում** (David Hume, 1711 – 1776) եւ գերման գաղափարապաշտ փիլիսոփայ **Ա. Շոպենհաուր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860):

Մարդու զգացական աշխարհը բարդ ու խրթին համալիր մըն է: Այդ աշխարհին մաս կը կազմեն նաեւ՝ *յոյզերը*, (Emotions), որոնք զգացական գրգիռներ են՝ արտաքին աշխարհին համար տեսանելի կամ անտեսանելի: Եւ այդ յոյզերն են, որոնք մարդու մօտ կը յառաջացնեն՝ ենթակայական (Subjective) գանազան *զգացումներ* (Feelings), որոնք կարելի է բաժնել երկու խումբերու.–

- **Հաճելի զգացումներ** (Euphoria), ինչպէս օրինակ՝ ուրախութիւն, հաճոյք, ոգեւորութիւն, բարձր տրամադրութիւն... եւ

- **Shաճ զգացումներ** (Dysphoria), ինչպէս օրինակ՝ տխրութիւն, տառապանք, ցաւ, ընկճուածութիւն, ցած տրամադրութիւն...:

Թէ՛ *Հյումի համակրանքը* եւ թէ՛ **Շոպենհաուրի կարեկցությունը**, մարդկային ու ընկերային կեանքի մէջ վստահաբար ունին իրենց իւրայատուկ ու շատ կարեւոր տեղը, այսուհանդերձ կարելի չէ գանոնք ընդհանրացնել, կարելի չէ բոլորին համար ի զօրու դարձնել, որովհետեւ անոնք, որպէս բնական զգացումներ, մարդոց մօտ գոյութիւն ունին՝ առաւել կամ նուազ չափով: Եւ վերջապէս, Կանտի համաձայն, կարելի չէ անոնց «բարոյական կանոնի» արժէք տալ եւ անոնցմով բարոյագիտական տեսութիւն մը հիմնաւորել:

➤ ՔՆՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Քննախօսութեան բարոյագիտութիւնը բարոյագիտական տեսութիւն մըն է, որ հիմնուած է քննախօսական (Discursive) տրամաբանական կանոններու վրայ եւ կը պարունակէ մետաբարոյագիտութեան (Meta-Ethics) հիմունքներ: Այս տեսութիւնը շատ հեռու է անհատական կամ ենթակայական (Subjective) ըլլալէ, որովհետեւ անոր արդիւնքները միջենթակայական (Intersubjective) գոր-

ծողություններ է կ'անցնին: Այս իմաստով, կարելի է տեսութեան արդիւնքները քննախօսութեան մասնակիցներու վրայ (կամ տուեալ ընկերութեան մէջ) ընդհանրացնել եւ որպէս *բարոյականութեան սկզբունքներ* (Principles of Moral) ընդունելի դարձնել, առանց այդ բարոյական սկզբունքները արժեւորելու:

Քննախօսութեան բարոյագիտութիւնը յառաջացաւ ու զարգացաւ Գերմանիոյ մէջ, 20-րդ դարու 70-ական եւ 80-ական թուականներուն, ժամանակակից փիլիսոփաներ՝ **Ապելի** (Karl-Otto Apel, 1922 – 2017), **Հաբերմասի** (Jürgen Habermas, *1929) եւ ասոնց աշակերտներուն կողմէ: Գերմանիայէն ետք, այս տեսութիւնը պիտի արժանանար նաեւ միջազգային ուշադրութեան:

Իր ընդհանուր գիծերուն մէջ, քննախօսութեան բարոյագիտութիւնը կը միանայ Կանտի պարտագիտական բարոյագիտութեան պահանջքին.–

1) Ելակէտ ունենալով՝ անհատի կամ ենթակայի «բարի կամեցողութիւն»ը, որպէսզի առաջին հերթին, քննախօսութեան մասնակցելու պատրաստակամութիւնը ունենայ. եւ

2) իր «ձեւական բարոյագիտութիւն» (Formal Ethics) մը ըլլալու հանգամանքով, որով կը հետեւի Կանտի՝ *անպայմանական հրամայականին* (Categorical Imperative) եւ կ'ունենայ ընդհանրացման (Generalization) կարելիութիւն:

Ապելի եւ Հաբերմասի Քննախօսութեան բարոյագիտութիւնը, սակայն, որոշ չափով կը տարբերի Կանտի Պարտագիտական բարոյագիտութենէն.–

1) Գլխաւոր տարբերութիւնը կը կայանայ իր բարոյական կանոններու որոշումին մէջ. մինչ Կանտի մօտ այս որոշումը անհատական կամ *ենթակայական* (Subjective) է, Ապելի եւ Հաբերմասի մօտ՝ *միջենթակայական* (Intersubjective) է, քննախօսութեան միջոցով:

2) Երկրորդ տարբերութիւնը կը կայանայ՝ իր հիմնաւորման (Grounding) մէջ. մինչ Կանտ, իր տեսութեան հիմնաւորումը կը փնտռէ անհատի «*զուտ բանականութեան*» կառոյցներուն մէջ, Ապել եւ Հաբերմաս, իրենց տեսութեան հիմնաւորման համար կը վստահին անհատներու միջեւ սերտ հաղորդակցութեան (Communication), որովհետեւ իրենց համար *հիմնաւորել* կը նշանակէ՝ «*ուրիշներու հանդէպ հիմնաւորել*», որ կարելի է միայն՝ ուրիշներու հետ խօսոյթով, քննախօսութեամբ: Ապելի համաձայն, բարոյագիտութիւնը այն հիմնական հաստատութիւնն է, որ կը կանոնաւորէ ընկերային վարմունքներն ու վարուելակերպը՝ հաղորդակցութեան միջոցով:


ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱԵԱՆ
Գերմանիա

(Շար. 3)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ 25-ԱՄԵԱՅ ՉԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆ (1995-2020)**

ԱՐԺԵՒՈՐՈՒՄ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ



Մեր բոլորին ծանօթ համաշխարհային եւ լիբանանեան ծանր պայմաններուն պատճառով, երկար յապաղումէ ետք, կու գանք ուրախութեամբ յայտարարելու, որ Անթիլիասի Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Հայրապետական գահակալութեան 25-ամեակին (1995-2020) նուիրուած հատորը:

Հայրապետին արծաթեայ յոբելինականին նուիրուած աշխատասիրութիւնը կը ներկայացնէ Սրբազնագոյն Հայրապետին 25 տարուան ծառայութիւնը՝ զանազան ոլորտներու մէջ եւ բազմաթիւ մարտահրաւէրներու դիմաց: 52 յօդուածագիրներ՝ կղերականներ, միջ-եկե-

ղեցական եւ միջ-կրօնական աշխարհի մէջ պատասխանատուներ, ակադեմիկոսներ, պետական եւ ազգային երեսփոխաններ, գիտական եւ գրական տարբեր ամպիրոններու պատասխանատուներ, համալսարանի դասախօսներ, հայկական գաղութներու մէջ գործունեայ դէմքեր, հասարակական գործիչներ, ի շարս այլոց, կ'անդրադառնան Նորին Ս. Օծութեան Հայրապետական առաքելութեան:

Նշենք, որ հրատարակութեան խմբագրական կազմի անդամներն են՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Արտեմիս Հացագործեան, Վիգէն Աւագեան եւ Շահան Գանտահարեան, իսկ մեկենասութիւնը յանձն առած է՝ տէր եւ տիկին Կարօ եւ Սօսի Էշկիեան ամուլը (Լոս Անճելոս):

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՑԱԲԱԿՅԵՑԱՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Ուրբաթ, 13 Մայիսին, Արաբական Միացեալ Էմիրութիւններու (Ա.Մ.Է.) նախագահ, գինեալ ոյժերու հրամանատար եւ Ապու Տապիի կառավարիչ՝ Շէյխ Խալիֆա Պըն Չայետ Ալ-Նահեանի մահուան տխուր առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Ա.Մ.Է., Զաթարի եւ Շրջակայից թեմիս ցաւակցագիր մը յղեց Ա.Մ.Է. պետութեան եւ ժողովուրդին: Իր նամակին մէջ Վեհափառ Հայրապետը յատկապէս կ'ընդգծեր հանգուցեալ նախագահին ունեցած առանցքային դերակատարութիւնը եւ իրագործած նուաճումներն ու նախաձեռնութիւնները՝ երկիրը զարգացնելու ու բարգաւաճելու եւ քրիստոնեայ-իսլամ համակեցութիւնն ու երկխօսութիւնը ամրապնդելու միտող:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅԸ

Երկուշաբթի, 16 Մայիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Արաբական Միացեալ Էմիրութիւններու (Ա.Մ.Է.), Զաթարի եւ Շրջակայից թեմին, նամակ մը յղեց Ա.Մ.Է. Նորընտիր նախագահ՝ վսեմաշուք Շէյխ Մուհամմատ Պըն Չայետ Ալ-Նահեանին, շնորհաւորելով անոր նախագահական ընտրութիւնը, ինչպէս նաեւ Ա.Մ.Է. ժողովուրդը:



Նորին Ա. Օծութիւնը յիշեց տարիներ առաջ Ա.Մ.Է. մէջ Նորընտիր նախագահին հետ ունեցած հանդիպումը եւ իր ու երկրի հայ համայնքին զօրակցութիւնը յայտնեց անոր: Նամակի աւարտին, Հայրապետը յաջողութիւն ու արեւշատութիւն մաղթեց նախագահին, ինչպէս նաեւ առաւել բարգաւաճում ու յառաջդիմութիւն Արաբական Միացեալ Էմիրութիւններուն:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՏԵՐ ԶՕՐ

24-25 Մայիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս պատմական այցելութեամբ մեկնեցաւ Սուրիա, ուր հանդիպում ունեցաւ Սուրիոյ նախագահ՝ Պաշար Ալ-Ասատին, պետական ու հոգեւոր բարձրաստիճան պատասխանատուներու հետ, ինչպէս նաեւ այցելեց Տէր Զօր եւ աներակ դարձած յուշահամալիրին մէջ փոխանցեց իր հայրապետական պատգամը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ՝ ՊԱՇՇԱՐ ԱԼ-ԱՍԱՏԻՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 24 Մայիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Դամասկոսի մէջ հանդիպում ունեցաւ Սուրիոյ նախագահ՝ Պաշար Ալ-Ասատի հետ: Նորին Ս. Օծութեան պատուիրակութեան մաս կազմեցին՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Եպս. Չոպուեան, Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի եւ խորհրդարանի հայկական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, Սուրիոյ Հ.Յ.Դ. կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութեան ատենապետ Սուլմալու Սուլ-



պուլեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեան եւ Ազգ. բարերար Սուրեն Վարդանեան:

Նախագահ Ալ-Ասատ ջերմօրէն ողջունելով Վեհափառ Հայրապետին եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան այցելութիւնը, յիշեց Օսմանեան պետութեան կողմէ գործադրուած Հայոց Տեղասպանութիւնը եւ ընդգծեց, թէ պատմութիւնը կը շարունակուի Սուրիոյ մէջ: Ան նշեց հայոց ներդրումը Սուրիոյ զարգացման ու յառաջդիմութեան մէջ եւ շեշտեց, որ հայ համայնքը անբաժան մասնիկն է Սուրիոյ հասարակութեան:



Իր կարգին, Նորին Ս. Օծութիւնը բարձր գնահատեց Սուրիոյ պետութեան աջակցութիւնը հայ համայնքի վերականգնման աշխատանքին: Ան վստահեցուց, թէ Սուրիոյ հայութիւնը ամէն գնով սատար պիտի հանդիսանայ Սուրիոյ վերաշինութեան ու վերածաղկման ծրագիրներուն:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ նաեւ քննարկելու շրջանի տագնապներն ու խնդիրները: Այս, Նախագահ Ալ-Ասատին պարզուեցան Սուրիոյ հայութիւնը դիմագրաւող դժուարութիւնները:

Աւարտին, Վեհափառ հայրապետը նախագահին նուիրեց Բարձրբերդի Աւետարանի օրինակ մը եւ իր հեղինակած «The Armenian Church» գիրքի արաբերէն թարգմանութիւնը:

Յայտնենք, որ նոյն օրը, Նորին Սրբութիւնը յաջորդաբար այցելեց Սուրիոյ Կրօնից նախարար՝ Ահմատ Ապտ Ալ-Սաթար Ալ-Սայէտին, վարչապետ՝ Հուսէյն Արնուսին եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ պետ՝



Աֆրամ Բ. Պատրիարքին (Յոյն Ուղղափառ եւ Յոյն Կաթողիկէ Եկեղեցիներու պետերը երկրէն բացակայ ըլլալուն պատճառով, անոնց հետ հանդիպում տեղի չունեցաւ):

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԵՐ ԶՕՐԻ ՄԵՋ

Չորեքշաբթի, 25 Մայիսի առաւօտեան ժամը 10:30-ին, Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Եպս. Չօպուեանի, Լիբանանի խորհրդարանի երեսփոխան եւ հայկական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունիի, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրօ Մանոյեանի, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեանի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեանի, ազգայիններ՝ Վրեժ Եագուպեանի, Սուրեն Վարդանեանի եւ Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ Սումպուլ Սումպուլեանի, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանի Տեղեկատուական բաժանմունքի վարիչ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանի եւ գաւազանակիր Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեանի ժամանեց համահայկական ուխտավայր՝ Տեր Զօր:

Տեր Զօրի օդակայանին մէջ, Նորին Սրբութիւնը դիմաւորուեցաւ պետական բարձրաստիճան պատասխանատուներու, «Պաաս» կուսակցութեան քարտուղարին, ապահովական ուժերու ներկայացուցիչներու, Հայաստանի Հանրապետութեան Մարդասիրական Առաքելու-



թեան Սուրիոյ ներկայացուցիչին եւ սուրիական խորհրդարանի երեսփոխաններու կողմէ, գլխաւորութեամբ Տէր Զօրի Նահանգապետ՝ Ֆատել Նաճճարի:

Այնուհետեւ, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Նահանգապետարան, ուր շերմօրէն դիմաւորուեցաւ Նահանգապետարանի անձնակազմին կողմէ:

Նահանգապետ Ֆատել Նաճճար բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին եւ իրեն ընկերակցող շքախումբին, լուսարձակի տակ առաւ Տէր Զօրի բնակչութեան հայ թէ՛ արաբ բաղադրիչներու շերմ յարաբերութիւնները: Ան դիտել տուաւ, որ Սուրիոյ դէմ պատերազմը կը միտեր քայքայել հասարակութեան ընկերային ներդաշնակ հիւսուածքը, սակայն սուրիական ընկերութեան բաղադրիչներուն գործակցութիւնը աւելի ամրապնդուեցաւ՝ ձախողութեան մատնելով դաւադիրներու ծրագիրները:

Տէր Զօրի կրօնական կալուածներու տնօրէն՝ Ապտուլ Հատի Սուհամետ Սալեհ, բարի գալուստ մաղթելով Նորին Սրբութեան, յայտնեց, որ հայութիւնը սերտ կապեր ունի Տէր Զօրի հետ, հետեւաբար բոլորս ձեռք ձեռքի տալով կարելիութիւն ունինք վերաշինելու Տէր Զօրի Սրբոց Նահատակաց յուշահամալիրը, Տէր Զօրը եւ ողջ Սուրիան:

Վեհափառ Հայրապետը խօսք առնելով հաստատեց, որ «Տէր Զօրը սովորական վայր մը չէ մեր ժողովուրդին համար, այլ՝ սրբավայր եւ ուխտավայր: Տէր Զօրի աւագը միախառնուած է հայուն արիւնով: Թէեւ Տէր Զօրը մեզի համար գերեզման դարձաւ, սակայն միեւնոյն ատեն

մեր վերածնունդի վկայարանը հանդիսացաւ»: Ան դիտել տուաւ, որ ութ անգամ այցելած է Տէր Չօր, սակայն այս վերջինը այլ ազդեցութիւն թողած է իր վրայ, որովհետեւ նոյն ցեղասպան թուրքը երկրորդ ցեղասպանութիւնը գործած է Տէր Չօրի մէջ ու քաղաքը վերածած է աներակի:

Ողջունելով Տէր Չօրի նահանգապետը, որ լրջօրէն նուիրուած է նահանգի վերականգնումին, Նորին Սրբութիւնը անդրադարձաւ Սուրիոյ վսեմաշուք նախագահին հետ հանդիպման, ուր լուսարձակի տակ ամնուած է սուրիահայութեան կարեւոր դերակատարութիւնը երկրի վերականգնումին մէջ: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց նահանգապետին եւ պետական ակադեմիայի՝ իրենց ջերմ հիւրընկալութեան համար եւ այս առիթով իր գնահատանքը ուղղեց Տէր Չօրի զաւակ՝ ազգային բարերար Սուրէն Վարդանեանին:

Լիբանանի խորհրդարանի երեսփոխան եւ հայկական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի խօսք ամնելով շեշտեց, որ Սուրիոյ դէմ պատերազմը օտարներու պատերազմն էր Սուրիոյ մէջ: «Մենք ականատես եղանք, թէ ինչպէ՛ս այս քաղաքը եւս պատերազմի հետեւանքով պաշարուեցաւ եւ քանդուեցաւ, իսկ ոճրագործը անպատիժ մնաց, որուն համար ան կը շարունակէ ոճիրներ գործել Սուրիոյ, Պաղեստինի, Իրաքի մէջ եւ այլուր: Զետեւաբար, Սուրիան պաշտպանելը իւրաքանչիւր ազգայինի պարտքն է՝ յանուն Սուրիոյ ինքնիշխանութեան եւ ժողովուրդի արժանապատուութեան պահպանման», ըսաւ ան:

Աւարտին, Նորին Սրբութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նուիրուած պատկերազարդ գիրք մը եւ «*The Armenian Church*» գիրքի արաբերէն թարգմանութիւնը նուիրեց նահանգապետին: Իր կարգին, նահանգապետը Սուրիոյ վերականգնումը խորհրդանշող յուշանուէր մը նուիրեց Վեհափառ Զայրապետին:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Չորեքշաբթի, 25 Մայիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Տէր Չօրի Սրբոց Նահատակաց քանդուած յուշահամալիր, ուր դիմաւորուեցաւ Զ.Ս.Ը.Մ.-ի փողերախումբին եւ սկաուտներուն, թեմի միաբան հայրերուն, Զալէպէն, Դամասկոսէն, Գամիշլիէն, Լաթաքիայէն եւ Զեսապէն ժամանած հայկական միութիւններու եւ ազգային մարմիններու մեծաթիւ ներկայացուցիչներու, Սուրիոյ ապահովական ուժերու, Սուրիական Կարմիր Մահիկ կազմակերպութեան, Նահատակներու ընտանիքներու օժանդակութեան յանձնախումբի անդամներու եւ տեղական լրատուամիջոցներու կողմէ:



Ի գործ դրուեցան արաբական հիւրընկալութեան յիշարժան աւանդոյթներ, որոնցմէ ետք Վեհափառ Հայրապետն ու իրեն ընկերակցող շքախումբը «Հրաշափառ» եւ «Ուրախ Լեր» շարականներու երգեցողութեամբ ուղղուեցան դէպի Սրբոց Նահատակաց Յուշահամալիրի դահլիճ:



Վեհափառ Հայրապետը Տեր Զօրեն հայրապետական օրհուրեամբ եւ քրիստոնեական ջերմ սիրով ողջունելէ ետք հայ ժողովուրդի աշխարհացրիւ զաւակները, ըսաւ. «Տեր Զօրը մեր ազգի զաւակներուն համար սովորական վայր մը չէ, այլ կենդանի վկայարանն է Հայոց Ցեղասպանութեան: Ան ոչ միայն մեր ժողովուրդի գերեզմանը, այլեւ յարութեան վկայարանը դարձաւ ու ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդի զաւակները հաստատուելով Սուրիա, Լիբանան եւ այլուր, Տեր Զօրը իրենց հետ տարին որպէս ոգի, մանաւանդ որպէս պատգամ երկրագունդի մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներու ձեռքերման: Ահա թէ ինչո՛ւ Տեր Զօրը մեզի համար ուխտավայր ու սրբավայր է»:



Նորին Սրբութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրիոյ ժողովուրդին եւ պետութեան, որոնք մեր ժողովուրդի զաւակներուն առջեւ բացին իրենց դռները, հայրենիքը եւ իրենց հացն ու ջուրը բաժնեկցեցան ցեղասպանութենէն վերապրողներուն հետ: Ապա, շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն ազգերուն, պետութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք յանդգնութիւն ունեցան ճանչնալու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը:

Այնուհետեւ Արամ Ա. Կաթողիկոս յայտարարեց. –

«Այսօր, այս աւերակներուն դիմաց կանգնած կը յայտարարեմ աշխարհացրիւ մեր ժողովուրդի զաւակներուն եւ համայն մարդկութեան,

թե մենք պիտի վերաշինենք Տեր Զորի յուշահամալիրը: Մենք կեանքի ժողովուրդ ենք, տեսլական ունեցող ժողովուրդ ենք: Մենք կը մերժենք մահը, քանդումը, թշնամութիւնը, ատելութիւնը, ունինք կեցուածք այն բոլորին դիմաց, որոնք կը փորձեն մահ, քանդում, ակերակ ցանել ամէն տեղ: Մեր ժողովուրդը լոյսի ու յոյսի, հաւատքի ու վճռականութեան ժողովուրդ է: Եկած եմ անգամ մը եւս շեշտելու, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, սակայն համազգային մաշտապով, մեր ազգի բոլոր զաւակներուն մասնակցութեամբ եւ սուրիական պետութեան ու ժողովուրդին զօրակցութեամբ, մենք պիտի վերաշինենք Տեր Զորի եկեղեցին իր համալիրով:



Տեր Զորի այս համալիրը վերաշինել կը նշանակէ նոր շունչ, նոր թափ տալ մեր պահանջատիրական պայքարին: Մեր ժողովուրդը պահանջատեր է: Մեր մարդկային իրաւունքները տակաւին կը մնան բռնաբարուած: Մենք պիտի շարունակենք մեր պայքարը Տեր Զորի, Սուրիոյ, Լիբանանի մէջ եւ այլուր: Այսպէս պետք է ըլլայ իրաւագրկուած ժողովուրդին կեանքը: Մեր կեանքը պայքարի, պահանջատիրութեան կեանք է: Հետեւաբար այսօր, այստեղ՝ Տեր Զորի մէջ, մենք կը վերանորոգենք մեր հաւատքն ու կամքը՝ շարունակելու մեր պահանջատիրական պայքարը»:

Տեր Զորի նահանգապետ՝ Ֆատել Նաճճար խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան համար, որ համարեց հայութեան զօրակցութիւնը Տեր Զորի, ինչպէս նաեւ ողջ Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն: Ուստի ան շեշտեց, որ ձեռք ձեռքի տալով միասնաբար պիտի վերակառուցենք Սուրիան ու դեմ պիտի դնենք Սուրիոյ ընկերային համերաշխ հիսուածքի քայքայման ուղղուած բոլոր դաւադրութիւններուն:

Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Սումպուլ Սումպուլեան ողջունեց Տեր Զորի աշիրէթները, որոնք ցեղասպանութեան օրերուն տիրութիւն ըրին հայ ժողովուրդին, ապա ներկայացնելով յուշահամա-

լիրին կառուցման նպատակը, անդրադարձաւ թրքական ուժերու կողմէ անոր քանդումին, շեշտելով, որ յիշողութիւնը կարելի չէ ջնջել:

Տեր Չօրի կրօնական կալուածներու տնօրէն՝ Ապտուլ Յատի Մուհամետ Սարեհ խօսք անելով յայտնեց, որ Նորին Սրբութեան եւ հայութեան հետ Սուրիոյ ժողովուրդը բարեկամական յարաբերութիւններ կը վայելէ, որովհետեւ անոնք հաւատարիմ բարեկամներ են: Ան շեշտեց, որ հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկող Նոյն ձեռքերը քանդեցին Սուրիան, անոր եկեղեցիներն ու մզկիթները, հետեւաբար երկու ժողովուրդները Նոյն խրամատին մէջ կը պայքարին:



Պաշտօնական խօսքերու ավարտին դպրաց դասուն եւ միաբան հայրերուն երգեցողութեամբ հնչեցին «Ամէն Հայի» եւ «Ի Վեհ Բարձանց Ս. Սիոնի» հայրապետական մաղթերգները: Ապա, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»ով փակեց ժողովրդային հաւաքը, որմէ ետք ներկաները միասնաբար «Կիլիկիա» մաղթերգը երգեցին: Հուսկ, Հայրապետը երիտասարդութեան հետ մտերմիկ գրոյց մը ունեցաւ:

Յիշենք, որ Հայ Դատի Յանձնախումբը հրաւիրեալներուն բաշխեց «Արդարացի Լուծում» գիրքին արաբերէնի թարգմանուած օրինակը, իսկ Նորին Սրբութեան Տեր Չօր այցելութիւնը «Ռատիօ Երազ»ի ուղիղ սփռումով հեռարձակուեցաւ. (այս մասին տես նաեւ էջ 387):

ՏՕՆԱԿԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 104-ԱՄԵԱԿԻ ՈՒ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ
ՆՇՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՉ**

Կիրակի, 29 Մայիսին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, մասնակցութեամբ միաբան հայրերու եւ ներկայութեամբ հաւատացեալ ժողովրդին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, մեծ շուքով կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք ու նշուեցաւ Արամ Մանուկեանի անունով օծուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին անուանակոչութիւնը:

Ս. Պատարագի ընթացքին, ձեռամբ Վեհափառ Հայրապետին, կատարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութիւն: Նորին Ս. Օծութիւնը աղօթք բարձրացնելով առ բարձրեալն Աստուած, խնդրեց, որ ամուր ու անսասան պահէ մեր ազգը ամբողջ, իր շնորհքն ու իմաստութիւնը շնորհէ բոլոր անոնց, որոնք իշխանութեան պատասխանատուութեան վրայ կը գտնուին, իր Ս. Աջովը օրհնէ ամբողջ հայ ժողովուրդը եւ իր հովանիին տակ պահէ մեր հայրենիքն ու Ս. Եկեղեցին:



Հանրապետական մաղթանքին յաջորդեց Դպրեվանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի քարոզը: Հայր Սուրբը նշեց, թէ այսօր, առաւել քան երբեք, հայ ժողովուրդը կարիքը ունի հայրենիքի հովանիին ներքեւ միախմբուելու եւ հայ ազգին շնորհուած ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու:



Այս առիթով, կատարուեցաւ նաեւ հոգեհանգիստ, ի խնդիր հայրենի հողին անկախութեան ու պաշտպանութեան համար զոհուած հայորդիներու հոգիի խաղաղութեան համար:

Ս. եւ Անմահ Պատարագի ակարտին, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, միաբան հայրերը, դպրեվանեցիները, Կաթողիկոսարանի Կիրակնօրեայ վարժարանի սաներն ու հաւատացեալ ժողովուրդը ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր տեղի ունեցաւ Դպրեվանքի սաներուն կողմէ պատրաստուած գեղարուեստական յայտագիր: Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, իրենց ձեռքին ունենալով եռագոյն դրօշը, Մայիս 28-ի շունչով զարդարեցին դահլիճը: Յայտագրի ակարտին, Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան ուղերձ ընթերցեց: Իր ուղերձին մէջ, Հայր Սուրբը յիշեց յանուն ազատութեան ու անկախութեան հայ ազգի զաւակներուն կատարած սխրանքները: Ապա, ի դէմ միաբանութեան ու ներկայ ժողովուրդին, շնորհաւորեց Վեհափառ Հայրապետին անուանակոչութիւնը եւ մաղթեց արեւշատութիւն:

Հանդիսութեան ակարտին, Նորին Սուրբ Օծութիւնը իր հայրական խօսքը ուղղելով ներկաներուն յայտնեց. – «Այսօր Մայիս 28-ը միայն մով վառելու, ծաղկեպսակ գետնդելու, հանրահաւաքներ կազմակերպելու առիթ չէ՛, այլ՝ կոչ մը մեր ժողովուրդի միասնականութեան: Հայաստան, Արցախ եւ Սփիւռք միասնաբար՝ պետք է հայոց անկախութեան պաշտպանը դառնան», շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Յիշելով Արցախի քառօրեայ եւ 44-օրեայ պատերազմներուն նահատակուած քաջարի հայ զինուորները, Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ անոնք իրենց արիւնը թափելով հերոսացան հայ ազգի ազատութեան եւ անկախութեան համար: Ան նշեց, որ Հանրապետական մաղթանքի ընթացքին մենք բոլորս աղօթք վերառաքեցինք առ բարձրեալն Աստուած, որ խոհեմութիւն եւ իմաստութիւն շնորհէ Հայաստանի ղեկավարներուն, մտաւորականներուն եւ պատասխանատուներուն, որպէսզի հայրենիքի փրկութիւնն ու անկախութիւնը ամէն բանէ վե՛ր ու վե՛հ նկատեն: Մեզմէ՛ ա՛յս կը պահանջէ Մայիս 28-ը:

Իր խօսքի ակարտին, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց համայն հայութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ՀԱՄԵՐԳ

«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՁԱԽՈՒՄԲԻՆ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ

Շաբաթ, 28 Մայիսի երեկոյեան ժամը 8:30-ին, Հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանի, նախագահութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետ՝ Մարտիկ եւ Ալիս Պողոսեան ամուլին, կատարողութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «ՇՆՈՐՀԱԼԻ» երգչախումբին, իմբավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի եւ ընկերակցութեամբ «ԿԻԼԻԿԻԱ» նուագախումբին, «Արին Սէնթըր»ի դիմաց տեղի ունեցաւ «Ազգային Երգերու Համերգ»:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Մարալ Մխսեան: Ան նկատել տուաւ, որ 28 Մայիս 2022-ը Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման 104-րդ տարեդարձն է: Մայիս 28-ը հայ ժողովուրդի յաղթանակի, ազգային հպարտութեան եւ վճռակամութեան փառապանծ տօնն է: Մայիս 28-ով հայ ժողովուրդը վեց դար գերութենէ եւ ստրկութենէ ետք, տիրացաւ ազատ ապրելու իրաւունքին, անկախութեան եւ ժողովրդարութեան: Ան նաեւ պատմական ակնարկ մը նետեց «ՇՆՈՐՀԱԼԻ» երգչախումբի հիմնադրութեան, ունեցած գործունէութեան, առաքելութեան, որուն նպատակը եղած է Կաթողիկոսարանի հանդիսաւոր տօնական օրերուն մատուցողը Ս. եւ Անմահ Պատարագի երգեցողութիւնը կատարել, ինչպէս նաեւ՝ տարուան ընթացքին հանրութեան հրամցնել հոգեւոր, ազգագրական եւ հայրենասիրա-

կան համերգներ, որոնք կատարուած են Անթիլիասի մէջ, նաեւ՝ Լիբանանի, Սուրիոյ, Կիպրոսի, Յունաստանի եւ այլ երկիրներու մէջ:

Ապա, երգչախումբի ղեկավար Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան խօսք առնելով, յայտնեց, որ Մայիս 28-ին ունեցանք մեր ազատ ու անկախ հայրենիքը, եռագոյն դրօշը պարզուեցաւ հայրենի ազատագրուած հողին վրայ՝ համայն մարդկութեան յայտարարելով, որ հայը ողջ է, հայը չէ մեռած ու պիտի չմեռնի, որովհետեւ ազատ ապրելու իր կամքը զօրաւոր է, գօտեպնդուած՝ նախահայրերու աննկուն ու անբեկանելի հաւատքով եւ հոգիով: «Այսօր մենք՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «ՇՆՈՐ-ՀԱԼԻ» երգչախումբի անդամ-անդամուհիներ, արդարօրէն կը հաւատանք, որ եթէ տկարանայ հայապահպանման եւ ազատագրական մեր պայքարը,



անխուսափելիօրէն պիտի ցամքին մշակութային մեր կենսունակութեան աղբիւրն ու այնքան մեծ զոհաբերութեամբ ձեռք բերուած ազգի վերականգնումի կռուանները: Եւ համոզուած ենք, որ առանց հայ մշակոյթին ու հայ արուեստին, հայ երգին ու հայ պարին, հայ խօսքին ու հայ ստեղծագործողին՝ մեր ժողովուրդի մարտական ու յաղթական թռչող եւ դէպի վեր բարձրացող հոգին պիտի թուլնայ, եւ մենք պիտի դադրինք ինքնուրոյն հայ ազգ ըլլալէ», ըսաւ ան:

Այնուհետեւ, երգչախումբը յաջորդաբար մեկնաբանեց «Այ Ֆիտայիներ», «Հալածուած ենք Հայաստանի լեռներէն», «Զարթիր որդեակ», «Իբրեւ արծիւ», «Երեւան էրբօունի», «Ատանայի ողբը», «Անուշ հայրենիք», «Սարդա-

րապատ», «Խանի երգը», «Արեւ ելաւ, զէյթունցիներ», «1907 թուականին», «Զայն տուր, ով Ֆիտա», «Զայն մը հնչեց», «Ելէք հայեր», «Հայ քաջեր», «Խուժան ասկեար», «Պատերազմ ենք գնում», «Հայեր, միացէք», «Գետաչէն», «Արդեօք ովքեր են» եւ «Հայորդիք» երգերը, որոնք մեծ խանդավառութեամբ ընկալուեցան ներկայ ժողովուրդին կողմէ:

Համերգի եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան յայտնեց, որ «ՇՆՈՐՀԱԼԻ» երգչախումբը մեր շարականներն ու մեղեդիները երգելով՝ կը ճոխացնէ մեր եկեղեցիներու արարողական կեանքը, սակայն երբեմն մեր մէջ հայրենասիրականը ամրացնելու համար նաեւ ժողովրդայինն ու հայրենասիրականը բեմ կը բարձրացնէ, որպէսզի այդ ձեւով Հայ Եկեղեցւոյ սրբազան պատգամը թելադրէ մեզի: Սրբազան Հայրը շնորհակտեց հայ ժողովուրդի բոլոր զաւակները՝ մեր ազգի ազատութեան եւ անկախութեան տարեդարձին առիթով: «Այստեղ՝ Պուրճ Համուտի մէջ, հակառակ մարդկային տեղաշարժերու, հակառակ մեր ապրած դժուարութիւններուն եւ տագնապներուն, այսօր երեկոյեան անգամ մը եւս հաստատեցինք, որ այս միջավայրը կը մնայ հայկական: Հետեւաբար, հայադրոշմ եւ հայաբոյր այս միջավայրին մէջ մենք պէտք է անդրադառնանք, որ հայ երգը պարզ երաժշտութիւն չէ: Հայ երգը մեր դարաւոր մաքառումներուն, իղձերուն, իտէալներուն ծնունդն է: Մայիս 28-ի փառապանծ առիթով, Պուրճ Համուտէն մեր ողջոյնը կ'ողողեմ ազատ անկախ Հայաստանին՝ մաղթելով, որ ներկայ տխուր տեսարաններէն շուտով դուրս գալով ան մեզ կը տանի նոր բարձունքներու ու նոր վերելքի», ըսաւ Սրբազանը եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որուն յղացումն էր սոյն երեկոյթը: Շնորհակալական խօսք ուղղեց նաեւ երեկոյթի նախագահ՝ քաղաքապետ Մարտիկ եւ Ալիս Պօղոսեան ամուլին, իր երախտագիտութիւնն ու գնահատանքը յայտնեց երգչախումբի անդամ-անդամուհիներուն, «ԿԻԼԻԿ-ԻԱ» նուագախումբին եւ անոնց ընդմէջէն ողջունեց երգչախումբի ղեկավար՝ Հրգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի հոգեւորէր ճիգը:

ՄԱՅԻՍ 28-Ը ՀՐԱՒԵՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ՝ Ի ԽՆԴԻՐ ՀՉՕՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դարձնալ Մայիս 28 է: Ազատութեան ու անկախութեան ձգտող ու պայքարող հայ ժողովուրդին համար իւրաքանչիւր օր Մայիս 28 է ու պէ՛տք է ըլլայ:

Այս տեսլականով ու յանձնառութեամբ սերունդներ կազմաւորուեցան: Եռագոյնով ամբողջական Հայաստանը ամբողջական հայութեամբ վերակերտելու հաւատքը ու կամքը տասնամեակներ շարունակ իմաստաւորեցին օրերը մեր ժողովուրդի գաւակներուն:

Արդարեւ, աշխարհաբախական պայմաններու պարտադրանքով մեր կորսնցուցած անկախութիւնը 1991-ին վերականգնեցին՝ անկախ ազգերու շարքին եռագոյնը բարձրացնելով եւ միջազգային համայնքին դիմաց հայրենիքին անկախութիւնը ամրացնելու մեր վճարակամութիւնը հաստատելով:

Անցնող 30 տարիներուն, իւրաքանչիւր հայ ազգին հաւաքական տունը ամրացնելու ու ծաղկեցնելու համազգային երգի տարբեր կերպերով բերաւ իր մասնակցութիւնը: Սակայն, դժբախտաբար, ահաւոր փտածութիւնը, անհետատես քաղաքականութիւնը ու ջլատիչ անմիաբանութիւնը, դարձան քանդակող ներկայութիւն Հայաստանի մէջ: Մինչ մենք մեր յաղթանակով շլացանք, առանց զայն դիւանագիտական յաղթանակի ու տնտեսական զարգացման վերածելու եւ մեր բանակը կազմակերպելու, թշնամին լուր կերպով պատրաստուեցաւ՝ հերոսներու արիւնով ձեռք ձգուած մեր յաղթանակը պարտութեան վերածելու վճարակամութեամբ: Եւ պատահեցաւ աղէտը...: Կորսնցուցինք հայու արիւնով ազատագրուած հողամասեր: Կորսնցուցինք շուրջ հինգ հազար հերոսներ: Կորսնցուցինք հայու ստեղծագործ ոգիին ու հաւատքին արտայայտութիւնը եղող վանքեր, եկեղեցիներ եւ մշակութային անհամար կոթողներ:

Այսօր յուսահատութեան ու անորոշութեան ամպեր կուտակուած են Հայաստանի ու Արցախի երկինքին վերեւ: Վերանկախացած Հայաստանի հզօրացման մասնակից դարձած Սփիւռքի հայութեան երկնակամարը սկսած է ծածկուիլ անտարբերութեան ու յոռետեսութեան ամպերով:

Արդարեւ, խոր ցաւով ու մտահոգութեամբ կը հետեւինք Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումներուն: Փաստօրէն, հայ կեանքէն ներս փոխադարձ ատելութիւնն ու անհանդուրժողութիւնը դարձած են տի-

րական: Արցախի պատերազմէն ետք փոխանակ մեր ոյժերը համախմբելու, մեր միասնականութիւնը ամրապնդելու ու մեր ներուժը կազմակերպելու, ներքին բեւեռացումը դարձած է աւելի խոր՝ ազգակործան եւ հայրենաբախ վտանգներով լեցուն: Ներկայ կացութեան դիմաց, մեր թշնամին դարձած է աւելի պահանջկոտ ու յարձակողապաշտ եւ մեր մօտաւոր ու հեռաւոր գործընկերներն ու բարեկամները սկսած են անտարբեր ըլլալ Հայաստանի նկատմամբ:

Ապրիլ 24-ի Հայրապետական Մեր պատգամին մէջ Մեր խոր մտահոգութիւնը արտայայտեցինք, միաժամանակ Մեր յստակ պատկերացումը պարզեցինք Հայաստանի ներկային ու մանաւանդ ապագային նկատմամբ: Ըսինք ու կը կրկնենք.–

Մենք խաղաղութեան գործընթացին համաձայն ենք, սակայն ո՛չ ի հեճուկս Հայաստանի ամբողջականութեան ու անվտանգութեան եւ Արցախի հայութեան ինքնորոշման:

Մենք տարածաշրջանէն ներս Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններու բնականոնացման սկզբունքով համաձայն ենք. սակայն ո՛չ ի հեճուկս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ մեր ժողովուրդի իրաւունքներու հատուցման:

Պարտաւորական ու գիջողական դիրքերէ պէտք է քանակցինք եւ պէտք է խուսափինք համաձայնագրեր ստորագրելէ: Հայաստանի իշխանութիւնը այսօր, վաղը եւ մի՛շտ, պէտք է գիտակցի, որ համահայկական բնոյթ ու տարողութիւն ունեցող խնդիրներու գծով իրաւունք չունի առանձին որոշումներ առնելու: Հայաստանի բարեկամներն ու թշնամիները եւս պէտք է գիտնան, թէ հսկայ Սփիւռք մը կայ Հայաստանի ու Արցախի ժողովուրդի կողմին եւ անոնց պահանջներուն ետին:

Իր հողային ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը, ինչպէս նաեւ Արցախի ինքնիշխանութիւնը կորսնցնելու վտանգին ենթակայ, անորոշ ապագայի դիմաց գտնուող Հայաստանը կարիք ունի խոհեմութիւն ու հեռատեսութիւն, քաջութիւն ու տեսլական ունեցող քաղաքական դեկավարներու, որոնք կարենան.–

– Հայրենիքի գերագոյն շահերուն շուրջ համախմբել մեր ժողովուրդի բոլոր զաւակները եւ անսասան պահել Հայաստանի գերիշխանութիւնը:

– Վերջ տալ այլամերժութիւնը խորացնող ու բռնութեան առաջնորդող բեւեռացումներուն:

– Արցախի հայութեան ինքնորոշման արդար իրաւունքը սակարկութեան նիւթ չդարձնել:

– Հայոց բանակին հզորացումն ու արդիականացումը նկատել առաջնահերթ:

Ըլլանք արթուն: Թուրքիան եւ Ազրպեյնանը բարի դրացնութեան ֆոդին ներքեւ կ'ուզեն կտրատել Հայաստանը ու ջլատել մեր ազգին ոյժը:

Ըլլանք իրատես: Ներկայ վտանգալից կացութեան շարունակումը պիտի հիւծէ մեր ներուժը, ֆայֆայէ տնտեսութիւնը եւ արտագաղթի դռները լայնօրէն պիտի բանայ: Մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան այս նակատագրական հանգրուանին, ահաւոր տագնապներով շրջապատուած ու հոգեվարքի մէջ գտնուող Արցախն ու Հայաստանը, Սփիւռքին հետ միասին, հրամայական ու անյետաձգելի կարիքը ունին հայրենիքը դէպի փրկութիւն առաջնորդող ամուր միասնականութեան:

Սարդարապատի միասնականութիւնը փրկեց Հայաստանը: Այսօր եւս Սարդարապատեան շունչով ու ոգիով թրծուած նո՛յն միասնականութիւնը պիտի փրկէ մեզ:

Մայիս 28-ը հրաւէր է զգաստութեան ու ինքնաբերականութեան եւ կոչ՝ պատասխանատուութեան ու նպատակաւաց յանձնառութեան, ի խնդիր միակամ հայութեան, ինքնավար Արցախի եւ հզօր Հայաստանի:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՅՐԱՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ**

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Շաբաթ, 21 Մայիսին, Կիրակնամուտքի ժամերգութեան աւարտին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, ձեռամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ սկիզբ առաւ Դպրեվանքի երեք աւարտական սարկաւազներու քահանայական կոչման արարողութիւնը:

Ընծայեալ սարկաւազները, խարտաւիլակ Հայր Սուրբին առաջնորդութեամբ, եկեղեցոյ գաւիթէն ծնրադիր առաջնորդուեցան մինչեւ բեմ՝ իրենց ուխտը կատարելու եւ դառնալու հաւատարիմ ու ծառայասէր սպասաւորներ:





րը Հայ եկեղեցւոյ: Արարողութեան ընթացքին անոնք հրաժարեցան եւ նզովեցին բոլոր հերձուածողներն ու հերետիկոսները, հաւատքի ամրութեամբ ընդունեցին ու դաւանեցան Ս. Հայրապետներու բոլոր ուսուցմներն ու կանոնները եւ խոստացան աշակերտիլ եկեղեցւոյ ուղղափառ բոլոր ուսուցումներուն մինչեւ վախճանը իրենց կեանքին:

Արարողութեան աւարտին, ընծայեալ երեք սարկաւազները Հաւատքի Ուղղափառ դաւանութիւնը ընթերցելէ ետք, Աստուծոյ օրհնութեամբ եւ ազատ կամքով յանձն առին կուսակրօն քահանայութեան կարգը եւ առաջի Աստուծոյ ու հաւատացեալ ժողովուրդեան կատարեցին իրենց ուխտը եւ տուին իրենց խոստումը:

ա) Հայ Առաքելական Ս. եկեղեցւոյ ծառայութեան մէջ սրբութեամբ ապրիլ: Ըլլալ ժրաջան ու արթուն՝ Աստուծոյ խօսքին ուսման ու ուսուցման մէջ եւ դառնալ ճշմարիտ քարոզիչն ու պաշտպանը:

բ) Անշեղօրէն հետեւիլ սուրբ հայրերու առաքինի վարքին եւ գործերուն: Ըլլալ հաւատարիմ ու պաշտպան մեր Ս. եկեղեցւոյ կարգ ու կանոնին, ծէսին ու դաւանանքին, Աւանդութիւններուն ու սրբութիւններուն:

գ) Մինչեւ վախճանը իրենց կեանքին հաւատարիմ մնալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Աթոռին, հնազանդիլ գահակալ Վեհափառ Հայրապետին, գործադրել Միաբանութեան Կանոնադրութիւնը եւ ամբողջական նուիրումով սատարել Ս. Աթոռի առաքելութեան ու ծառայութեան առաւել ծաղկման:

Իսկ Կիրակի, 22 Մայիսին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին հանդիսապետեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Յընթացս Ս. Պատարագին, ընծայեալները ծնրադիր բարձրացան Ս. Խորան, ուր աշխարհէ հրաժարման սրտառուչ պահէն ետք հրաւիրուեցան Քրիստոսի ծանր, սակայն քաղցր լուծը առնելու իրենց ուսերուն:

Սրբալոյս միւռոնով օծման պահուն, ձեռնադրիչ Սրբազանը դրոշմեց ընծայեալներուն ճակատը, աջ ու ձախ ձեռքերը նոր անուն տալով անոնց իբրեւ նորոգուած՝ Աստուծոյ ծառայութեան ընծայուած նոր մարդ: Անուանակոչութեան հոգեթով պահուն, Բարչ. Հրակ Սրկ. Գալայճեանը վերանուանուցաւ Տ. Արմէն Քահանայ, Բարչ. Շանթ Սրկ.



Գատէհճեանը՝ Տ. Առաքել Քահանայ եւ Բարչ. Նարեկ Սրկ. Ֆիլիքեանը՝ Տ. Ազատ Քահանայ: Ապա, անոնք տուին իրենց անդրանիկ խաղաղութիւնը Մայր Տաճարին մէջ հաւաքուած հաւատացեալներուն:

Իր քարոզին մէջ, Սրբազանը Աստուծոյ փառք եւ գոհութիւն յայտնելէ ետք, որդիական երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին իրեն ընծայուած այս ա-

ռիթին համար: Իր խրատական խօսքը ուղղելով նորընծաներուն, ան ըսաւ. «Դուք այլեւս չէ՛ք պատկանիր ձեր անձին, այլ կը պատկանիք բոլորին: Ան, որ եղբայր է Քրիստոսի, ձեր եղբայրը կը դառնայ այսօր. ան, որ մայր է Քրիստոսի, ձեր մայրը կը դառնայ այսօր: Հոգեւորական դառնալը դիւրին բան չէ. հոգեւոր ապրումներ ունենալը ժամանակաւոր ընթացք չէ. դուք ամէն





օր հրաւիրուած էք ձեր հոգեւոր կեանքին մէջ նոր մակարդակ եւ գազաթ մը նուաճելու: Ժողովուրդը ցաւեր ունի եւ ականջ կը փնտռէ, որպէսզի պատմէ



իր յոյզերը, ցաւերը եւ տագնապները. ան որ ձեր դո՛ւռը կը զարնէ՝ կը բանաք այդ դուռը եւ ահանջ կու տաք այդ ցաւերուն ու տագնապներուն, որ ժողովուրդը կ'ուզէ խօսիլ ձեզի, այդ ոչ թէ միայն ձեր պարտականութիւնն է, այլեւ սրբազան պարտաւորութիւնը»: Աւարտին, Սրբազանը շնորհաւորեց Նորին Ս. Օծութիւնը, Միաբանութիւնը, Արեւմտեան Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ՝ տէր եւ տիկին Վահէ եւ Յասմիկ Յովակիմեան ամուլը, նուիրեալներուն ծնողները եւ ժողովուրդը ամբողջ:

Ողջոյնի պահուն, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, ներկայ ամբողջ միաբանութիւնը խորան բարձրացաւ համբոյրով ողջունելու նորընծաներուն մուտքը Հայ եկեղեցւոյ ծառայութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանական ուխտէն ներս:

Ապա, նորընծաները աւանդատան մէջ ստացան առաջին լուացումը, իրենց կնքահօր՝ տիար Վահէ Յովակիմեանի կողմէ: «Հայր Մեր»էն անմիջապէս առաջ տեղի ունեցաւ Վեղարի Օրհնութիւն, որով կուսակրօնութեան իբրեւ նշան, միաբանական կնքուղը դրուեցաւ նորընծաներուն գլխուն:

Ս. եւ Անմահ Պատարագէն ետք, միաբանական թափօրը ուղղուեցաւ Վեհարան, ուր նորընծաները ստացան Վեհափառ Հայրապետին անդրանիկ օրհնութիւնը:

ԴՊՐԱՑ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 5 Յունիսին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յընթացս Ս. Եւ Անմահ Պատարագին տեղի ունեցաւ դպրաց եւ կիսասարկաւագաց ձեռնադրութիւն, ձեռամբ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի հսկիչ՝ Հոգշ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեանի:

Ուրախութիւն էր Դպրեվանքի մեծ ընտանիքին համար, որ իր սաներէն 19 նոր մշակներ կը յանձնէր Հայ եկեղեցւոյ դպրաց եւ կիսասարկաւագաց դասուն: Կիսասարկաւագական կարգ ստացան չորս ընծայարանականներ՝ Անդրանիկ Մինասեան, Սերճ Քիւչէրեան, Հրակ Թաշճեան եւ Դրօ Կիւլէսէրեան, իսկ դպրութեան կարգ ստացան տասնհինգ ժառանգաւորներ՝ Յարութիւն Պէրէճիքլեան, Սարգիս Քիլիճեան, Հրակ Պոյաճեան, Նարեկ Պոյաճեան, Աբրահամ Պայտուն, Սարգիս Մովսէսեան, Արմէն Մովսէսեան, Սարգիս Փալասեան, Խաչիկ Բալասեան, Նորիկ Վարդանեան, Դրօ Կիւլէսէրեան, Սերճ Քիւչէրեան, Հրակ Թաշճեան, Յովհաննէս Յովհաննէսեան եւ Լեւոն Սեղրակեան:

Իր քարոզին մէջ, ձեռադրիչ Սրբազանը որդիական երախտագիտութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ իրեն առիթը շնորհեց եկեղեցւոյ ծառայութեան հրաւիրելու 19 նոր ձեռնադրեալներ:



Խօսելով օրուան տօնին ու խորհուրդին մասին, Սրբազանը անդրադարձաւ Վերնատան մէջ պատահած Ս. Հոգիի էջօրին: Իր խօսքը ուղղելով նորօք ձեռնադրեալներուն, Սրբազանը ըսաւ. «Այսօր դուք ստացաք ծառայութեան առանձնաշնորհումը եւ այդ ծառայութիւնն է որ ձեզ պիտի կազմաւորէ, որպէսզի օր մը նաեւ Ս. Խորան բարձրանաք՝ ձեր անձերուն ամբողջական ինքնընծայումը կատարելու համար»: Աւարտին, Սրբազանը անոնց մաղթեց, որ իրենց նոր ստացած պաշտօններուն ընդմէջէն ստանան Ս. Հոգւոյն շնորհքը եւ պատրաստուին Հայ եկեղեցւոյ ամբողջական ծառայութեան:

Դպրեվանքը նման պատանի ու երիտասարդ ոյժեր կը պատրաստէ, այնպիսի մշակներ, որոնք կ'երթան ժողովուրդին՝ նուիրումով ծառայելու համար անոր: Ա՛յս է Դպրեվանքի սրբազան առաքելութիւնը:

ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 12 Յունիսին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին տեղի ունեցաւ սարկաւազական ձեռնադրութիւն, ձեռամբ Մայր Տաճարի լուսարարպետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի հսկիչ՝ Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեանի: Սարկաւազական կարգ ստացան Դպրեվանքի ընծայարանականներէն՝ Երուանդ Կիս. Եղիայեան, Անդրանիկ Կիս. Մինասեան եւ Սերժ Կիս. Քիւշէրեան:



Պատարագի ընթացքին, խարտաւիլակ Հայր Սուրբին առաջնորդութեամբ, ընծայեալները ծնրադիր բարձրացան Ս. Խորան, ուր ձեռնադրիչ Սրբազան Հայրը աղօթք բարձրացնելով՝ խնդրեց, որ Աստուած երկնային իմաստութեամբ օժտէ զանոնք, որպէսզի դառնան հաւատարիմ եւ ժրջան ծառաները Հայ եկեղեցւոյ: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ...» շարականի երգեցողութեամբ, անոնք հրաժարեցան երկրաւոր եւ աշխարհիկ փառքերէն: Ապա, Սրբազանը ձեռնադրեալներուն շնորհեց Աւետարան ընթերցելու, Ս. Խորանին սպասարկելու եւ Տիրոջ Ս. Սեղանին խնկարկելու իշխանութիւնը:

Իր քարոզին մէջ, Սրբազանը անդրադառնալով սարկաւազութեան անխոնջ ու նուիրական ծառայութեան, ըսաւ. «Դուք այսօր, այս սրբազան Խորանին վրայ, Ս. Հոգւոյ շնորհքով սարկաւազութեան աստիճանին հրաւիրուեցաք ու Հայ եկեղեցւոյ սրբազան բեմին ծառայելու իշխանութիւնը ստացաք: Դուք այսօր Յիսուս Քրիստոսի վկաները դարձաք, ինչպէս եղան եկեղեցւոյ առաջին սարկաւագները, գլխաւորութեամբ Ս. Ստեփանոս նախավկայ սարկաւագին: Իմ սրտագին մաղթանքն է, որ Ս. Հոգին ձեզ մշտապէս լուսաւորէ, ձեր սրտերուն մէջ դրոշմէ Քրիստոսի սիրոյն կնիքը եւ ձեր մէջ բռնկեցնէ հաւատքի կրակը: Զեր ստացած Ս. Հոգիի այս մկրտութեամբ, դուք կը դառնաք ընտիր անօթները հաւատոյ եւ ծառայութեան ու ընտիր սպասաւորները Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին սրբազան առաքելութեան»: Ապա, ան շնորհաւորեց Ս. Աթոռոյս արժանըն-



տիր գահակալ Վեհափառ Հայրապետը, Դպրեվանքի տեսչութիւնը, միաբանութիւնը, ընծայեալներուն ծնողները եւ հաւատացեալ ժողովուրդը:

Ս. Պատարագի աւարտին, շաբաթ մը առաջ կիսասարկաւագութեան եւ դպրութեան կարգ ստացած ձեռնադրեալներուն հետ միասին, նոր ընծայեալ սարկաւագները, ձեռնադրիչ Սրբազան Հօր առաջնորդութեամբ, բարձրացան Վեհարան, ուր ստացան Նորին Ս. Օծութեան հայրական օրհնութիւնը:




Հ Ա Յ Դ Ա Տ

**ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ
ԹՈՒՐՔԻՈՅ ԴԵՄ ԲԱՑՈՒՎԾ
ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԴԱՏԸ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է**

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդին, Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դատ բացած էր Թուրքիոյ պետութեան դէմ՝ պահանջելով Սիսի պատմական Կաթողիկոսարանի վերադարձը: Յիշեալ դատը հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարի ծիրէն ներս առաջին իրաւական քայլն էր:

Արդարեւ, նախ Թուրքիոյ Մահմանադրական Դատարանին մօտ բացուած դատի քննութիւնը մերժուած էր եւ ապա՝ Կաթողիկոսարանը դիմած էր Եւրոպայի Մարդկային Իրաւանց դատարան: Այս վերջինը, մեկնելով իր սկզբունքներէն, թէ իրեն ներկայացող դատական թղթածրարը հարկ էր տուեալ երկրին դատական ատենաներու բոլոր հանգրուանները բոլորած ըլլար, թելադրած էր թրղթածրարը յղել Թուրքիոյ Նախադատ Ատենան:



Կաթողիկոսարանի իրաւական յանձնախումբը, անհրաժեշտ խորհրդակցութիւններէ ետք, որոշեց դիմել Թուրքիոյ Նախադատ Ատենան, այն յստակ համոզումով ու հեռանկարով, որ Թուրքիոյ դատական համակարգին կողմէ դատը մերժուելէ ետք ուղղակիօրէն պիտի դիմէ դարձեալ Եւրոպայի Մարդկային Իրաւանց դատարանին:

Յայտնենք, որ շուրջ ամիս մը առաջ, յիշեալ դատին գծով, Թուրքիոյ Նախադատ Ատենան իր վճիռը արձակեց եւ թղթածրարը այժմ կը գտնուի Վերաքննիչ Ատենան մօտ:

Կաթողիկոսարանի իրաւական յանձնախումբը, որուն մաս կը կազմեն հայ եւ օտար իրաւագէտներ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, մօտէն կը հետեւի դատի իրաւական գործընթացին:

ՄԻԻՌՆՈՐԶՆԷՔ

ՄՐԲԱԼՈՅՍ ՄԻԻՌՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կիրակի, 15 Մայիսին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, միաբան հայրեր եւ դպրեվանեցիներ կատարեցին երեկոյեան ժամերգութիւն, որմէ անմիջապէս ետք Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայր Տաճարի կողքը, ուր սկիզբ առաւ Սրբալոյս Միւռնոնի պատրաստութիւնը:



Տէրունական աղօթքէն ետք, Վեհափառ Հայրապետը աղօթք առաքեց առ Աստուած, որ Միւռնոնը դառնայ օրհնութիւն եւ խաղաղաբեր Հայ եկեղեցւոյ, Հայրենիքին, Սփիւռքին ու ամբողջ աշխարհին համար եւ ապա, Միւռնոնի պատրաստութեան կաթսայի կրակը վառեց: Նորին Ս. Օծութիւնը իր Հայրապետական խօսքը ուղղելով միաբան հայրերուն ու ներկաներուն, ըսաւ.

«Այս Սրբալոյս Միւռոնով եկեղեցւոյ սպասաւորներ պիտի օծուին, մանուկներ մկրտուին եւ հիւանդներ բժշկուին. աղօթող եմք, որ անիկա դառնայ բալասան հիւանդներուն եւ օրհնութիւն՝ հայ ազգին ու ժողովուրդին»:



Յայտնենք, որ գլխաւորութեամբ Մայր Տաճարի լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի եւ մասնակցութեամբ միաբան հայրերու, 40 բոյսերու ու ծաղիկներու հիւթերէ պատրաստուած Ս. Միւռոնը 48 ժամ անդադար եփուեցաւ աղօթքներով, սաղմոսասացութիւններով եւ աւետարանական ընթերցումներով: Ապա, Հայ եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, տեղադրուեցաւ Մայր Տաճարի Ս. Խորանին ձախակողմը եւ այդտեղ մնաց 40 օրեր շարունակ:

ՄՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ

«ՄՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ»ԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌՅԱՆՑ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Սփիւռքի Տարի»ին առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպած առցանց հանդիպումներուն 4-րդը յատկացուած էր տեղեկագիտութեան: Ժողովին նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը: Առցանց նիստին մասնակցեցան «Սփիւռքի Տարի»ին աշխատանքները համակարգող յանձնախումբի անդամներն ու այս մարզին մէջ աշխատող մասնագէտներ: Նիստին զեկուցելու համար հրաւիրուած էր «Սիոփսիս» (Syopsys) կեդրոնի եւ «Արմիւնիքս Վըրշուլլ Գոլէճ»ի (Armenian Virtual College) համահիմնադիր՝ դոկտ. Երուանդ Զօրեան:

Նիստին բացումը կատարելով Վեհափառ Հայրապետը, խօսեցաւ այսօրուան աշխարհակարգին գլխաւոր երկու յատկանիշներուն մասին՝ փոխկապակցուածութիւն (Interconnectivity) եւ յարաբերութիւն-հաղորդակցութիւն (Communication): Ան ընդգծեց, Աստուածաբանական առումով, տիեզերքի արարչագործութեան, այդ բոլորին մէջ ներդաշնակութեան, եւ մանաւանդ մարդուն կողմէ արարչագործութեան պարզեւներուն ճիշդ օգտագործման հրամայականը:

Անդրադառնալէ ետք սփիւռքեան բազմազոյն, բազմաշերտ, շատ տեղեր խոպան եւ անկազմակերպ իրավիճակներու մասին, Նորին Սրբութիւնը շեշտեց, որ այս բոլոր խնդիրներու կազմակերպման աշխատանքներուն մէջ այնպէս ընել, որ առաւելագոյնս ներդաշնակ եւ օգտակար եղանակներով կարելի ըլլայ արհեստագիտական նորարարութիւնը լաւագոյնս օգտագործել համասփիւռքեան ծրագիրներու մշակման եւ կիրարկման համար:

Այնուհետեւ դոկտ. Զօրեան զեկուցեց տեղեկագիտական արհեստագիտութեան արդի ուղղութիւններուն մասին՝ արագ ակնարկով ներկայացրնելով այս մարզի հոլովոյթը: Ան հաստատեց, որ իւրաքանչիւր 10 տարի աշխարհը ականատես եղած է արհեստագիտական յեղափոխութեան մը, որ բոլորվին նոր հունաւորում բացած է այս մարզին մէջ: Համակարգիչէ համացանց, ապա շարժուն-խելացի (smart-mobile) համակարգ անցումներէն ետք այսօրուան ուղղութիւնը կեդրոնացած է արհեստական բանականութեան վրայ (artificial intelligence):

Մասնագիտական զեկուցումին եւ այնուհետեւ անոր հետեւած քննարկումի ընթացքին ընդգծուեցան հետեւեալ կէտերը. —



Ա) Տուեալներու հաւաքագրումը խիստ կենսական է Սփիւռքի գոյքագրման եւ մասնագիտական մարդուժի ցուցակագրման աշխատանքին համար:

Բ) «Զիփեր»-ու այսօրուան արտադրութեան ճարտարագիտութիւնը հիմնուած է ծաւալի փոքրացման, բազմապատկուած տուեալներու ներառման եւ արագութեան բազմապատկութեան սկզբունքներուն վրայ: Հայկական տեղեկագիտական գործօնը այս նոր ուղղութիւնը նկատի պէտք է ունենայ իր ցանցային աշխատանքները կազմակերպելու ընթացքին:

Գ) Այսօրուան աշխարհակարգը կ'աշխատի ապակեդրոն, ապամեկուսացուող եւ անվերջ նորացուող դրութիւններով: Մեր աշխատանքներուն մէջ այս աշխատակարգը նկատի ունենալ յատկապէս մեր դասական կառոյցներէն դուրս գտնուող զանգուածներուն հետ կապ հաստատելու համար:

Դ) Մեր կրթական, մշակութային եւ կուսակցական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ոչ միայն արխիւը, այլ ամբողջ աշխատելաեղանակը ամբողջական համակարգչայնացումի եւ թուայնացումի անյետաձգելի պահանջին առջեւ կը գտնուին: Սփիւռքի տարրուան առիթով այս աշխատանքին պէտք է թափ տալ:

Ե) Յատուկ ծրագրաւորումներով յառաջացնել «cyber community»՝ մասնագիտական հիմունքներով:

Նիստի աւարտին, Վեհափառ Հայրապետը գոհունակութիւն յայտնեց այս խիստ արդիական թեմային ընդառաջ կայացած առաջին նիստին համար եւ շեշտեց այս բոլորը մեր մարդկային ու ազգային արժէհամակարգի գերադասումով բանեցնելու կարեւորութիւնը: Այս առումով, Նորին Սրբութիւնը վեր առաւ համասփիւռքեան եւ համահայկական նպատակներու շուրջ համախմբումներ յառաջացնելու, կայուն ու գրաւիչ թեմաներով երիտասարդ խաւը ներգրաւելու եւ հնամաշ գաղափարներէ ու գործելաոճերէ դուրս գալով ներկայ արհեստագիտութիւնը լիարժէք օգտագործելու համար անխոնջ աշխատելու հրամայականը:

ՆՈՐ ՍՓԻՒՌԸ ՆՈՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Նոր տարուան յաջորդող օրերուն, եւ վերանորոգուող ու վերակազմակերպուող Կիլիկիա Մատենադարանի աշխատանքներուն ընթացքին, մտքովրս պիտի չանցնէր յօդուած մը գրել, եթէ դէմ յանդիման եղած չըլլայի Անթիլիասէն ի լուր հայութեան հրապարակուած Արամ Ա. Կաթողիկոսի նոր հռչակագիր պատգամին:

Առաջին անգամը չէր որ նման գիր մը, ինչ անուանում ալ ունենար՝ «Կոնդակ», «պատգամ», «քարոզ» կամ «հռչակագիր», դուրս կու գար հայոց կաթողիկոսի մը գրիչէն, այս պարագային Արամ Վեհափառ Հայրապետի մտքին ու հոգիին արտագնացումէն:

Սակայն, ա՛յս մէկը ամէն իմաստով տարբեր էր նախորդներէն, ո՛չ միայն հեղինակին հրապարակումներէն, այլեւ Հայ եկեղեցւոյ գլխաւոր եւ գլխագիր ծառաներէն ու առաքեալներէն, որովհետեւ պարզ ու մեկին բացատրութեամբ՝ նիւթի մը կամ գաղափարի մը առնչուած սովորական, հերթական, ամէնամեայ քննարկումներէ, վերլուծումներէ ու առաջադրութիւններ ներկայացնելէ անդին, հայութեան ժամանակակից տագնապին կամ «ըլլալ-չըլլալուն», գոյութեանական լրջագոյն հարցին բարձրաձայնումն է, պարզապէս դրուած «Սփիւռքի Տարի» պիտակումին ներքեւ:

Եւ ի՞նչ է առաջարկուածը, եթէ ոչ 21-րդ դարու առաջին քառորդը չբուրած կամ չամբողջացուցած համայն հայութեան, համահայկական ըսենք կամ այլ բնորոշում մը տանք, սպառնացող մեծագոյն տագնապին ընդառաջ, ի հաշիւ յաջորդ ու գալիք տարիներուն եւ սերունդներուն, նոյնիսկ ամբողջ դարաշրջանի մը՝ բացայայտումը:

Այս գիրը տագնապին դիմաց տագնապով, բայց ո՛չ ընկրկումով կամ յուսահատութեամբ գրուած եւ տագնապի թանաքին մէջ թաթախուած, հայրապետական կարմիր՝ բոսորային եւ արիւնանման մեկանով գրուած, սրտի խորագոյն ու վաւերական փոթորկումներէն ծնած, ժայթքած եւ մշակուած հռչակագիրն է, մեր գոյութեան սպառնացող անառարկելի վտանգին դիմ յանդիման:

Այլ առիթով, հաւանաբար, վերադառնամ, ինչպէս որ շատեր անկասկած պիտի վերադառնան հո՛ն արծարծուած հիմնական ու հիմնարար խնդիրներուն, հարցադրումներուն եւ առաջարկներուն:

Այսօր, սակայն, արեւածագէն առաջ թուղթին յանձնածս մտածումները կը փորձեմ զուգահեռականով մը ներկայացնել, գործնապէս ու ֆիզիքապէս

մասնակցելու յանձնառութեամբ, ա՛յն քննարկումներուն, որոնք նոյնիսկ հըռ-
չակագիրի պաշտօնական ու հրապարակային ընթերցումէն առաջ եւ առըն-
թեր, ընկերային ցանցերու կամ ուղղակի յօդուածի տեսքով, եւ նոյնիսկ
անձնական խոկումներուն հաղորդ դարձնելով, հայութեան գէթ տազնապող
մտաւորական շրջանակներէն կը հոսին մեր մտապաստառին վրայ ու դիմաց:

Աւելին, մեր մամուլին ու յատկապէս առաջին պաշտօնական ու հրապար-
ակայ՛ին քննարկումի երեկոյին ընթացքին հնչած, թէ «ուշ ուշ են գալիս,
բայց ո՛չ ուշացած», վերլուծումը հայութեան գոյութիւնը, ինքնութիւնը,
պատկանելիութիւնը եւ «յաւերժական գնացքը» տազնապեցնող մեծագոյն
հարցադրումին, ի՞նչ պիտի ըլլայ հայութիւնը, եւ հայութեան ու հայրենիք-
նին վիճակը:

Այս հարցադրումը նոր չէ մեր ժողովուրդի կեանքի պատմութեան ու
պատմական ընթացքին մէջ, ո՛չ ալ առաջինը կամ, մանաւանդ, վերջինը ըլ-
լալու դատապարտուած:

Զարմանալի զուգահեռներ եւ զուգահեռականներ կան ա՛յս հռչակագի-
րին եւ մեր եկեղեցւոյ ու Ս. Աթոռին սրբանուն, լուսամիտ եւ բազմաշարժար
այլ հայրապետի մը՝ երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի
«Կտակ»ին միջեւ, որ կը սկսի «Հասած է ժամանակը, եւ թերեւս անցած...»
բառերով: Կտակը, 9 էջ, տպագրուած Հալէպի մէջ, 1928-ին:

Արդարեւ, ա՛յդ Հայրապետը, 100 տարի առաջ, համաշխարհային առաջին
մեծ պատերազմէն ետք, ապրիլ/չապրելու հայութեան տազնապին մէջ, ակա-
մայ դուրս եկած հալածական, վտարանդի եւ գաղթական՝ իր ժողովուրդին
պէս ու անոնց հետ, պատմական հայկական Կիլիկիայէն, եւ Հայոց Յեղաս-
պանութեան վերքերը տակաւին չսպիացած ու կոտորացող անհաւատալի ցա-
ւերով գրիչը թաթխեց իր ժողովուրդի արեան ու արցունքին մէջ:

Եւ աւելին, հայոց նորանկախ Հանրապետութիւնը ամբողջատիրական
վարչակարգի մը ենթակայ դառնալէ ետք, անորոշութեան ու մթազնած
հորիզոնին առջեւ, Հայ եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներուն սպառնա-
ցող անյաղթահարելի թուացող վտանգներուն դիմաց, հարց կու տար թէ
ի՞նչ պիտի ըլլար Կիլիկիոյ Ս. Աթոռին վիճակը: Այս իրականութեան մէջ
տողընդմէջ ու տողատակին պիտի կարդացուէր, կրկին՝ ա՛յդ օրերու «ղեկա-
վարութեան» եւ «մտաւորականութեան» կողմէ, թէ ի՞նչ պիտի ըլլար ողջ
հայութեան անբարունակ ներկայ վիճակը:

Անցեալէն այսօր մեր մէջ քիչ բան փոխուած ըլլալու է: Այնպէս կը թուի
որ մեր ժողովուրդին երբեմն անհրաժեշտ է «մեծ ցնցում» մը, զգաստութեան
գալու եւ անդրադառնալու իր իսկական վիճակին: Ազգին, եւ այս պարա-
գային Սփիւռքի նորոգութեան մասին մտահոգուիլն ու մտածելը, տակա-
ւին, ամէն ինչի սկիզբն է: Մեծ ցնցումներէն ու տազնապներէն կը ծնին մեծ
լուծումներն ու «Ելքը»: Եթէ խաղաղ (յարաբերական իրականութիւն մը մեր

ժողովուրդին համար) օրերուն խօսուի տազնապներու մասին, մեծ հաւանականութեամբ յոռետեսութիւն որակուի կամ թարգմանուի: Ասոր դիմաց, ամենհի՛ ուռճացող սպառնալից վտանգներուն մէջ չխօսիլ տազնապներու մասին, պիտի նշանակէր, եւ այսօ՛ր կը նշանակէ մահացու ութերորդ մեղքին՝ անտարբերութեան մէջ «ապրիլ» կամ «Չայլամի հոգեբանութիւն» ունենալ:

Եւ ա՛յս Հայրապետը, 100 տարի յետոյ, կը տազնապի, բայց չի յուսահատիր, եւ տազնապն ու անոր հետեւանքները կը շահարկէ՝ վերակենդանացման համար, կ'աշխատի եւ մեզ իր հետ կ'աշխատցնէ տազնապները վերացնելու եւ յաղթահարելու մարտահրաւէրը կը կարդայ բոլորիս, առանց բացառութեան՝ Հայաստանի Հանրապետութեան ու ժողովուրդին, Արցախի Հանրապետութեան ու ժողովուրդին, եւ համաշխարհայնացած ու սփռուած հայութեան, մեր ժողովուրդին՝ Սփիւռքին: Ահագանգէն կամ վերջին կանչէն անդին երթալ կը նշանակէ՝ մահաքունի երթալու նշանները տեսնելով հիւանդը արթնցնել, առողջացման հնարքները ներկայացնել, բժշկական մասնագիտական միջամտութիւնները ապահովել կամ ապահովել տալ: Այլ խօսքով ու բացատրութեամբ՝ վերականգնումի ու վերյառնումի/վերյարութեան ուղիները բացայայտել, հրաւէր կարդալով հանուր հայութեան, մէջքը շտկելու եւ անկոտորում կամքով անգամ մը եւս, դարձեալ, վերսկսելու իր հաւաքական, համայնքային ու հայկական կեանքը, նոր հորիզոններու դիմաց, ինքնաքննութեամբ, բայց մանաւանդ ինքնավստահութեամբ ու վճռակամութեամբ շարունակելու երթը՝ դէպի հայութեան լուսաւոր ապագան:

Այդ օրերու «Կտակ»ը արձագանգուեցաւ (թեր ու դէմ կարծիքներով), որմէ ինքնաճանաչման, մեր ընելիքները ճանչնալու, գիտնալու եւ գործելու տեսութիւններէն անդին ու վեր՝ ծնաւ Անթիլիասը, վերընձիւղուած Կաթողիկոսութիւնը: Վերակազմակերպուիլ սկսան մեր գաղութները, համայնքները, թեմերը, մէկ խօսքով եկեղեցին, իր լայն ըմբռնումին եւ ընկալումին մէջ: Եւ ցայսօր գործող Սփիւռքը, այդ օրերու նոր Սփիւռքը, որուն արմատները տակաւին տազնապահար Միջին Արեւելքի մէջ են եւ ուրկէ դարձեալ/կրկին վերակազմակերպուելու եւ հայութիւնը վերակենսաւորելու կոչը, առաջադրութիւնը, պատկերացումը կամ տեսլականը կը հրապարակուի:

Այսօր եւ հիմա հրաւիրուած ենք վերանորոգուած կամ վերանորոգելի գիտակցութեան մը որդեգրումով, փոփոխուող կամ յարափոփոխ կացութիւններուն ու պայմաններուն համապատասխան գործելու եղանակով՝ յառաջ երթալ: Նորագոյն մարտահրաւէրներուն դիմաց ազատօրէն փոխակերպուելու եւ նորովին ապրելու հրաւէրին ընդառաջ, աչքի առջեւ ունենանք, օրինակ, Վեհափառին ընդգծած հետեւեալ իրականութիւնները.-

1) «Սփիւռքը կայուն իրականութիւն մը չէ, այլ մնայուն փոփոխութեան մէջ է»:

2) «Սփիւռքը երկար ժամանակ պիտի շարունակէ իր գոյութիւնը՝ ենթակայ գոլանաթափումի վտանգին»:

3) «Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է»:

4) «Ինչպէ՞ս կարելի է ներդաշնակութիւն ստեղծել հայու ինքնութեան երեք տարածքներուն՝ տեղայնականին, հայկականին եւ համաշխարհայինին միջեւ»:

5) Առաջնային անհրաժեշտութիւններն են. –

ա) «Համահայկական մտածողութեան մշակում» եւ

բ) «Սփիւռքի ներուժին կազմակերպումը ու օգտագործումը»:

Ահա մարտահրաւէրներ, որոնց յաղթահարման ու նոր/հին երազի մը իրականացման յոյսով պարտինք ապրիլ միասնաբար, գիտակցութեամբ ու յանձնառութեամբ գործել՝ ի խնդիր ներկայ եւ ապագայ նոր հայութեան եւ նոր Հայաստանին:

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Մատենադարանապետ



**«ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻ». ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ,
ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵՐ ՆԵՐԿԱՆ ԵՒ ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ**

Հայաստանաբնակ ըլլանք թէ տարտղնուած սփիւռք(ներ), մէկութիւն ստեղծելու համար պէտք է կարենանք սահմանել ԱԶԳԻ ՄՏԱԾ ՈՂՈՒԹԻՒՆ, զայն դարձնել հաւաքականութիւններու հասարակաց տեսիլք եւ ըմբռնում, որոնք այլազան են կամ չքացած:

Ի հարկէ պէտք է ուզենք մէկութիւն ստեղծել, ունենալ այդ կամքը, առանց մսկոտութեան եւ առանց հրաժարումները արդարացնող խոստանաւումներու: Եթէ ամբոխավարական ճառերը ծալլենք եւ վերցնենք, ունենանք առարկայական վերաբերում, կատարենք իրատեսական վերլուծում եւ փորձենք եզրակացութիւններու յանգիլ, հասկնալու համար թէ ո՞վ ենք, ի՞նչ

կ' ուզենք կամ պիտի ուզենք, ինչպէ՞ս, որոնց համար, վերականգնումի առաջին քայլը առած կ' ըլլանք: Մեր եզրակացութիւնները մեռած գաղափարներ՞ ըստ եւ թանգարանային կրկնութիւններ՞ պիտի ըլլան, թէ՛ տեւաբար կազմաւորուող եւ փոխուող աշխարհին մէջ հասարակաց յիշողութեամբ ինքնասահմանուող հաւաքականութիւնները պիտի խմբեն որպէս ինքնուրոյն միութիւն:

Ինքնաճանաչման եւ ինքնասահմանման ճիգը արդիւնաւոր դարձնելու համար, յանդգնութեամբ պէտք է առաջնորդուիլ եւ բանաձեւել, վիճարկել, գտնել, թէ՛ ի՞նչ բան կը միացնէ հայերը (10 կամ 15 միլիոն եւ թերեւս ալ ավելի), ի՞նչ բան զանոնք կը հեռացնէ իրարմէ, անոնք կը լրացնեն ԱԶԳ կոչուելու պայմանները, կամ կրնա՞նք ստեղծել ԱԶԳ ըլլալու պայմանները: Այս ԱԶԳի մտածողութիւնը պէտք է քննել անկախաբար ՊԵՏՈՒԹԵԱՆ ըմբռնումէն, քանի որ, ըստ մեր կրած, մշակած եւ զարգացուցած «քաղաքական գաղափարաբանութեան», մենք տեւած ենք, կը կարծենք տեւած ըլլալ, այսօր ալ կը հաւատա՞նք, թէ կրնանք տեւել նաեւ առանց ինքնուրոյն պետութիւն ըլլալու:

Դասական ըմբռնում է, որ ազգը որոշ մարդկային խմբաւորում(ներ) է, որ կ' ապրի պատմական հողամասի մը վրայ, զոր կը կոչէ հայրենիք, քանի որ հոն թաղուած կ' ըլլան իր նախահայրերը, հողամաս՝ զոր դրոշմած կ' ըլլայ իր կեանքով, կենցաղով, ան բաց գիրք է յիշողութիւններու, անոնցմով իւրացուած կ' ըլլայ հողը: Այդպէս չէ մեր ժողովուրդի կէսէն ավելիին կացութիւնը: Նոր աշխարհի գիւտէն ետք, երբ արշաւողները տէր դարձան տարածութիւններու, ուր ապրած էին ժողովուրդներ իրենց հայրենիքներուն մէջ, որոնք ունեցած էին իրենց պետութիւնները եւ մշակոյթները, ստեղծուեցան գաղութներ, որոնք կը պատկանէին նուաճող երկիրներուն, զորս կը կոչեն գաղութարարներ: Հետագային, հոն կազմուեցան պետութիւններ, որոնք վարչական տարածքներ էին, եւ քանի մը դար ետք, անոնք համարուեցան հոն բնակողներու հայրենիք: Ընթացքին տեղի ունեցաւ եւ կը շարունակուի ժողովուրդներու խառնուրդը:

Հայաստանի Հանրապետութեան տարածքը, գումարած Արցախը, պատմութեան աղէտներէն փրկուած բեկոր են, Հայոց հայրենիքի մնացորդաց: Հոն ապրած են հայեր, երբ պետութիւն ալ չկար, բայց անոնք պահած էին ՀԱՅՐԵՆԱՏԻՐԻ գիտակցութիւն եւ վարք, լեզուով, երգով, ինքնութիւն պահելու բնազդով: Հայրենատէրը պաշտպան է եւ ծառայ: Այդպէս պէտք է ըլլայ: Ան հիւր չէ, եւ ոչ ալ հեռուէն հետեւող հանդիսատես, որ մատները չ' այրեր, անհանգիստ չ' ըլլար:

Հայրենատիրութիւնը կ' ենթադրէ հաստ ինքնութիւն, ոչ միայն ծագման մը աղօտ գիտակցութիւն, ինչպէս, երբ կ' ըսուի, թէ՛ «հայրս կամ մեծ հայրս հայ էր», ակեղցնելով՝ «ամերիկացի, ֆրանսացի» կամ ծիածնային այլ «ացի»-

ներ: Այդ «հաստ ինքնուժիժիկներ» ինքնաբերաբար չի ստեղծուիր: Ան կ'ենթադրէ քաղաքական-գաղափարաբանական կազմակերպութիւն, որ կը թիրախաւորէ ընտանիքը եւ հաւաքականութիւնները եկեղեցիով, դպրոցով, լեզուով, մամուլով, իւրաքանչիւրին իր յարկին տակ հասնող պատգամներով, նաեւ ներազգային ամուր զօրակցութեամբ, ընելով այնպէս՝ որ քարափին մնացածներ եւ մոռցուածներ չըլլան: Համագումար՝ ազգային բովանդակութեամբ լայնածիր կազմակերպութիւն, որ չի գոհանար, պէտք չէ գոհանայ շարժումով, ինչպէս կ'ըսուի *homéopathique* (տնական կամ բուսական) դարմաններով:

Այսօր, քաղաքական եւ գաղափարական ազգային դրոշմով կառոյցներ պէտք են, եթէ չկան պէտք է գանոնք ստեղծել, որպէսզի հայը, ուր որ ալ գտնուի վերածնունդ ապրի, առանց չըջապատին եւ վարարող սպառողական ընկերութեան տուրք տալու, ստանձնէ ինքնուժիժիկ, պատկանելիութիւն, հպարտութիւն եւ պատասխանատուութիւն: Այս ստանձնելու արարումը ինքնաբերաբար պիտի չըլլայ: Ամէն հայ պատմաբան եւ քաղաքագէտ պիտի չըլլայ, բայց ամէն հայ պիտի ըմբռնէ, որ որպէս բարձրաճակատ եւ հպարտ մարդ ըլլալու համար տէր պիտի ըլլայ իր կացութեան, իրաւունքին, ընդունի որ ինք պատմութեան մը շարունակութիւն է, եւ հրաժարիլ այդ բոլորէն կը նշնակէ իր մարդու էութիւնը զիջիլ, շապիկ փոխել, դառնալ թուանշանով ճանչցող ձորճ Օրուէլի մարդատեսակը:

Հետեւաբար, Հայը ինքզինք պէտք է վերամտածէ եւ վերստեղծէ այնպէս, որ չդառնայ անանուն եւ անհասցէ արտադրող-սպառող մը, համաշխարհայնացման իրարանցումին մէջ վիճակագրական թուանշան մը, այլ ունենայ ինքնուժիժիկ: Այս ՀԱՅը միայն Հանրապետութեան բնակիչը չէ, այլ՝ Հայութիւնը, որուն պարտադրած են մէկուժիժիկ չըլլալ, որպէսզի կորսնցնէ իր ինքնութիւնը: Այսօր, զգացական եւ քաղաքական-գաղափարական կարճատեսութեամբ, հակառակ բաժակաճառային ճապկումներու, ՀԱՅՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՍԵՂՄԱԾ ԵՆՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ընելով այնպէս, որ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԴԱՌՆԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԱՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ՈՉ ԿԵՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ:

Հանրապետութիւնը վերջնական նպատակը չէ ԱԶԳին, այլ՝ ՀԱՅԱՍՏԱՆը իր ժողովուրդով: ԱԶԳը՝ Հանրապետութեան բնակչութեամբ եւ հայրենահանուածներու սփիւռքով: ՄԷԿՈՒԹԻՒՆ կը ստեղծուի այս քաղաքական-գաղափարական ըմբռնումի իւրացումով: ՀԱՅԱՍՏԱՆԱԿԵԴՐՈՆ ըլլալու ընտրանքը փոխարինուած է ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԱԿԵԴՐՈՆ ըլլալու ընտրանքով, որ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄՐԱՆՔԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒԹԻՒԸ ԴԱՏԱՊԱՐՏԱԾ Է ՕԺԱՆԴԱԿԻ ԴԵՐԻՆ, յաճախ գործածած եմ «կառքին հինգերորդ անիլ»ը ըլլալու. բարեսէր, բարերար, հեռուի հարուստ «Ամերիկայի հօրեղբայր»:

Հասարակ տեղիք բացատրութիւնն է ըսել, որ ժամանակը ի նպաստ մեզի չի թաւալիր: Բացատրութիւնը ճիշդ կ'ըլլայ, եթէ մենք տիրութիւնն չընենք ժամանակին, մեր ձեռքին չպահենք անոր դեկը:

Եթէ չտարուինք ասդին-անդին գումարուող ժողովներու յուզումներով, բեմերէն հնչող կրկնութիւններու աղմուկով, իրատեսութեամբ պիտի հաստատենք, որ ՀԱՅՈՒԹԻՒՆ անունով բնորոշուող միլիոններու ՍՓԻՒՔ(-ՆԵՐ)Ի ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԻ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՎՐԱՅ ՉՆՉԻՆ է, արդէն կ'ըսենք, որ ան սոսկ քարոզչական է: Հայ քաղաքական միտքը,- Հանրապետութիւն եւ սփիւռք(ներ),- անկարող եւ անատակ եղած է միացումով հզօրութիւն ստեղծելու, դիմագրաւելու մեր գոյութեան սպառնացող հին եւ նոր վտանգները: Կը փորձե՞նք բնաւ հաշուեկշիւը ընել ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ կեանքին մէջ ՍՓԻՒՔԻ ունեցած դերին, ներդրումին, մասնակցութեան, որոնք խորհրդային ժամանակաշրջանէն մինչեւ այսօր ծանծաղած են եւ կը ծանծաղին ջոջական-էսթէպլիշմընթային ցուցադրութեան մէջ (չառու, show):

Կազմթային հոգեպարար կամ թեր ու դէմ կարծիքներէ առաջ եւ վերջ, ինչպէ՞ս կը ստեղծուին համախոհական-համագործակցական ուժն ու ուժականութիւնը, համադրելով եւ նպատակասլաց եղանակով օգտագործելով մեր կարողականութիւնը (պոտենցիալ, potentiel): 3 մարտ 2021-ին, «15 Միլիոն ՀԱՅՐԵՆԱՏԷՐ-ԻՐԱԻԱՏԷՐԵՐՈՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ» խորագրով յօդուած մը գրած էի: Այսօր հարց կու տամ, թէ ո՞ր ներկայ են «15 Միլիոն ՀԱՅՐԵՆԱՏԷՐ-ԻՐԱԻԱՏԷՐԵՐ»ը Հանրապետութեան կեանքին մէջ, որպէսզի ան ըլլայ ՀԱՅԱՍՏԱՆ:

Արամ Ա. կաթողիկոսը 2022-ը յատարարեց «ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻ», որ կը նշանակէ քննել, թերեւս ալ որոշել, թէ ի՞նչ պիտի ըլլայ միլիոններու Սփիւռքի այսօրուան եւ վաղուան դերն ու կացութիւնը ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ հասկացողութեան շրջանակին մէջ, ոչ միայն ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ:

Բայց ո՞վ եւ որոնք պիտի կատարեն այդ ոչ կողմնապաշտական եւ ոչ աւանդական-ջոջական քննութիւնը: Քանի որ նախաձեռնողը Արամ Ա. Կաթողիկոսն է, լաւ պիտի ըլլայ, որ դասականէ տարբեր ոչ-էսթէպլիշմընթային «մտածողներու խորհուրդ մը հրաւիրէ», որպէսզի ուսումնասիրութիւններու ծրագիր մը մշակուի, անոնք կատարուին մասնագիտական եղանակով, որպէսզի ապագայ պատրաստելու համար գիտնանք, թէ ի՞նչ ենք, ի՞նչ կը ներկայացնենք որպէս ազգ, համրանք, ազգային ուժ, մշակոյթ, իմացական եւ տնտեսական կարողականութիւն, համրանքի ազգային որակ եւ յանձնառութեան պատրաստակամութիւն: Այս ընել թիւով եւ թուանշաններով, եւ ոչ փողոսկրեայ աշտարակի մէջ նստածի մարգարէական դատումներով:

Ի վերջոյ, պէտք է ճշդեւ նաեւ թէ ի՞նչ կը նշանակեն թուլթակաբար կրկնուող «համայն հայութիւն»ը, «համայն հայոց հայրենիք»ը, ի՞նչ է այդ եզրերու ետին գտնուող իրականութիւնը, որպէսզի բառերը չարչրկող ամբողջավարուլներէ հրաժարելով, իրատեսութեամբ դատենք անցեալը եւ ներկան, եւ սեւեռենք ապագան, ունենալով համապարփակ եւ հետեւողականութիւն պահանջող ընթացք եւ կազմակերպութիւն, ի հարկին շրջանցելով դասական շոջականութիւնը եւ հանգամանաւորական ճահճացումը: Աւելի իմաստուն եւ արդիական ըլլալու համար ըսենք՝ ռազմավարութիւն եւ մարտավարութիւն, որ եղած ըլլալը եւ ըլլալը իրարմէ ջոկենք:

Եթէ այս ճիգը չընենք, տարին պիտի աւարտի իր տարեդարձներով եւ տարելիցներով, եւ պիտի վերսկսինք, ի դէպ ի՞նչ ընելու եւ ո՞ր հասնելու համար:

Նշած յօդուածիս խորագրին տակ արձանագրած էի Ֆրանսացի մեծ գրող Անթուան տը Սէնթ Էկզուբերիի դիպուկ խօսքը. «Կարեւորը ընթանալ է դէպի եւ ոչ հասած ըլլալ»:

ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ թղթածարարը բաց պէտք է պահել եւ չմնալ միտքի մարզանքներու լաբիւրինթոսներու մէջ, միշտ յիշելով եւ յիշեցնելով, որ վաղը միշտ ուշ է:

Յ. ՊԱԼԵԱՆ



ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳ»Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ ՎԱՀԷ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԸ

Կիրակի, 22 Մայիսին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ձեռամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանին, տեղի ունեցաւ կուսակրօն քահանայի ձեռնադրութիւն եւ օծում: Աւանդութեան համաձայն ձեռնադրեալ քահանան կ'ունենայ կնքահայր: Երեք նորընծայ արեղաներուն կնքահայրութիւնը ստանձնեց յիշեալ թեմին Ազգային Վարչութեան ատենապետ՝ տիար Վահէ Յովակիմեանը:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գեղեցիկ ականգնութեան համաձայն, Դպրեվանքէն ներս, ի պատիւ նորած երեք արեղաներուն տեղի ունեցաւ ականդական պողատեղան-ընթրիքը: Վեհափառ Հայրապետին գլխաւորած ընթրիքին ներկայ էին՝ Տէր եւ Տիկին Վահէ եւ Յասմիկ Յովակիմեան, միաբան հայեր, Դպրեվանքի ուսուցչած կազմը, ուսանողութիւնն ու նորընծայ միաբաններուն ծնողները:

Աւարտին, Թորգոմ Սրբազանը ընթերցեց Նորին Ս. Օծութեան սրբատառ կոնդակը, ուր Հայրապետը ընդգծած էր Վահէ եւ Յասմիկ Յովակիմեան ամուլին Հայ եկեղեցւոյ նկատմամբ ցուցաբերած ծառայական նուիրուածութիւնը: «Հայ եկեղեցւոյ հանդէպ ձեր ունեցած նախանձախնդրութեան իբրեւ շօշափելի արտայայտութիւն, ձեր կարեւոր ներդրումը բերած էք, եւ կը շարունակէք բերել, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի գործունէութեան: Արդարեւ թէ՛ Ազգ. Երեսփոխանական Ժողովին ճամբով եւ թէ՛ որպէս անդամ ու ապա՝ Ատենապետ Ազգ. Վարչութեան, գործնապէս մասնակից դարձած էք Ազգ. Առաջնորդարանի ծրագիրներու իրագործման՝ ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային թէ՛ ընկերային մարզերէն ներս: ձեր ազնիւ Տիկնոջ՝ Յասմիկին հետ մնայուն ներկայութիւն եղած էք ու զանազան միջոցներով քաջալեր հանդիսացած թեմէն ներս տարուած աշխատանքներուն», յայտնած էր Նորին Ս. Օծութիւնը:

Կոնդակի ընթերցումէն ետք Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետի կարգ»ի շքանշանով զարդարեց տիար Վահէ Յովակիմեանի կուրծքը:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՍՆԱԿՑԵՅԱԲ
Մ.Ա.Ե.Խ.-Ի 12-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**

Միջին Արեւելքի մէջ միջ-եկեղեցական յարաբերութեանց նոր տարածք ստեղծելու ու նոր թափ տալու նպատակով կազմուած Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (Մ.Ա.Ե.Խ.), 48 տարիներ շարունակ շրջանի եկեղեցիներուն առաւել մերձեցման, երկխօսութեան, զիրար ճանաչողութեան, փորձառութիւններու փոխանակման ու համախմբման առիթ ընծայած է:

Տարիներ շարունակ Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու Միութիւն անուան տակ գործած եւ մեծամասնութեամբ Բողոքական եկեղեցւոյ ընտանիքներէն կազմուած յիշեալ Խորհուրդը, 1974-ին, Միջին Արեւելքի եկեղեցիներուն բացուելով, առաւել գործօն դերակատարութիւն ստանձնած է: Սկզբնական շրջանին միայն երեք եկեղեցական ընտանիքները (Արեւելեան Ուղղափառ, Ուղղափառ եւ Աւետարանական) ընդգրկող Խորհուրդը, 1990-ին, առաւել ծաւալելով, ներառած է նաեւ Միջին Արեւելքի Կաթողիկէ եկեղեցւոյ ընտանիքը:



Յայտնենք, որ Հայ եկեղեցին (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն) Խորհուրդի հիմնադիր եկեղեցիներէն կը նկատուի: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Խորհուրդի կազմութեան առաջին իսկ օրերէն, իբրեւ Հայ եկեղեցւոյ ներկայացուցիչ եւ ապա՝ համանախագահ, մեծ ներդրում ունեցած է Խորհուրդի 48-ամեայ գործունէութեան մէջ: Մ.Ա.Ե.Խ.ը կը բաղկանայ չըջանի չորս եկեղեցական ընտանիքներէ.՝ Արեւելեան Ուղղափառ, Ուղղափառ, Կաթողիկէ եւ Բողոքական: Խորհուրդի բոլոր կառոյցներուն ու յանձնախումբերուն մէջ յիշեալ ընտանիքները հաւասար չափով ու յաջորդաբար կը մասնակցին:

Մ.Ա.Ե.Խ.-ի կանոնադրութեան համաձայն, համաժողովը կը գումարուի չորս տարին անգամ մը: Համաժողովի օրակարգին մաս կը կազմեն՝ արժեւորել Մ.Ա.Ե.Խ.-ի զանազան բաժանմունքներու գործունէութեանց արդիւնքները, ընտրել Խորհուրդի համանախագահները, ընդհանուր քարտուղարը եւ Գործադիր Վարչութիւնը:

Համաձարակին պատճառով յետաձգուած Մ.Ա.Ե.Խ.-ի 12-րդ համաժողովը, տեղի ունեցաւ 16-20 Մայիսին, Գահիրէի (Եգիպտոս) Ղպտի եկեղեցւոյ Լոկոս Կեդրոնին մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդառաջելով Ղպտի եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Թառատրոս Պատրիարքին եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) ընդհանուր քարտուղար՝ Միշէլ Ապսի հրաւերին, իբրեւ պատուոյ հիւր՝ մասնակցեցաւ համաժողովին եւ բացման նիստին իր խօսքը ուղղեց ներկաներուն: Համաժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մասնակցեցաւ հինգ անձերէ բաղկացած պատուիրակութեամբ.՝

- Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան (Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ)
- Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան (Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ)
- Գերշ. Տ. Մասիս Եպս. Զօպույեան (Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ)
- Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան (Գաւազանակիր)
- Դոկտ. Ժան Սալմանեան (Մէն Ժողէֆ համալսարանի դասախօս):

Համաժողովի առաջին օրը, Լոկոս Կեդրոնի Ս. Պայծառակերպութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ համաժողովի բացման յատուկ կրօնական արարողութիւնը, որուն մասնակցեցան Հայ, Ասորի եւ Ղպտի Ուղղափառ եկեղեցիները:

«Քա՛ջ եղէք, ես եմ, մի՛ վախնաք» (Մտ 14.27) աւետարանական բնաբանով ընթացք առած համաժողովը լսեց ընդհանուր քարտուղարին զեկոյցը, որ լայնօրէն քննարկուեցաւ ժողովականներուն կողմէ: Խորհուրդի բաժանմունքները ներկայացուցին իրենց զեկոյցները, որոնք դարձեալ քննարկուեցան նախ խումբերու եւ ապա՝ համաժողովի ընդհանուր նիստերու ընթացքին: Բնականաբար, եղան քննադատութիւններ, տեսակէտներու փոխանակում եւ յառաջիկայ աշխատանքներու յստակացում:



Համաժողովի առաջին նիստին խօսք առնելով Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ շեշտեց շրջանէն ներս եկեղեցիներու գործակցութեան նոր մղում ու ծաւալ տալու հրամայականը: «Հսկայ տագնապներու դիմաց է Միջին Արեւելքը. տագնապներ, որոնց անմիջականօրէն ենթակայ են նաեւ եկեղեցիները: Այս կացութեան դիմաց սովորական գործակցութենէ անդին անհրաժեշտ է վերատեսութեան ենթարկել ներ-եկեղեցական ու միջ-եկեղեցական կեանքը ու նշդել առաջնահերթութիւնները, որոնք ըլլան համահունչ ներկայ պայմաններուն», ըսաւ Նորին Ս. Օծութիւնը եւ վեց կէտերու մէջ ամփոփեց իր խօսքը.-

1) Եկեղեցւոյ միութիւնը տեսական յղացք կամ աստուածաբանական համաձայնութիւն չէ շրջանէն ներս: Անիկա պէտք է ըմբռնուի որպէս համապարփակ գործակցութիւն եկեղեցիներու միջեւ: Այս ծիրէն ներս Յարութեան տօնը միասին տօնելը հրամայական է: Անհրաժեշտութիւն մըն է սա, որ պարզապէս կը կարօտի եկեղեցական տոմարի որոշ փոփոխութեան:

2) Աստուածաբանական ու եկեղեցագիտական ծրագիրներէն առաջ ժամանակն է, որ թէ՛ Մ.Ա.Ե.Խ.-ը եւ թէ՛ եկեղեցիները առաջնահերթութիւն տան քրիստոնէական դաստիարակութեան, հովուական առաքելութեան, ընկերային ծառայութեան եւ եկեղեցւոյ կեանքի այլ գործնական երեսներուն առնչուած ծրագիրներուն:

3) Միջին Արեւելքէն քրիստոնէաներուն արտագաղթը նոր թափ ստացած է վերջին տարիներուն՝ շրջանէն ներս տեղի ունեցող զարգացումներուն ու յառաջացող տագնապներուն պատճառաւ: Առանց քրիստոնէական ազդու ու կազմակերպ ներկայութեան Միջին Արեւելքը պիտի կորսնցնէ իր իւրայատուկ նկարագիրը: Այս երեւոյթը կրնայ իր ժխտական հետեւանք-

ները ունենալ ողջ շրջանին համար: Հետևաբար, եկեղեցիներ միասնաբար պետք է դիմեն ազդու միջոցներու՝ կասեցնելու համար քրիստոնեաներու արտագաղթը:

4) Սփիւռփի եկեղեցիներուն հետ Միջին Արեւելքի մայր եկեղեցիներուն գործակցութիւնը անհրաժեշտ է որ ծաւալի: Ունէ ժամանակէ աւելի շրջանի եկեղեցիները կարիքը ունին Սփիւռփի իրենց համայնքներու գորակցութեան եւ օժանդակութեան՝ յատկապէս կրթական ու ընկերային ծառայութեան մարզերէն ներս:

5) Իսլամներուն հետ գոյակցութիւնը, իր աստուածաբանական երկխօսութենէն անդին, պետք է դառնայ գոյութենական գործակցութիւն երկու կրօնները իրարու միացնող հասարակաց արժէքներու ու մտահոգութիւններու շուրջ: Այս ուղղութեամբ Խորհուրդը կոչուած է դիմելու կարենոր նախաձեռնութիւններու շրջանի իսլամական գլխաւոր կեդրոններուն հետ:

6) Մ.Ա.Ե.Խ.-ը եկեղեցիներէն դուրս կազմակերպութիւն մը չէ: Խորհուրդը եկեղեցիներն են: Հետևաբար, ի՞նչ ձեւով կրնան եկեղեցիները աւելի գործօն մասնակցութիւն բերել Խորհուրդի աշխատանքներուն: Իսկ միւս կողմէն, ի՞նչ ձեւով կրնայ Խորհուրդը դառնալ ծառայական ներկայութիւն եկեղեցիներու կեանքէն ներս:



Ամփոփ կերպով ներկայացնելէ յետոյ վերոյիշեալ կէտերը, Վեհափառ Հայրապետը ըսաւ, թէ սոյն մտահոգութիւններն ու ծրագիրները համապարփակ կերպով պէտք է քննարկուին թէ՛ Խորհուրդին եւ թէ՛ եկեղեցիներուն կողմէ՝ նոր պայմաններու լոյսին տակ:

Իր խօսքի աւարտին Նորին Սրբութիւնը շեշտեց Մ.Ա.Ե.Խ.-ը վերակազմակերպելու եւ անոր գործունէութիւնը վերաշխուժացնելու հրամայականը: Վեհափառ Հայրապետին խօսքը մեծ գնահատանքով ընդունուեցաւ ժողովականներուն կողմէ:

Համաժողովի երկրորդ օրը, Եգիպտոսի նախագահ՝ Ապտ Ալ-Ֆաթթահ Ալ-Սիսի, Գահիրէի նախագահական պալատին մէջ, ընդունեց համաժողովին մասնակցող հոգեւոր պետերու այցելութիւնը: Նախագահը ջերմօրէն ողջունեց ներկաները եւ իր ուրախութիւնը յայտնեց համաժողովը Եգիպտոսի մէջ գումարելու որոշումին համար: Անանդրադարձ կատարեց քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան անհրաժեշտութեան եւ ընդգծեց, թէ քրիստոնեայ քաղաքացիները անբաժան մասը կը կազմեն արաբական հասարակութեան: Ան շեշտեց շրջանէն ներս քրիստոնեայ ու իսլամ քաղաքացիներուն համահաւասար իրաւունքները եւ քաղաքացիական նոյն պարտաւորութիւնները ունենալու կարեւորութիւնը:

Համաժողովի վերջին օրը տեղի ունեցաւ եզրափակիչ նիստը: Ընտրուեցաւ նոր Գործադիր Վարչութիւն, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ անդամ վերընտրուեցան՝ Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ Սէն Ժողէֆ համալսարանի դասախօս դոկտ. Ժան Սալմանեան, իսկ անձնափոխանորդ ընտրուեցաւ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան: Կատարուեցաւ ընդհանուր յայտարարութիւն, ուր անդրադարձ կատարուեցաւ Միջին Արեւելքէն ներս տիրող տագնապներուն ու մարտահրաւէրներուն, ինչպէս նաեւ եկեղեցիներու միջեւ գործակցութիւնը աւելի ամրացնելու անհրաժեշտութեան:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Մ.Ա.Ե.Խ.-ի տեղեկատուական բաժանմունքին փափաքին ընդառաջելով, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Մ.Ա.Ե.Խ.-ի համաժողովը արժեւորող, միջեկեղեցական եւ միջ-կրօնական իր խոր փորձառութիւնը փոխանցող ու երիտասարդութեան դերը ներկայ դարու եկեղեցոյ կեանքին մէջ պարզող յատուկ հարցազրոյց մը ունեցաւ:

Ստորեւ ամփոփ կերպով կը ներկայացնենք հարցազրոյցը:

Ա. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ինչպէ՞ս կը բնորոշէք համաժողովի բնաբանը՝ «Քա՛ջ եղէք, ես եմ, մի՛ վախնաք» (Մտ 14:27), ներկայ պայմաններու լոյսին տակ:

- Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի այս խօսքը, որ Մ.Ա.Ե.Խ.-ի համաժողովին բնաբանը դարձած է, գորեղ եւ ազդու պատգամ մը կը բովանդակէ իր մէջ՝ ուղղուած Միջին Արեւելքի եկեղեցիներուն եւ ընդհանրապէս ընկերութեան: Մենք բոլորս, քրիստոնեայ թէ իսլամ, կ'ապրինք զանազան տագնապներու ներքեւ. շրջապատուած ենք այլազան դժուարութիւններով ու անորոշութիւններով: Արդ, այս նգնաժամային օրերուն հարկ է լսել Յիսուս

Քրիստոսի խօսքը, որ կ'ըսէ. «Քա՛ջ եղէ՛ք, ես եմ, մի՛ վախճա՛մ»: Պէտք է մտնալ, որ Յիսուս Քրիստոսի անունը՝ էմմանուէլը, կը նշանակէ Աստուած մեզի հետ, այսինքն՝ Յիսուս մեզի հետ է: Ահաւասիկ, մեր հաւատքի հիմքը: Յիսուս Քրիստոս անցեալին պատկանող իրականութիւն մը չէ, այլ մեր կեանքին մէջ ապրող իրականութիւն է: Ան յոյսի աղբիւր է՝ յուսահատութեան դէմ. կեանքի աղբիւր՝ մահուան դէմ: Քրիստոս, ինչպէս ինք ըսաւ, մեր նանապարհն է, նշմարտութիւնն ու կեանքը: Հետեւաբար, Մ.Ա.Ե.Խ. -ի համաժողովը կու գայ մեզի յիշեցնելու, թէ պէտք է վախճանք, այլ քա՛ջ ըլլանք, որովհետեւ Յիսուս մեզի հետ է:

Բ) Ինչպէ՞ս կը բնորոշէ՞ք Քրիստոնեաներու ներկայութիւնը եւ անոնց դերակատարութիւնը շրջանէն ներս:

- Այսօր, շրջանէն ներս, մենք կը դիմագրաւենք ահաւոր խնդիրներ: Երբ նայինք քրիստոնէութեան պատմութեան, կը տեսնենք, որ տարբեր բնոյթ ու ծաւալ ունեցող տագնապներու դիմաց գտնուած է միշտ քրիստոնէութիւնը: Սակայն, եկեղեցին գոյատեւեց, որովհետեւ եկեղեցին սուկ հաստատութիւն մը չէ, այլ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խորհրդական մարմինն է: Պատմութեան փոքորիկներուն, հալածանքներուն ու առնակատումներուն դիմաց Քրիստոսի եկեղեցին, իրրեւ հաւատքի համայնք, գոյատեւեց: Իսկ այսօր, կը հաւատամ, որ քրիստոնէայ համայնքը հոգեւոր քաջութեամբ ու խոր հաւատով գիւնուած, ո՛չ միայն պիտի գոյատեւէ, այլ վերանորոգ կամբով ու յանձնառութեամբ պիտի շարունակէ իր վկայութիւնը: Եկեղեցի ըլլալ կը նշանակէ, լծուիլ Աւետարանի վկայութեան. իսկ քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ, մասնակից դառնալ քրիստոնէական վկայութեան ու առաքելութեան՝ տարածելով Աւետարանի կենսատու արժէքները:

Գ) Այսօր, մարդկային կարգ մը ընկերութիւններու կեանքին մէջ կը տեսնենք փոխ-յարաբերութեանց խաթարում: Արդ, ինչպէ՞ս կարելի է միջեկեղեցական յարաբերութիւնն ու երկխօսութիւնը զարգացնել ընկերութեան բոլոր մարզերուն մէջ:

- Այսօր մենք կ'ապրինք փոխ-յարաբերութեան աշխարհի մը մէջ: Մենք չենք կրնար ընկերութեան մէջ մեկուսացած մնալ: Հարկ է բացուիլ ուրիշին՝ մեր մշակոյթով, արժէքներով, նոյնիսկ մտահոգութիւններով ու հարցերով: Հարկ է բացուիլ, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ, ուր կ'ապրինք մեր իսլամ դրացիներուն ու բարեկամներուն հետ: Անոնք մեր դրացիներն են, քաղաքակիցներն ու գործակիցներն են: Լիբանանի մէջ մենք յանախ կը շեշտենք գոյակցութիւնը: Այո՛, մենք ունինք տարբեր սովորութիւններ, աւանդութիւններ ու արժէքներ, սակայն հարկ է որ փոխ-յարգանքով մօտե-

նանք իրարու եւ ընդունինք զիրար՝ հիմնուելով հասարակաց բարոյական սկզբունքներու եւ արժէքներու վրայ: Քրիստոնեայ ընկերութիւնը անբաժան բաղկացուցիչն է շրջանի ընկերութեան:

Դ) Վեհափառ Տէր, այսօր երիտասարդութիւնը կը դիմագրաւէ այլազան մարտահրաւէրներ. եկեղեցին ինչպէ՞ս կրնայ անոնց կողքին ըլլալ ու աջակցիլ:

- Ես չեմ կրնար երեւակայել որեւէ ընկերութիւն կամ հաստատութիւն առանց երիտասարդ տարրի ներկայութեան: Երիտասարդները կարելի է բնորոշել իբրեւ մարմնի մը էական բաղկացուցիչը: Անոնք ընկերութեան կեանքի արիւնն են, կենսունակութեան երաշխիքը ու ստեղծագործ մտքի աղբիւրը: Ուստի, յամախ շեշտած եմ, որ երիտասարդները միայն ապագային չեն պատկանիր, այլ՝ ներկային: Պէտք է քաջալերեմք երիտասարդները, որպէսզի առաւել գործօն մասնակցութիւն ունենան եկեղեցւոյ կեանքի բոլոր մակարդակներուն վրայ, նոյնիսկ ղեկավարութեան դիրքի վրայ: Ինձի համար անընդունելի երեւոյթ է երիտասարդները ընկերութեան լուսանցքին վրայ ձգելը: Անոնք պէտք է մնան, իրենց գործօն մասնակցութեամբ ու կարելոր դերակատարութեամբ, ընկերութեան կեդրոնական դիրքին վրայ, ներառելով, բնականաբար, եկեղեցական կեանքը: Այս բոլորէն մեկնելով, կը հաւատամ, որ մեր եկեղեցիներն ու Մ.Ա.Ե.Խ.-ը, զանազան ծրագիրներ ու նախաձեռնութիւններ մշակելով, պէտք է խրախուսեն երիտասարդներու ազդու ու պատասխանատու մասնակցութիւնը ընկերութեան հաւաքական կեանքի այլազան ոլորտներու մէջ:

Ե) Ի՞նչ է ձեր թելադրութիւնը այսօրուան երիտասարդութեան ուղղուած, որոնք մտահոգութիւններով շրջապատուած են ու անորոշ մթնոլորտի մէջ կ'ապրին:

- Գիտեմ որ երիտասարդները կը դիմագրաւեն այլազան տագնապներ: Երիտասարդներուն մեծամասնութիւնը ընկերութեան ուսեալ խաւը կը ներկայացնեն: Օրինակ, Լիբանանի մէջ երիտասարդութիւնը մեծ մասամբ ուսեալ է եւ արժանացած վկայականներու, սակայն այսօր մեր երիտասարդները անգործութեամբ կը տառապին: Այս պատճառով կը լքեն իրենց երկիրը: Ուստի, կը հաւատամ, որ եկեղեցին օգտակար պէտք է դառնայ երիտասարդներուն: Բնականաբար, եկեղեցին ամէն ինչ չի կրնար ընել, սակայն եկեղեցւոյ համար ընկերութեան կեանքին մէջ երիտասարդութեան մասնակցութեան հարցը պէտք է առաջնահերթ կարեւորութիւն դառնայ: Պէտք է եկեղեցին, տարբեր միջոցներով ու ձեւերով, օգտակար հանդիսանայ երիտասարդներուն, որպէսզի անոնք մնան հոն, ուր որ են՝ իրենց

երկրին, համայնփին ու ընկերութեան մէջ: Հետեւաբար, Քրիստոսի խօսքը. «Քա՛ջ եղէ՛ք, ես եմ, մի՛ վախճա՛մ», ուղղուած է նաեւ երիտասարդներուն: Մեր երիտասարդները քա՛ջ թող ըլլան ու չվախճան, եկեղեցին, անոր դեկավարութիւնն ու հոգեւոր դասը երիտասարդութեան հետն են: Այս պատգամը պէտք է լոկ խօսքով սահմանափակել, այլ պէտք է գործով թարգմանել: Արդ, ջերմօրէն կոչ կ'ուղղեմ եկեղեցւոյ դեկավարութեան, որպէսզի երիտասարդութիւնը նկատեն իբրեւ առաջնահերթութիւն եկեղեցւոյ կեանքին մէջ:

2) Գալով հայու թեան, ինչպէ՞ս կը բնորոշէք հայ համայնքի իրավիճակը եւ ի՞նչ են անոր դիմագրաւած մարտահրաւէրները:

- Բոլոր եկեղեցիներն ու համայնքները շրջանէն ներս նոյն մարտահրաւէրներն ու տագնապները կը դիմագրաւեն: Կարելի չէ ըսել, թէ հայութիւնը այս դժուարութիւնը կը դիմագրաւէ, իսկ ուրիշ մէկ համայնք՝ այլ դժուարութիւն: Մենք բոլորս, Միջին Արեւելէն ներս, քրիստոնեաներ ու իսլամներ, միասնաբար կ'ապրինք ու միասնաբար կը դիմագրաւենք շրջանը յուզող տագնապները: Ներկայ համաժողովը կու գայ դարձեալ յիշեցնելու, թէ քրիստոնեայ համայնքները պէտք է միասնաբար գործեն: Այո՛, աստուածաբանական տարբեր տեսակետեր ու մօտեցումներ կան մեր միջեւ: Սակայն, այս տարբերութիւնները մէկդի թողելով, պէտք է տարբեր ձեւերով արտայայտենք մեզի շնորհուած աստուածատուր միասնականութիւնը: Օրինակ, ինչպէս համաժողովի առաջին նիստի ընթացքին յայտնեցի, հարկ է Ս. Յարութեան տօնը միասնաբար տօնախմբել: Ահաւասիկ մարտահրաւէր մը ուղղուած մեր բոլորին: Միասնական տօնախմբութեամբ մենք պիտի կարողանանք շօշափելիօրէն արտայայտել քրիստոնեական միասնականութիւնը: Երկրորդ, ինչպէս քիչ առաջ անդրադարձայ, ընկերութեան մէջ քրիստոնեայ համայնքները կ'ապրին իսլամ համայնքներուն հետ միասնաբար: Մեր միջեւ բաժանման գիծեր գոյութիւն չունին: Հետեւաբար, ինչպէ՞ս կարելի է ամրապնդել այս գոյակցութիւնը՝ յարգելով ու ընդունելով զիրար: Այս ծիրէն ներս հարկ է անդրադարձ կատարել ու ողջունել Եգիպտոսը: Եգիպտոսը այսօր կը պարզէ քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան պերճախօս օրինակը՝ հակառակ մօտիկ անցեալի դժուարութիւններուն: Համաժողովի երկրորդ օրը հանդիպում ունեցանք Եգիպտոսի նախագահ՝ Ալ-Սիսիի հետ: Գնահատելի է իր որդեգրած տեսակետը քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան գծով: Ան Եգիպտոսը կը դիտէ իբրեւ մէկ ամբողջականութիւն՝ առանց խտրականութեան քրիստոնեաներու ու իսլամներու միջեւ: Նախագահը յայտնեց, թէ Եգիպտոսի մէջ քրիստոնեայ թէ իսլամ հաւասար իրաւունքներ կը վայելեն, մէկ ամբողջականութիւն կը կազմեն եւ հաւասար

մասնակցություն կը բերեն Եգիպտոսի ծաղկման ու զարգացման: Ուրախ եմ, որ այս ուղղութեամբ Ղպտի Ուղղափառ քոյր եկեղեցին ունի կարեւոր դերակատարութիւն: Հարկ է յստակ պատգամ մը ուղղել եւ յիշեցնել ողջ աշխարհին, թէ Միջին Արեւելքը ա՛յն վայրն է, ուր գոյակցութիւնը տեսական գաղափար մը չէ, այլ՝ գոյութեան կան իրականութիւն, որուն պահպանման նախանձախնդիր պէտք է դառնայ թէ՛ քրիստոնեան եւ թէ իսլամը:

Է) Վեհափառ Տէր, Ի՞նչ է Ձեր խօսքը ուղղուած Լոկոս կեդրոնէն, ուր կը գումարուի Մ.Ա.Ե.Խ.-ի 12-րդ համաժողովը:

- Նախ կ'ուզեմ իմ խոր գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնել Նորին Սրբութիւն Դաուաւորոս Պապին՝ իր ցուցաբերած ջերմ ընդունելութեան համար: Ինչպէս գիտե՛ք, Հայ Ուղղափառ ու Ղպտի Ուղղափառ եկեղեցիները կը պատկանին նոյն եկեղեցական ընտանիքին: Ուստի, հարկ է մեր գործակցութիւնը առաւել ամրապնդել ու զարգացնել: Կը հաւատամ, որ Լոկոս կեդրոնը կրնայ էական դերակատարութիւն ունենալ միջ-եկեղեցական հանդիպումներու զարգացման առումով, ո՛չ միայն Միջին Արեւելքի տարողութեամբ, այլ նաեւ՝ արեւմտեան եկեղեցիներն ու ընկերութիւնները ներառելով: Այո՛, մենք տարբեր ինքնութիւններ ունինք, սակայն, ինչպէս անդրադարձայ, հարկ է ընդունիլ ու յարգել զիրար: Աստուած մեզ ստեղծած է տարբեր, ամէն իմաստով, սկսելով մեր գոյնէն, տեսէն եւ աշխարհահայեացէն: Սակայն, այս փոքր աշխարհին մէջ կոչուած ենք միասնաբար ապրելու: Այս է Աստուծոյ պատուէրը՝ ապրիլ միասնաբար, խաղաղութեամբ ու արդարութեամբ: Այս համաժողովը կու գայ անգամ մը եւս յիշեցնելու մեզի թէ՛ իբրեւ քրիստոնեաներ անհրաժեշտ է հաւատարմօրէն կապուած մնալ Միջին Արեւելքին, որովհետեւ մենք կը պատկանինք այս տարածաշրջանին: Մենք դրսեցի չենք եղած, չենք եկած արեւմուտէն, այլ սկիզբ առած ենք Միջին Արեւելքէն: Մեր պատմութիւնը ամբօրէն մաս կազմած է այս շրջանի պատմութեան: Հետեւաբար, մենք պէտք է կառչած մնանք մեր ներկայութեան պահպանման, մեր պարտաւորութիւններուն ու իրաւունքներուն: Միաժամանակ պէտք է յստակ դիրքորոշում որդեգրենք այն բոլոր մօտեցումներուն ու ծրագիրներուն դէմ, որոնք կը փաշտելեն Միջին Արեւելքէն քրիստոնեաներու գաղթելու գաղափարը: Մենք դէմ ենք այս մտածելակերպին: Մենք հոս պէտք է մնանք՝ մեր ժողովուրդով ու հաստատութիւններով, պահելով մեր ինքնութիւնն ու հաւատքը:

**ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
«ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻՇԱՐԱՆՉՈՒԹԻՒՆ» ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ԵՆԹԱ-ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ**

Կազմակերպութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ. Խ.) Առաքելութիւն եւ Աւետարանչութիւն Յանձնաժողովին (Commission on World Mission and Evangelism) եւ համագործակցութեամբ Միջազգային Միսիոնարական Ժողովին (International Missionary Council), 2021–2022 տարեշրջանի ընթացքին շարք մը ծրագիրներու ընդմէջէն պիտի նշուի միսիոնարական համաժողովին 100–ամեակը՝ զանազան հանդիպումներու եւ գրական աշխատութիւններու միջոցաւ եւ անդրադարձ պիտի կատարուի անոր պատմութեան, ներկայ իրավիճակին եւ ապագայի տեսլականին մասին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, երկրորդ հանգրուանի աշխատանքային հանդիպումը կայացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ: Յիշեալ ծրագիրին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իր մասնակցութիւնը բերաւ միջ-եկեղեցական բաժանմունքի անդամ՝ Կարէն Սրկ. Եօսուքանեան: Միջին Արեւելքի յանձնախումբը ունենալով տարբեր քրիստոնեայ ընտանիքներէն (Արեւելեան Ուղղափառ, Ուղղափառ, Կաթողիկէ եւ Աւետարանական) ուսումնասիրողներ՝ քննարկեց նախորդ երկու ամսուան իր ուսումնասիրութիւններէն յառաջացած խնդիրներ, որոնք կը պարզեն եկեղեցւոյ առաքելութեան ներկայ իրավիճակը:

Յանձնախումբը հանդիպում ունեցաւ նաեւ Վեհափառ Հայրապետին հետ: Միջ-եկեղեցական շարժումէն ներս իր ունեցած հարուստ փորձառութեամբ, Նորին Ս. Օծութիւնը յանձնախումբին ներկայացուց իր պատկերացումները՝ շեշտելով եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան առնչուած բոլոր մարզերը համապարփակ մօտեցումով քննելու կարեւորութիւնը:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԶ-ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**

31 Օգոստոսէն 7 Սեպտեմբերին, Գերմանիոյ Քարլզրուէ քաղաքին մէջ պիտի գումարուի եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ ընդհանուր ժողովը՝ «Քրիստոսի սէրը աշխարհը կը մղէ դէպի համերաշխութիւն եւ միասնականութիւն» (Christ’s love moves the world to reconciliation and unity) խորագրեալ: Ընդհանուր ժողովին մասնակցող Արեւելեան ուղղափառ ոչ-քաղկեդոնական եւ ուղղափառ քաղկեդոնական եկեղեցիներու 1983-էն ի վեր որդեգրած գործելաձեւին համաձայն, համաժողովէն առաջ կը գումարուի միջ-ուղղափառեան համագումար մը, քննարկելու համար համաժողովի գլխաւոր թեման եւ անոր յարակից օրակարգի նիւթեր: Ուղղափառ եկեղեցիներու յիշեալ համագումարը կայացաւ 10-15 Մայիսին, Կիպրոսի Փարալիմնի քաղաքին մէջ:

Համագումարին պաշտօնական բացումը կատարեց Ե.Հ.Խ.-ի ընդհանուր քարտուղար դոկտ. հայր Իոան Սաուքան՝ ողջունելով ուղղափառ եկեղեցիներու ներկայացուցիչները: Ան համապարփակ ներածական ընելով համագումարին նպատակադրած աշխատանքներուն՝ ուղղափառ պրիսմակէն դիտեց եւ մեկնաբանեց Ե.Հ.Խ.-ի համաժողովի թեման եւ ուղղափառ եկեղեցիներուն ներդրումը անոր իրագործման մէջ:

Միջ-ուղղափառ համագումարին ուղղուած Կիպրոսի նախագահ Նիքոս Անասթասիատիսի ողջոյնի խօսքը փոխանցեց ներքին գործոց նախարարը:

Յայտնենք, որ ուղղափառ եկեղեցիներու համագումարին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութիւնը ներկայացուցին՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան (Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ) եւ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան (Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ): Անոնք համագումարին փոխանցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հայրական օրհնութիւնները եւ քրիստոնէական սիրոյ ողջոյնները, ինչպէս նաեւ Ե.Հ.Խ.-ի համաժողովի աշխատանքներուն վերաբերեալ Հայրապետին



պատկերացումները: Ժողովականները շնորհակալութեամբ ընկալեցին Վեհափառ Հայրապետին ուղղութիւնները, որոնք յառաջ կու գան Նորին Ս. Օծովեան միջ-եկեղեցական շարժումին մէջ ունեցած աւելի քան կէս դարեան վաստակէն եւ դերակատարութենէն:

Համագումարի օրակարգին վրայ քննարկուեցան Ե.Հ.Խ.-ի համաժողովի գլխաւոր թեման եւ անոր յարակից նիւթեր: Գերաշնորհ սրբազան հայրերը իրենց գործօն մասնակցութիւնը բերին համագումարի աշխատանքներուն, ինչպէս նաեւ համատեղ աղօթքներուն:

Ժողովի աւարտին, ժողովը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ համադրուեցան Ե.Հ.Խ.-ի առաքելութեան սկզբունքները, համաժողովին գլխաւոր թեմային ուղղափառ աստուածաբանութեան ըմբռնումները եւ Աստուածային պատուէրի սիրոյ առաքինութեան հրամայականը: Հաղորդագրութեան մէջ դատապարտուեցան բոլոր տեսակի պատերազմները, մարդկային իրաւանց բռնաբարումները, քրիստոնէական մշակութային ժառանգութեանց նախաձրագրուած բնաջնջումները եւ կոչ ուղղուեցաւ խաղաղութեան ու համերաշխութեան:

Յայտնենք, որ միջ-ուղղափառ համագումարին մասնակիցները այցելեցին Կիպրոսի Խրիսոսթոմոս Արքեպիսկոպոսին, Նիկոսիոյ Արքեպիսկոպոսարանէն ներս:

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

12-14 Մայիսին, Քեմպրիճի (Անգլիա) մէջ, Լիբանանի եւ Անգլիոյ Աստուծաշունչի Ընկերակցութեանց կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ եկեղեցիներու շուրջ քառասուն ներկայացուցիչներու միջազգային համագումարը, որուն թեման էր՝ «Աստուծոյ խօսքով համախմբուած քրիստոնեաներ՝ իրարու նեցուկ դժուարին ժամանակներու ընթացքին»:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սոյն համագումարին մասնակցեցաւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան (ատենապետ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու Յանձնախումբի) եւ դասախօսեց «Քրիստոնեայ համայնքներու դիմագրաւած մարտահրաւերները Միջին Արեւելքի մէջ» նիւթին շուրջ:

Համագումարը նաեւ առիթ եղաւ, որ Սրբազան Հայրը քննարկումներու եւ զանազան հանդիպումներու ընթացքին խօսի յատկապէս ընկերային ծառայութեան մարզէն ներս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մասին:

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Կիրակի 22 եւ Երկուշաբթի 23 Մայիսին, Գահիրէի (Եգիպտոս) մէջ, Միջին Արեւելքի տարբեր երկիրներէ ժամանած երեսուն ներկայացուցիչներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Միջին Արեւելքի Աստուածաբանական Կեդրոններու եւ Դպրեվանքներու միութեան համագումարը (A.T.I.M.E.):



Համագումարը սկիզբ առաւ Ղպտի Կաթողիկ Եկեղեցւոյ Պատրիարք՝ Իպրահիմ Իսհաքի ողջոյնի եւ օրհնութեան խօսքով: Սոյն հաւաքին նպատակն էր վերամշակել A.T.I.M.E.-ի ներքին օրէնքները, ընտրել նոր նախագահ, գործադիր քարտուղար եւ ձեռք յառաջիկայ երեք տարիներու գործունէութիւնը: Ժողովի ընթացքին զանազան նիւթերու առընթեր, յատուկ քննարկումի ենթարկուեցան բնապահպանման կարեւորութեան, էքիւմէնիք շարժումի պատմութեան եւ համագործակցութեան մարզերու առնչուող օրակարգերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յիշեալ համագումարին մասնակցեցաւ Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՔԱՐԻԹԱՍ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «ԲՈՆՈՐԻՆ ՏՈՒՆԸ՝ ՅՈՅՍ ԼԻԲԱՆԱՆԸ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Չորեքշաբթի, 8 Յունիսին, Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի մէջ լայն մաշտապով ընկերային ծառայութիւններ մատուցող Քարիթաս միութիւնը, միօրեայ համագումարով ոգեկոչեց Յովհաննէս Պօղոս Բ. Պապին 25 տարիներ առաջ Լիբանան տուած հովուապետական այցելութիւնը:

Համագումարին առանցքը կազմեցին միութեան կատարած ընկերային ծառայութեանց ընդհանուր գնահատականը, ինչպէս նաեւ Լիբանանի այլազան համայնքներու միջեւ գոյակցութեան ամրապնդումն ու երկխօսութեան զարգացումը:

Համագումարին մասնակցեցան սիւննի, շիիթ, տիւրզի, ալէուի, մարոնիթ, յոյն ուղղափառ ու կաթողիկէ, ասորի ուղղափառ ու կաթողիկէ, հայ ուղղափառ, դպտի ուղղափառ եւ գաղթական համայնքներէն ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ պետական զանազան կառոյցներէ պատուիրակներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուցին՝ Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեանը, Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեանը եւ Հոգշ. Տ. Եղրաս Աբղ. Թէնէքէճեանը:

Յայտնենք, որ շուրջ ամիս մը առաջ Քարիթասի պատասխանատուներէն գոյացած պատուիրակութիւն մը այցելած էր Անթիլիասի Մայրավանք եւ Նորին Ս. Օծութեան փոխանցած էր Քարիթասի գործունէութեան շուրջ անհրաժեշտ տեղեկութիւններ եւ յիշեալ համագումարին պաշտօնապէս հրաւիրած էր Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբութիւնը բարձրօրէն գնահատած էր միութեան աշխատանքները, ընդհանրապէս Միջին Արեւելքէն ներս եւ յատկապէս Լիբանանի ու Սուրիոյ մէջ:



ԵՐԵՔ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԼ ՎԱՏԻԿԱՆԻ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ

Ներկայ աշխարհի պայմաններուն ու յարաբերութիւններուն մէջ երկխօսութիւնը, փորձառութիւններու փոխանակումն ու փոխադարձ ճանաչողութիւնը հրամայական դարձած են: Ազգեր, փողովուրդներ, ընկերութիւններ, կազմակերպութիւններ ու եկեղեցիներ երկխօսութեան ու փոխ-յարաբերութեան ճամբով կը ծանօթանան իրար, կը զարգանան մշակոյթներ, կը մշակուին յարաբերութիւններ եւ գործնապէս կ'արտայայտուին լայնախոհութիւնն ու հանդուրժողականութիւնը:

Վերոյիշեալ տեսլականներու լոյսին տակ, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ կաթողիկէ եկեղեցոյ միջեւ յառաջացած աստուածաբանական երկխօսութեան յանձնախումբը յարմար նկատած էր, որ յիշեալ երկու եկեղեցական ընտանիքները յաջորդաբար կազմակերպեն երիտասարդ հոգեւորականներու փոխադարձ այցելութիւններ, որպէսզի աւելի մօտէն ու ամբողջական կերպով ճանչնան զիրար:

2020 թուականին սկիզբ առած վերոյիշեալ ծրագիրը համաճարակին պարտադրած պայմաններուն հետեւանքով կանգ առած էր: Արդարեւ, պայմաններու բարելաւումէն ետք, 2022-ի 30 Մայիսէն 6 Յունիսին Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդ ներկայացուցիչները հիւրընկալուե-



ցան կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ, Վատիկանի մէջ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, այս ծրագիրին մասնակցեցան երեք երիտասարդ հոգեւորականներ՝ Կաթողիկոսարանի տեղեկատուական բաժանմունքի վարիչ Հոգչ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, Մայրավանքի Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ Հոգչ. Տ. Օշին Վրդ. Չուալերթանեան եւ Նիւ Եորքի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Նարեկ Քհն. Թրթռեան (Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմ). իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ՝ Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Չարգարեանը, Արժ. Տ. Տիգրան Քհն. Բաղիրեանը եւ Արժ. Տ. Արսէն Քհն. Միրզոյեանը:

Վատիկանի (իսկ՝ կաթողիկէ եկեղեցւոյ) զանազան ու այլազան բաժանմունքներու, համալսարաններ ու հիմնարկներ այցելութիւններու եւ պատասխանատու քարտինալներու, տնօրէններու հետ հանդիպումներու ու երկխօսութիւններու ճամբով, մասնակից երիտասարդ հոգեւորականները առիթը ունեցան մօտէն ծանօթանալու Վատիկանի կառոյցին ու աշխատանքներուն, ինչպէս նաեւ կաթողիկէ եկեղեցւոյ դիմագրաւած մարտահրաւէրներուն:

Նշենք, որ այցելութիւններու շարքին կարեւոր տեղ գրաւեց Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին հետ հանդիպումը: Հանդիպման ընթացքին արտասանած իր խօսքին մէջ, Պապը շեշտեց եկեղեցիներու միութեան անհրաժեշտութիւնը եւ աղօթքով ամէն տեսակ դժուարութիւն ու մարտահրաւէր դիմագրաւելու կարեւորութիւնը՝ միասնական աղօթքի հրաւիրելով ներկաները:

Վատիկանի ծանօթացման յիշեալ ծրագրի աւարտին, հայ հոգեւորականները այցելութիւն տուին Վատիկանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Կարէն Նազարեանին: Հոգեւոր հայրերը ընդհանուր գիծերով դեսպանին պարզեցին Վատիկան այցելութեան առիթը եւ վերոյիշեալ ծրագիրին նպատակը: Հանդիպման ընթացքին արծարծուեցան Հայ եկեղեցին ու հայրենիքը յուզող շարք մը հարցեր:

Ե.Յ.Խ.-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Կեդրոնական Վարչութիւնը, համաճարակէն ետք առաջին անգամ ըլլաով, 15-18 Յունիսին, Ժընևեի մէջ գումարեց իր ընդհանուր ժողովը, որուն յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցան Միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան եւ Զուիցերիոյ մէջ մեր Ս. Աթոռին միջ-եկեղեցական յարաբերութիւններու ներկայացուցիչ՝ փրոֆ. Թենի Փիրրի-Միմոնեան:



Ժողովի ընթացքին Վարչութիւնը քննարկեց յառաջիկայ Սեպտեմբերին Գերմանիոյ Քարլզրու քաղաքին մէջ Ե.Հ.Խ.-ի համաժողովին նախապատաստական աշխատանքները:

Ժողովին հիմնական օրակարգն էր «Քրիստոսի սէրը կը մղէ աշխարհը հաշտութեան եւ միասնութեան» թեմայով համաժողովին ծրագիրներու համադրումը: Ժողովին ատենապետ՝ դոկտ. Ազնէս Ապառւմին խօսքերով, համաժողովը իր թեման պիտի գործադրէ համատեղ աղօթքներով, Ս. Գիրքի սերտողութեամբ, տուեալ թեմային առնչուած նիստերով, ինչպէս նաեւ անդրադարձ կատարելով ժամանակակից ամէնէն թեժ հարցերուն եւ մարտահրաւէրներուն, որոնք բոլոր եկեղեցիներէն կը պահանջեն յստակ պատասխաններ: Ան նաեւ ըսաւ, որ համաժողովը տարածք մըն է, ուր անդամ եկեղեցիները պիտի ծրագրեն Ե.Հ.Խ.-ի ապագան:

Կեդրոնական Վարչութեան նիստերուն ընտրուեցաւ նաեւ 8-րդ ընդհանուր քարտուղարը՝ պատուելի դոկտ. Ճերի Փիլէյ:

Նշենք, որ Հայ եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) նախկին անդամ Գարլա Խիճոյեան կը շարունակէ Ե.Հ.Խ.-ին մէջ Միջին Արեւելքի բաժինի պատասխանատուի իր պաշտօնը:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈՒԼԻԿ ԵՒ ԱՐԵԲԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ**

20-24 Յունիսին, Վատիկանի մէջ տեղի ունեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ Աստուածաբանական երկխոսութեան միացեալ ժողովին 18-րդ հանդիպումը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, այս ժողովին մասնակցեցան՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան եւ Գերպ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեան (Համաքարտուղար): Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ Գերշ. Տ. Տիրան Եպս. Պետրոսեան:

Սոյն ժողովի ընթացքին վերջնականացաւ եօթը խորհուրդներուն գծով ժողովականներուն մօտեցումները խտացնող եւ աշխատանքին մասին զեկուցող միացեալ յայտարարութիւնը, որ ստորագրուեցաւ Համա-ատենապետներուն կողմէ:

Եօթը խորհուրդներու եզրակացութեան յաջորդեց նախօրոք որոշուած Մարեմաբանութեան նիւթի քննարկումը, որ պիտի շարունակուի յաջորդ հանդիպման ընթացքին եւս: Ժողովականները առիթ ունեցան նաեւ հանդիպելու Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Պապին հետ, ուր անդրադարձան ժողովի աշխատանքներուն եւ յառաջիկայ աշխատանքային ծրագիրներուն մասին:

Ժողովի վերջին նիստին որոշուեցաւ յառաջիկայ տարուան հանդիպման թուականը, ներկայացուելիք ուսումնասիրութիւններու նիւթերը, ինչպէս նաեւ ժողովի վայրը՝ Ղպտի Եկեղեցւոյ Պատրիարքութեան կեդրոնէն ներս, Գահիրէ, Եգիպտոս:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
25-ԱՄԵԱԿԻ ՀԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ
ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ**

Երկուշաբթի, 6 Յունիսի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի «Կիլիկիա» սրահին մէջ տեղի ունեցաւ մտաւորականներու հանդիպում, որուն ընթացքին ներկայացուեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին գահակալութեան 25-ամեակի հատորը, Սփիւռքի տարուան հռչակման կարեւորութիւնը եւ Նորին Սրբութեան Տէր Զօր պատմական այցելութիւնը:

Առաջին հերթին, Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկաները եւ շեշտեց, թէ նման հանդիպումները անհրաժեշտ են տեսակէտներու ու մտահոգութիւններու փոխանակման եւ ընդհանրապէս մեր ազգը յուզող հարցերու քննարկման համար:

Մտաւորականներու հանդիպման առանցքը կազմեցին հետեւեալ երեք կէտերը.–

ա) Սփիւռքի տարի: *Խօսելով Սփիւռքի տարուան մասին, Վեհափառ Հայրապետը յիշեցուց, թէ Դեկտեմբեր ամսուան ընթացքին կայացած մտաւորականներուն առաջին հաւաքէն ետք, յաջորդաբար առցանց հանդիպումներ տեղի ունեցան: Նորին Ս. Օծովութիւնը յայտնեց, որ նման հանդիպումներ պիտի շարունակուին՝ համախմբելու աշխարհասփիւռ հայորդիները Սփիւռքը վերակազմակերպելու կարելիութեանց եւ գործընթացքին շուրջ: Սփիւռքի մէջ հայութեան դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին խօսելով, Վեհափառ Հայրապետը հետեւեալ հարցադրումները կատարեց՝ ներկայ տագնապալից իրավիճակին մէջ ո՞ր կը գտնուի սփիւռքահայութիւնը, ի՞նչ են այդ դժուարութիւնները յաղթահարելու միջոցները, դէպի ո՞ր կ'ուղղուինք այսօր, ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ Սփիւռքի մէջ: Շարունակելով հարցադրումներու շարքը, Նորին Սրբութիւնը յայտնեց, թէ նման հանդիպումները մտաւորականներու, երիտասարդներու եւ մասնագէտներու հետ անհրաժեշտ են որ շարունակուին, որովհետեւ բոլորին մօտ այլեւս խոր համոզում դարձած է, թէ Սփիւռքի վերակազմակերպումը անյետաձգելի հրամայական է: Վեհափառ Հայրապետին խօսքէն ետք մտաւորականներուն կողմէ հարցումներ ուղղուեցան եւ առաջարկներ կատարուեցան:*



բ) Վեհափառ Հայրապետին գահակալութեան 25-ամեակի հատորը: Անցնող երկու տարիներուն համաշխարհային եւ լիբանանեան ծանր պայմանները արգելք հանդիսացան նշելու Վեհափառ Հայրապետին զահակալութեան 25-ամեակը: Սակայն, պայմաններուն նպաստաւոր եղանակը առիթ ընծայեց լոյս բերելու Նորին Սրբութեան արծաթեայ յոբելինականին նըւիրուած աշխատասիրութիւնը, որ կը ներկայացնէ անոր 25 տարուան հովուակապետական ծառայութեան զանազան երեսներն ու հանգրուանները: Հատորը կը բովանդակէ 52 գրիչներու՝ եկեղեցականներու, միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական մարզի մէջ պատասխանատուներու, ակադեմիկոսներու, պետական եւ ազգային երեսփոխաններու, գիտական եւ գրական տարբեր ամպիոններու պատասխանատուներու, համալսարանի դասախօսներու, հայկական գաղութներու մէջ գործունեայ դէմքերու, հասարակական գործիչներու, եւ ուրիշներու յօդուածները:

Հատորը ներկայացուց Ազգակ օրաթերթի խմբագրապետ՝ Շահան Գանտասարեան: Անդրադառնալով գործին կարեւորութեան մասին, ան յայտնեց, թէ «Ո՛չ միայն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմաճիւղ գործունէութեամբ կը սահմանափակուի հատորին բովանդակութիւնը, այլ կը տարածուի համասփիւռքեան հարթութեան վրայ: Այս դիտանկիւնէն ընթերցում կատարողը պիտի նկատէ անպայման, որ լայն գործադաշտի մը կը վերաբերի այս ներկայացումը: Սփիւռքին առընթեր, հոն ներկայ են նաեւ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնները: Այս առումով, հատորի բովանդակութեան ծանօթացողը շատ արագ կը համոզուի, որ գործը ունի կարեւորագոյն ժամանակահատուածի մը մեր համազգային խնդիրներու վերաբերող մտածումներ ու քայլեր»:

գ) **Տէր Զօր պատմական այցելութիւն:** Վեհափառ Հայրապետին Տէր Զօր այցելութիւնը չի՛ նմանիր այլ հովուապետական այցելութիւններու: Անիկա բնականոն պայմաններու մէջ տեղի չունեցաւ՝ փաստօրէն արկածախնդրութիւն մըն էր, նկատի ունենալով Սուրիոյ մէջ տիրող ապահովական պայմանները: Նորին Սրբութեան Տէր Զօր այցելութիւնը մանրամասն ներկայացուց Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բազրատունի եւ փոխանցեց իր տպաւորութիւնները՝ ականատեսի վկայութեամբ: Ան գլխաւոր կէտերու մէջ ներկայացուց նախ Սուրիոյ նախագահ Պաշչար Ալ-Ասատին հետ Հայրապետին եւ ընկերակցող պատուիրակութեան հանդիպումը, որուն ընթացքին նախագահը ընդգծած է Սուրիոյ զարգացման ու ծաղկման մէջ տեղւոյն հայ համայնքին կարեւոր ներդրումը եւ շեշտած, թէ Սուրիահայութիւնը, որ երկրին կարեւոր մէկ մասնիկը կը նկատուի, պէտք է կառչած մնայ Սուրիոյ:

Ապա, Բազրատունի յուզումով շեշտեց, որ հակառակ ապահովական անորոշ պայմաններուն, Նորին Սրբութիւնը հաւատքի քաջութիւնը ունեցած է այցելելու փաստօրէն ամբողջութեամբ քանդուած Տէր Զօր քաղաքը եւ յատկապէս՝ Նահատակաց եկեղեցին ու համալիրը: Յ. Բազրատունի յայտնեց, թէ ամբողջ յուշահամալիրը քանդուած է՝ ենթարկուած ըլլալով մասնագիտական ականակոծումի: Իր խօսքը աւարտելով, ան ընդգծեց, որ Սուրիոյ սահմանէն սկսեալ մինչեւ Դամասկոս, Տէր Զօր ու վերադարձ, Նորին Սրբութիւնը արժանացաւ բարձր պատիւի, որ ընդհանրապէս կը կատարուի նախագահի մը այցելութեան:

Իր եզրափակիչ խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը յայտնեց, թէ Տէր Զօրի յուշահամալիրը պիտի վերաշինուի համազգային մաշտապով եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ:



Հ Ա Յ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԸ ՏՈՒՄ 2022 ԹՈՒՎԱԿԱՆԻ ԻՐ ՀՈՒՆՁՔԸ

Հինգշաբթի, 9 Յունիսի առաւօտուն, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանին մէջ տեղի ունեցաւ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնի վկայականաց բաշխումը:

Նորին Սրբութիւնը գնահատելով եռամեայ հայագիտական ծրագիրը աւարտած չորս շրջանաւարտները՝ Արաքսի Խրիմեան Աջապահեան, Աւետիս Ասայեան, Նուէր Էլիսայաթ Աջապահեան եւ Վերժին Սաաթճեան, ինչպէս նաեւ Կեդրոնի տնօրէն Ահարոն Շիրարմեանն ու ուսուցչական կազմը,



ընդգծեց հայագիտական ամպլիոններուն, ի մասնաւորի Արեւմտահայերէնի կարեւորութիւնը, թէ՛ ինքնութեան պահպանման ու գոյատեւման եւ թէ՛ զարգացման առումով: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ հետզհետէ նա-

հանջող հայ լեզուն հայագիտական ձեռնարկներով շնորհիվ պիտի պահպանուի ու փոխանցուի սերունդէ սերունդ: Ան վստահեցուց, որ յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ Հայագիտական Կեդրոնը առաւել կազմակերպ կերպով ու ամբողջական դասանիւթերով պիտի շարունակէ իր գործունէութիւնը:

Կեդրոնի տնօրէն Ահարոն Շիրտըմեան, խօսք առնելով, յայտնեց, որ Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ ու հովանաւորութեամբ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնը բոլորեց կրթական բարեյաջող տարեշրջան մը: Ան ընդգծեց, որ Հայագիտական Կեդրոնի յաջողութեան գաղտնիքը կը կայանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան հաւատացող Վեհափառ Հայրապետին, ինչպէս նաեւ անոր օրհնութեան ներքոյ եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ համախմբուած մտաւորականներու՝ հոգեւորական թէ՛ աշխարհական, ժրջան աշխատանքին: Շիրտըմեան նշեց, որ Կեդրոնը սովորական ուսումնարան մը չէ, այլ հայագիտական բարձրորակ կեդրոն մը ըլլալու բոլոր կարելիութիւնները ունի: Իրողութիւն մը, որ պէտք է նախանձախնդրութեամբ ու իմաստութեամբ արժեւորել: Եզրափակելով իր խօսքը, ան շնորհաւորեց վկայեալները եւ շնորհակալութիւն յայտնեց Հայրապետին, Հայագիտական Կեդրոնի յանձնախումբին, ուսուցչակազմին, Կաթողիկոսարանի դիւանապետին եւ բաժանմունքի քարտուղարութեան:

Շրջանաւարտներուն անունով ուղերձ ընթերցեց Վերժին Սաաթճեան ու երախտագիտութիւն յայտնեց Նորին Ս. Օծութեան, տնօրէնութեան եւ դասախօսներուն: Ան ըսաւ, որ եռամեայ այս կրթօճախը յաճախելով, լսեցինք մեր սիրելի դասախօսներուն կողմէ ներկայացուած այլազան նիւթերը ու դաստիարակիչ խօսքերը, որոնք իրենց դիմաց բացին նոր հորիզոններ: Իր խօսքի աւարտին, ան Հայրապետին մաղթեց քաջառողջութիւն, որպէսզի անսասան մնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր համազգային առաքելութեամբ:



Հ. Ե. Հ. Ո. Մ.

Հ. Ե. Հ. Ո. Մ.-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԻ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 8 Յունիսի երեկոյեան, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) նորընտիր վարչութեան, առաջնորդութեամբ Միութեան հոգեւոր խորհրդատու՝ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Հայր Սուրբը Վեհափառ Հայրապետին ներկայացուց վարչութեան անդամներն ու յառաջիկայ աշխատանքային ծրագիրը: Ան յայտնեց, որ վերջին քանի մը տարիներուն, համաճարակին եւ Լիբանանէն ներս ստեղծուած տնտեսական տագնապին հետեւանքով, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի աշխատանքները որոշ դանդաղացում ունեցած էին, սակայն շուտով, վերանորոգ թափով ու նոր ծրագիրներու նախաձեռնութեամբ աշխատանքները պիտի շարունակուին:

Նորին Ս. Օծութիւնը ողջունելով Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի նորընտիր վարչութիւնը եւ ընդհանրապէս Միութեան գործունէութիւնը, յայտնեց, որ երիտասարդութիւնը ընդհանրապէս եւ համալսարանական ուսանողները յատկապէս, միշտ կը մնան իր սրտին մօտ եւ կը կազմեն իր հովուապետական առաքելութեան կարելոր մարզերէն մէկը: Ան նաեւ ողջունեց յառաջիկայ ամիս, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի նախաձեռնութեամբ կայանալիք միօրեայ երիտասարդական համագումարը՝ «Մփիւռքի Տարի»ի նախաձեռնութիւններու ծիրէն ներս: Վեհափառ Հայրապետը միաժամանակ վստահեցուց, որ պիտի շարունակէ օգտակար հանդիսանալ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի կազմակերպած կարիքաւոր ընտանիքներու օժանդակութեան ծրագիրներուն ու աշխատանքներուն:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ

**«ԱԼԵՔՔՕ ԵՒ ԱՆԻ ՊԵՉԻՔԵԱՆ ՖՈՆՏ»Ի
ՅԱՆՁՆԱԿՈՒՄՔԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

Անցնող վեց ամիսներու ընթացքին, Կաթողիկոսարանի հովանաւորութեամբ ստեղծուած Ալեքքօ եւ Անի Պեզիքեաններու առողջապահական ծառայութիւններու ֆոնտը աշխատեցաւ երկու հանգրուաններով՝ երեք ամսուան տեւողութեամբ, շաբաթական երեք օրեր, առաւօտեան ժամը 09:00-էն 01:00: Շաբաթական դրութեամբ նաեւ տեր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեզիքեաններու հետ հանդիպումներով որոշուեցաւ նպաստներու գումարը:

Առաջին երեք ամիսներուն օգտակար եղան ախտաճանաչման քննութիւններու եւ հիւանդանոցային ծանր պարագաներու:

«Գարակեօզեան» եւ «Սեն-Մարք» (St. Marc) հաստատութիւններուն կողմէ կատարուած սպասարկութիւններուն ալ բերինք մեր նպաստը:

Առաջին երեք ամիսներուն մեզի դիմեցին 1360 պարագաներ, որոնցմէ օգտակար եղանք 1123-ին: Իսկ երկրորդ երեք ամիսներուն կեդրոնացանք միայն հիւանդանոցային ծանր պարագաներու վրայ՝ քաղցկեղի եւ երիկամի բարդ գործողութեան ծախսերուն:

Երկրորդ եռամիսը մեզի դիմեցին 640 պարագաներ, որոնցմէ 382-ին ընդառաջեցինք:

Պետք է յիշել, որ սկզբունքային որոշում առած էինք, որ ցարդ կատարուած ծախսերուն չմասնակցինք: Օգտակար ըլլանք միայն բուժուելու եւ կանխատեսուած գործողութիւններու

ծախսերուն:

Տնտեսական եւ երկրի այս ճգնաժամին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ եւ տեր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեզիքեաններու նուիրատուութեամբ կատարուած յիշեալ նպաստները մեծապէս թեթեւցուցին ժողովուրդին հոգեկան, բարոյական եւ մասնաւորաբար նիւթական բեռը:

Վարձքը կատար բոլորին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒԼԵՅ
Ռ.Ա.Կ.-Ի ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԱՏԵՆԱՊԵՏՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐՄԻՆԸ**

Երեքշաբթի, 3 Մայիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) Գերագոյն Խորհուրդի ատենապետ՝ դոկտ. Յրաչ Գույումճեանը:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր ակնարկ մը նետելու Հայաստանը դիմագրաւող ներկայ տագնապին, ինչպէս նաեւ Սփիւռքի առընչուած շարք մը հիմնահարցերու վրայ:

Դոկտ. Յրաչ Գույումճեան Վեհափառ Հայրապետին պարզեց վերջերս Գերագոյն Խորհուրդին կատարած կոչին յատկանշական երեսները ու մանաւանդ Ռ.Ա.Կ.-ի ներքին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը եւ յիշեց, որ այս ուղղութեամբ աշխատանքները կը շարունակուին: Նորին Ս. Օծութիւնը ողջունելով Ռ.Ա.Կ.-ի ներքին միասնականութեան ամրացման ճիգերը՝ կարեւորութեամբ ընդ-

գծեց, որ որեւէ ժամանակէ աւելի էական է մեր ժողովուրդի ոյժերը համախմբել՝ մեր ազգն ու հայրենիքը տազնապեցնող խնդիրներու եւ մեր գերագոյն իտեալներու շուրջ: Վեհափառ Հայրապետը նաեւ ընդգծեց, որ Ռ.Ա.Կ.-ին հետ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարաբերութիւնը նոյն շեշտաւորումով պիտի շարունակուի, ի խնդիր մեր ազգին պահանջատիրութեան եւ ընդհանրական ծրագրումներուն:

Իսկ Հինգշաբթի, 5 Մայիսին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը (Ռ.Ա.Կ.) ներկայացնող պատուիրակութիւն մը, առաջնորդութեամբ Լիբանանի շրջանային վարչութեան ատենապետ՝ տորթ. Աւետիս Տաբետեանի:

Պատուիրակութիւնը իր ուրախութիւնը յայտնեց Նորին Ս. Օծութեան Ապրիլ 24-ի առիթով արտասանած պատգամին համար, ուր յստակօրէն ու ամբողջական կերպով կը պարզէր հայութիւնն ու Հայաստանը դիմագրաւող տազնապները եւ զանոնք միասնաբար յաղթահարելու միջոցները: Վեհափառ Հայրապետը յիշեցուց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մօտեցումը միշտ եղած է համահայկական, հեռու ամէն տեսակ միակողմանի ու ժամանակաւոր դիրքորոշումներէ: Այս առիթով, Նորին Սըրբութիւնը դարձեալ շեշտեց մեր ժողովուրդին ներուժը համախմբելու կենսական անհրաժեշտութիւնը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԸ
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Չորեքշաբթի, 4 Մայիսին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի Ազատական կու-

սակցութենէն պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Լիբանանի Նախկին Նախագահ Քամիլ Շամունի թոռնիկին՝ Քամիլ Տօրի Շամունին:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Լիբանանի ներքին քաղաքական, ընկերա-տնտեսական եւ ընտրական մարզերուն ու աշխատանքներուն հետ աղերս ունեցող հարցեր: Վեհափառ Հայրապետը ողջունելով պատուիրակութեան այցելութիւնը՝ յիշեց, որ Կաթողիկոսարանի եւ Նախագահ Քամիլ Շամունի միջեւ բարեկամական կապեր եղած են անցեալին, միաժամանակ ան յոյս յայտնեց, որ երեսփոխանական ընտրութեամբ Լիբանանի կեանքին մէջ նոր էջ մը կը բացուի:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՓԻՒՌԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ԳԼԽԱՌՈՐ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ՉԱՐԵՅ ՍԻՆԱՆԵԱՆԸ**

Երկուշաբթի, 9 Մայիսին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար՝ Չարեհ Սինանեան, ընկերակցութեամբ իր օգնականներուն: Հանդիպման ներկայ էր նաեւ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան՝ Վահագն Աթաբէկեան:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստան-Սփիւռք գործակցութեան առնչուած հարցեր ու ծրագիրներ:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՈՅ ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆՆԵՐԸ**

Ուրբաթ, 13 Մայիսին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Ռուսիոյ դես-

պան՝ Ալեքսանտր Ռուտաքովը:

Ալեյի քան ժամ մը տուած հանդիպման ընթացքին տեղի ունեցած քննարկումներուն առանցքը բնականաբար դարձան Ուքրանիոյ պատերազմը եւ Հայաստանը: Յիշեալ հարցերուն գծով Նորին Ս. Օծուծինը ներկայացուց իր պատկերացումները ու մտահոգութիւնները:

Իր կարգին, Դեսպան Ռուտաքով պարզեց Ուքրանիոյ հարցին գծով Ռուսիոյ կեցուածքը եւ Հայաստանի ու Ազրայէճանի միջեւ փոխադարձ հասկացողութեամբ լուծումներ որոնելու Ռուսիոյ ճիգը:

Հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետին ներկայութեան, կարճ հանդիպում մը տեղի ունեցաւ դեսպանին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ու հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունիի միջեւ: Անոնք արծարծեցին յատկապէս Լիբանանի այժմու կացութեան եւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն առնչուած հարցեր:

Յայտնենք, որ յետ միջօրէին, Նորին Սրբութեան այցելեց նաեւ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեան: Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր անդրադարձ կատարելու Հայաստանը յուզող հիմնահարցերուն:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 26 Մայիսին, Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ՝ Արթիւր Թովմասեանն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը: Վեհափառ Հայրապետին կողքին հանդիպ-

ման ներկայ էր Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան:

Հանդիպման ընթացքին Ազգ. Ժողովի նախագահն ու պատուիրակութիւնը Նորին Ս. Օծութեան ներկայացուցին Արցախի պարզած ներկայ կացութիւնը, ինչպէս նաեւ՝ իրենց պահանջները:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով ներկաները, յիշեցուց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ եղած է Արցախի ժողովուրդի կողքին եւ զօրակից անոր կամքը արտայայտող ինքնիշխանութեան՝ զայն նկատելով ժողովուրդի իրաւունքը, թէ՛ պատմական եւ թէ՛ իրաւական առումով: Այս առիթով, Նորին Սրբութիւնը վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն եւ ժողովուրդին ամբողջական զօրակցութիւնը Արցախի ժողովուրդին:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ Մ.Ա.Կ.-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Հինգշաբթի, 2 Յունիսին երկար հանդիպում մը տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) ներկայացուցիչ՝ դոկտ. Եռաննա Վրոնեցքայի միջեւ:

Հանդիպման առանցքը դարձաւ Լիբանանի ներկայ կացութիւնը, յատկապէս երեսփոխանական ընտրութիւններէն ետք: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ յառաջիկայ քաղաքական քայլերուն, միջ-համայնքային գործակցութեան ու ընկերատնտեսական տազնապը կարելի փութով մեղմացընելու կարելիութիւններուն շուրջ: Նորին Ս. Օծութիւնը շեշտեց ընկերատնտեսական տազնապին լուծման առաջնահերթութիւն տալու հրամայականը եւ այս գծով Մ.Ա.Կ.-ին ու բարե-

կամ երկիրներուն կարելոր դերակատարութիւնը:

**ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԴԵՍՊՊԱՆԸ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Հինգշաբթի, 9 Յունիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի մօտ Հունգարիոյ նորանշանակ դեսպան՝ Ֆերնզ Չիլադի այցելութիւնը:

Ողջունելով դեսպանին անդրանիկ այցելութիւնը, Վեհափառ Հայրապետը պարզեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անաքելութիւնը՝ գլխաւոր երեսներով: Ապա, ան անդրադարձաւ Լիբանանի ներկայ ընկերատնտեսական կացութեան եւ հայ համայնքին որդեգրած դրական ու հաւասարակշռուած դերակատարութեան, իբրեւ Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկը: Հայրապետը շեշտեց Լիբանանը դիմագրաւող տագնապներուն անմիջական լուծում տալու հրամայականը, որ կարելի է նոր կառավարութեան կազմութեամբ եւ բարեկարգական միջոցներու որդեգրումով: Աւարտին, ան իր գնահատանքը յայտնեց Միջին Արեւելքէն ներս քրիստոնեայ համայնքներու պահպանման գծով Հունգարիոյ պետութեան ցուցաբերած զօրակցութեան: Այս ուղղութեամբ դեսպանը անհրաժեշտ բացատրութիւններ փոխանցեց Նորին Ս. Օծութեան եւ խոստացաւ մօտ ապագային դարձեալ հանդիպիլ նոյն հարցին շուրջ իր խորհրդակցութիւնը շարունակելու համար:

**ՎԱՏԻՎԱՆԻ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ
ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊՊԱՆՆԵՐԸ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Ուրբաթ, 10 Յունիսի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայ-

րապետին այցելեց Վատիկանի մօտ Լիբանանի դեսպան՝ դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէն: Նորին Ս. Օծութեան հետ մնայուն յարաբերութեան մէջ գտնուող դեսպանը նախ յայտնեց Վատիկանի ունեցած բարձր յարգանքը Վեհափառ Հայրապետին նկատմամբ եւ փոխանցեց Վատիկանի կարելոր բաժանմունքներու բարձրաստիճան պատասխանատուներուն ողջոյնները: Ան ընդհանուր գիծերով ներկայացուց շուրջ տարի մը առաջ Վատիկանի մէջ տեղի ունեցած Լիբանանի քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպումէն ետք Վատիկանի կատարած աշխատանքները միջազգային համայնքէն ներս՝ Լիբանանը դիմագրաւող մարտահրաւերներուն լուծում տալու ճիգերու գծով:

Իր կարգին, Վեհափառ Հայրապետը իր արժեւորումը ներկայացուց Լիբանանի ներկայ ներքին կացութեան, յատկապէս երեսփոխանական վերջին ընտրութենէն ետք: Միաժամանակ, ան ընդհանուր գիծերով պարզեց իրեն այցելող օտար դեսպաններու տեսակետները, Լիբանանը ներկայ տագնապէն դուրս բերելու աշխատանքներու ուղղութեամբ:

Յաջորդիւ, Նորին Սրբութիւնը ընդունեց Լիբանանի մօտ Սուրիոյ դեսպան՝ Ալի Ապտ Ալ-Քարիմ Ալի: Հանդիպումին ներկայ էր նաեւ Լիբանանի հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր արժեւորում կատարելու շաբաթ մը առաջ Նորին Ս. Օծութեան Սուրիա կատարած այցելութեան, նախագահ Պաշշար Ալ Ասատին հետ ունեցած իր հանդիպումին եւ ապա՝ Տեր Զօր այցելութեան:

Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց դեսպանին՝ իր այցելութեան գծով Սուրիոյ նախագա-

հին ու պետական պատասխանատուներուն ցուցաբերած խոր յարգանքին եւ ջերմ հիւրասիրութեան համար, սուրիական սահմանէն սկսեալ մինչեւ Դամասկոս ու ապա՝ Տեր Չօր: Ան նաեւ իր շնորհակալութիւնը յայտնեց դեսպանին՝ Սուրիոյ հայութեան նըկատմամբ նախագահ Ասատին ու պետութեան ցուցաբերած վստահութեան ու աջակցութեան համար:

Իր կարգին, Սուրիոյ դեսպանը իր ուրախութիւնը յայտնեց, որ դարձեալ կը գտնուի Անթիլիասի Մայրավանքէն ներս, Վեհափառ Հայրապետին մօտ: Ան անգամ մը եւս վստահեցուց, թէ Սուրիոյ հայութիւնը, իբրեւ անբաժան մասը սուրիական հայրենիքին, կարելոր դեր ունեցած է եւ պետք է շարունակէ ունենալ Սուրիոյ վերածաղկումի աշխատանքներէն ներս՝ յատկապէս տնտեսական ու ճարտարարուեստական մարզերուն մէջ:

Ապա, դեսպանն ու երեսփոխան Բագրատունին ճաշի հիւրը եղան Նորին Ս. Օծութեան:

Յայտնենք, որ շարք մը նկատումներէ ու իրողութիւններէ մեկնած, Վեհափառ Հայրապետին Տեր Չօր կատարած այցելութիւնը պետական թէ հայ պատասխանատուներուն կողմէ նկատուած էր իբրեւ պատմական այցելութիւն:

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐՕՆՆԵՐՈՒ ՌԻ
ՄԵԱԿՈՅՐՆԵՐՈՒ ԵՐԿԵՍՈՒԹԵԱՆ
ԿԵՂՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ**

Ուրբաթ, 17 Յունիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Իրանի Կրօններու ու Մշակոյթներու Երկխօսութեան Կեդրոնի ներկայացուցիչ՝ Ալ-Սայրըտ Մուհամմետ Ռիտա Մուրթատաուլիի:

Ներկայացուցիչը Նորին Սրբութեան յանձնեց յիշեալ կեդրոնի նորա-

նշանակ ընդհանուր տնօրէնին՝ Մուհամմետ Մեհտի Իմնիբուրի նամակը: Նամակին մէջ տնօրէնը կը շեշտէր ահաւոր տագնապներ դիմագրաւող ներկայ աշխարհին մէջ կրօններու միջեւ երկխօսութեան, ինչպէս նաեւ արեւմտեան ընկերութեան մէջ հակախաւանական շարժումները կատարելու հրամայականը:

Իր կարգին, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ ընդհանրապէս միջկրօնական ու յատկապէս քրիստոնեայ-իսլամ երկխօսութիւնը անհրաժեշտ է անելի քան երբեք եւ այս ուղղութեամբ ինք ոչ միայն հրատարակութիւններ կատարած ու դասախօսութիւններ տուած է, այլ՝ գործնական քայլերու դիմած: Ան նաեւ ընդգծեց երկխօսութենէ անդին, աշխարհը յուզող մտահոգութիւններու ու խնդիրներու գծով միացեալ կեցուածք ճշդելու կարելիութիւնը:

Յայտնենք, որ Իրանի Իսլամական Հանրապետութեան վերոյիշեալ կեդրոնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ շուրջ 25 տարիներէ ի վեր երկխօսութիւն գոյութիւն ունի՝ ժամանակակից հարցերու քննարկման առնչուած:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆԸ**

Շաբաթ, 18 Յունիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետին այցելեց Հայկազեան Համալսարանի նախագահ՝ Վերապատուելի Փօլ Հայտոսթեան:

Վեր. Հայտոսթեան Նորին Ս. Օծութեան յայտնեց, որ Միջին Արեւելքի Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանի հանգստեան կոչուելէն ետք, ինք ստանձնած է յիշեալ պատասխանատուութիւնը մինչեւ նոր նա-

խագահի մը ընտրութիւնը, միաժամանակ շարունակելով Միութեան Կեդրոնական Խորհուրդի ատենապետի իր պաշտօնը: Վեհափառ Հայրապետը իր ջերմ գնահատանքը յայտնեց Վեր. Գարակեօզեանի նուիրեալ ծառայութեան եւ մեր եկեղեցւոյ հետ իր ունեցած սերտ գործակցութեան համար. ան նաեւ յոյս յայտնեց, որ նոյն գործակցութիւնը պիտի շարունակուի Աւետարանական եկեղեցւոյ ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ:

Ապա, Վերապատուելին, իբրեւ նախագահ Հայկազեան Համալսարանի, Հայրապետին զեկուցեց անցնող տարեշրջանի համալսարանին կեանքին, իրագործումներուն, դիմագրաւած դժուարութիւններուն եւ հունձքին մասին, ինչպէս նաեւ պարզեց յառաջիկայ տարուան ծրագիրները: Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց Հայկազեան Համալսարանի կատարած կրթական դերակատարութեան, մասնաւորաբար հայ աշակերտներուն նկատմամբ ցուցաբերուած կրթաթոշակի օժանդակութեան գծով: Ան յիշեցուց, որ ազգայնկրթական հաստատութիւն ըլլալով անհրաժեշտ է որ համալսարանը մնայ Լիբանանի պատկերը արտայայտող միջ-համայնքային գործակցութեան պերճախօս արտայայտութիւնը՝ կըրթական մարզէն ներս:

Այս առիթով, Վեր. Հայտնութեան հրաւեր նամակ մը յանձնեց Վեհափառ Հայրապետին՝ զինք հրաւիրելով Հայ Աւետարանական եկեղեցւոյ հիմնադրութեան 175-ամեակի հանդիսութեան, Յուլիս 1-ին, Երեւանի մէջ:

**ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՅՅԵԼԵՅ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 18 Յունիսի առաւօտուն, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.

Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Համազգայնի նորընտիր վարչութենէն պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Չաքար Քէշիշեանի:

Ողջունելով նոր կեդրոնական վարչութեան ընտրութիւնը, Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց Համազգայնի համահայկական դերակատարութեան, կրթական ու մշակութային մարզերէն ներս:

Նորընտիր վարչութիւնը հակիրճ զեկույց մը տուաւ Հայրապետին Համազգայնի յառաջիկայ ծրագիրներուն մասին: Իր կարգին, Նորին Սըրբութիւնը վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջական զօրակցութիւնը Համազգայնի աշխատանքներուն:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԸ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Ուրբաթ, 24 Յունիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Անթիլիասի Մայրավանքի գրասենեակին մէջ, ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան՝ Մուհամմատ Ճալալ Ֆիրուզնիային:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու Լիբանանի պարզած ընկերատնտեսական ու քաղաքական ներկայ կացութիւնը, յատկապէս խորհրդարանական ընտրութիւններէն ետք, ինչպէս նաեւ Իրանի հայութեան դերակատարութիւնը երկրի առաւել զարգացման ու յառաջդիմութեան աշխատանքներուն մէջ, Հայաստանի ու Ազրպէյճանի յարաբերութիւնը՝ մանաւանդ Արցախի պատերազմէն ետք եւ այս ծիրէն ներս Արցախի ինքնիշխան կարգավիճակի հարցը եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի հետ աղերս ունեցող խնդիրներ ու մտահոգութիւններ:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆԵՅ
ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐԸ**

Երկուշաբթի, 27 Յունիսին, Ս. Աստուածածին Վանքի Վեհարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր հայրական օրհնութիւնը տուաւ նորընծայ երեք միաբան հայրերուն:

Քառասուն օրեր առաջ, Դպրեվանքի աւարտական դասարանի երեք սարկաւազները Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ ձեռնադրուեցան ու օծուեցան կուսակրօն քահանայ՝ վերանուանուելով Հայր Արմէն, Հայր Առաքել եւ Հայր Ազատ:

Աւանդաբար, նորած եկեղեցականը քառասուն օրեր պահեցողութեամբ անցընելէ ետք, անդրանիկ Ս. եւ Անմահ Պատարագով կը նուիրուի ծառայական նոր կեանքի: Առ այդ, Վեհափառ Հայրապետին անմիջական հսկողութեան ներքեւ իրենց քառասունը լրացնելէ ետք, նորընծայ աբեղաները Լիբանանի Հայոց Թեմի եկեղեցիներուն մէջ իրենց անդրանիկ Ս. Պատարագը մատուցին: Արդարեւ, Հոգ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան պատարագեց ու քարոզեց Այնճարի Ս. Պողոս, Հոգ. Տ. Առաքել Աբղ. Գատեհճեան՝ Պուրճ Համուտի Սրբոց Վարդանանց եւ Հոգ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան՝ Պուրճ Համուտի Սրբոց Քառասնից մանկանց եկեղեցիներուն մէջ:

Ս. Աթոռոյս աւանդութեան հետեւելով, նորընծայ միաբան հայրերը իրենց անդրանիկ Ս. Պատարագէն ետք, առաջնորդութեամբ Դպրեվանքի տեսուչ Հոգ. Տ. Պարոյր Վրդ. Շերնեզեանի, բարձրացան Նորին Ս. Օծութեան մօտ եւ անոր ներկայացուցին իրենց անդրանիկ Ս. Պատարագի մասն ու նշխարը: Վեհափառ Հայրապետը իր հայրական օրհնութիւնը փոխանցելէ ետք, կարեւորութեամբ շեշտեց հաւատարիմ ու պարտաճանաչ հոգեւորական ըլլալու հրամայականը՝ յատկապէս թելադրելով, որ Դպրեվանքէն իրենց ստացած հոգեմտաւոր կազմաւորումը շարունակեն:

**Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Հինգշաբթի, 30 Յունիսին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը:

Շուրջ երկու ժամ տեղի ունեցած հանդիպման ընթացքին լայնօրէն քննարկուեցան Հայաստանի ներքին կացութեան, Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց եւ կարգ մը գաղութներու առնչուած հարցեր, ինչպէս նաեւ յառաջիկայ ամիսներուն իրագործուելիք շարք մը ծրագիրներ:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 1 ՄԱՅԻՍ 2022: ԺԵ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ
ԿԻՒՐԱԿԷ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:*

ԿԻՐԱԿԻ, 8 ՄԱՅԻՍ 2022: ԻԲ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: (ԿԱՐՄԻՐ ԿԻՒՐԱԿԷ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:*

ԿԻՐԱԿԻ, 15 ՄԱՅԻՍ 2022: ԻԹ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:*

ԿԻՐԱԿԻ, 22 ՄԱՅԻՍ 2022: ԼԶ. ՕՐ ՅԻՆԱՆՑ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան:*

ԿԻՐԱԿԻ, 29 ՄԱՅԻՍ 2022: ԽԳ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:*

ԿԻՐԱԿԻ, 5 ՅՈՒՆԻՍ 2022: Ծ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ
ՍՐԲՈՅ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-
րագեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Նարեկ Արք.
Ալեէմեզեան:*

ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒՆԻՍ 2022: Ը. ՕՐ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:

ԿԻՐԱԿԻ, 19 ՅՈՒՆԻՍ 2022: Բ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ: ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՍ 2022: Բ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտճեան:

